

Ի. ՊՈՊՈՎ

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐՔ

ՀՈԶ ԼՐԻՎ ՄԻԶՆԱԿԱՐԴ ՅԵՎ ՄԻԶՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑԻ
5-ՐԴ ՅԵՎ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

31 JAN 2018

Կ. ՊԱՊՈՎ

ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ.ՍԱ.ԳԻՐՔ

ՎՈԶ ԼԻՒՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
5-ՐԴ ՅԵՎ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2-րդ հասարակուրյուն
Բնագիրի չորրորդ հասարակուրյունից
բարգմ. ԱՐԾ. ՇՈՎԱՐՃՅԱՆ

Բնագիրը հասատել և ՈԽՖՍՀ-ի Լուսադիմարը

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

I. ԹՎԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

§ 1. Ներածություն

Թվաբանությունը թվերի, նրա հատկությունների և գործողությունների գիտությունն է:

Թվաբանությունը սկիզբ առավ այն ժամանակ, յերբ մարդիկ հաշվել սովորեցին, յերբ նրանք սկսեցին հասկանալ թե ինչ և միավորն իրեն հաշվի անջատ առարկա: Ուսումնասիրելով հնում ապրած մարդկանցից մնացած զանազան հուշարձանները և դրանց մակագրությունները, կարող ենք ստեղծ թե մարդիկ առաջներում ինչպես են հաշվել ստեղծ չենք կարող մատնանշել, թե մեզ հայտնի ժողովուրդներից վորն և թվաբանության սկիզբը դրել:

§ 2. Թվերի բնական շարեր

«Մեկ» կամ «միավոր» բառը գործածվում է մի վորեա առարկա նշելու համար: Եթե ուզում ենք առարկաների համախումբը թվով արտահայտել, ապա պետք

և այդ առարկաները համարել:

Առարկաները համարելու համար պետք է նախ մեկ առարկան վերցնել, հետո դրան միացնել ևս մեկը, այնուհետև դարձյալ մեկը և այսպես շարունակաբար: Հետզհետե կստացվեն 1) մեկ առարկա, 2) մեկ և մեկ առարկա, 3) մեկ, մեկ և մեկ առարկա և այլն Փոխանակ մեկ յեկ մեկ արտահայտության՝ գործածվում է յերկու բառը, փախանակ ասելու մեկ, մեկ և մեկ, գործածվում և յերեք բառը և այլն: Ստացվում է թվերի բնական շարքը՝ մեկ, յերկու, յերեք, չորս.... Այդ շարքում ամենափոքր թիվը միավորն է: Հարկ ինդած դեսկում այդ շարքը կարելի յեւ շարունակել վոր-



11-2864/94

քան կամենաք, դա չունի վերջ, չունի տմենամեծ թիվ, քանի վոր վերջին թիվը, ինչպիսին ել լինի, միշտ կարելի է մեծացնել մի միավոր ավելացնելով և նոր թիվ ստանաբ

Համբանքը մեղ պետք ե այն ժամանակ, յերբ կա տարեկանի համախռմբ, տարեկանի հավաք թիվը սուսացիում ե համբանքի հետեանքով: Այսողջ թիվը արտահայտում է մի քանի միավորների համախռմբ կամ մեկ միավոր:

Համբանքը մարդուն հնարավորութիւն տվից տարբերել հավատար, ափելի, պակաս հասկացողությունները և բերեց բիերի բնական շարժելու մտքին:

Թվերի բնական շարքը հետեալն ե՝

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12...

Առաջին տասը թվերն անվանել են՝ մեկ, յերկու, յերեք... տար: Այդ տասը և մի քանի ուրիշ անուններով կազմվում են բոլոր թվերի անունները:


Սկզբներում յուրաքանչյուր անջատ տարեկա արտահայտվում եր կետով կամ գծով: Սակայն այդ հարմար չեր այն գեղքերում, յերբ համբանքի յենթակա տարեկանի թիվը մեծ եր:

Մեծ թվերի համար հնարիած են հատուկ նշաններ: Ժամանակի ընթացքում թվանշանների ձևը մերժացնեց: Այն նշանները, վորոնք այժմ ուղարգութեան ենք մենք, կոչվում են արարական, քանի վոր յենթադրում են, վոր յելրոպացիք արարակերէց են փոխ առել այդ թվանշանները:

Հետպհետե մարդիկ սովորեցին մի քանի նշաններով գրել ըուլոր թվերը:

Համբէչի վրա գցենք բնական շարքի թվերը: Սկսենք այն լարից, վորը 1-ին նկարում նշանած ե իրրե առաջինը (1):

Այդ լարի հատերը համարելով, մեկ-մեկ տանենք գեպի ձախ—մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինն, տասը



30

Ակ.

§ 3. Բանագոր հաս-
չիվ լին հաօդի
տասնորդական
սիստեմ

Համբէչի վրա գցենք բնական շարքի թվերը: Սկսենք այն լարից, վորը 1-ին նկարում նշանած ե իրրե առաջինը (1): Այդ լարի հատերը համարելով, մեկ-մեկ

տանենք գեպի ձախ—մեկ, յերկու, յերեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինն, տասը

Ստացանք առաջին կարգի տասը միավոր՝ կամ ինչպես նաև անվանում են, տասը հասարակ միավորայերը, վորոնք կազմում են մեկ տասնիակ կամ յերկրորդ կարգի մեկ միավոր: Համբէչի առաջին լարի տաս հատերը լիով տանելով գեպի աջ, փոխարինում ենք յերկրորդ լարի մեկ հատով, վորը հանդիսանում է յերկրորդ կարգի միավոր: Ապա առաջին լարի հատերը նորից մեկ-մեկ տանելով գեպի ձախ, ստանում ենք տասնմեկ, տասնյերկու, տասնյերեք... մինչեւ քսան: Տասնավորը փոխարինելով յերկրորդ լարի մեկ հատով ես, կստանանք յերկրորդ կարգի յերկու միավոր:

Այսպիս շարունակելով համբանքը, կստանանք հարյուր, վորը համապատասխանում է յերկրորդ լարի տասը հատերին: Մենք ստացանք մեկ հարյուրավագար—յերրագդ կարգի մեկ միավոր, Յերկրորդ լարի տասը հատերը համբէչի վրա կը փոխարինելու յերրորդ լարի մեկ հատով: Այսպիս շարունակելով համբանքը՝ կստանանք տասը հարյուրավոր կամ հազարավոր:

Մենք հաշվեցինք այսպիս կոչվող առաջին դասի բոլոր միավորները:

Տեսնում ենք, վոր առաջին կարգի տասը միավորները կազմում են յերկրորդ կարգի մեկ միավոր, յերկրորդ կարգի տասը միավորները՝ յերրորդ կարգի մեկ միավոր, յերրորդ կարգի մեկ միավոր: Ուրեմն, հաջորդող կարգի յուրաքանչյուր միավոր պարունակում է նաև սորդող ստորին կարգի տաս միավորներ: Ուստի և մեր հաւային սիստեմը կոչվում է տասնական սիստեմ:

Առաջին յերեք կարգերը կազմում են առաջին դասը—միավորների դասը: Այդ կարգերն են՝ միավորները, տասնավորները և հարյուրավորները: Յերկրորդ դասը—հազարավորների դասն ե, վորի կարգերն են՝ հազարավորները, տասնազարավորները և հարյուրնազարավորները: Յերրագդ դասը—միլիոնայինների դասն ե, վորը նույնական յերեք կարգ ունի, վորոնք են՝ միլիոնավորները, առայսում միլիոնավորները և հարյուրմիլիոնավորները: Միլիոնավորներին հաջորդում է չորրորդ—միլիոնավորների (կամ բիլիոնների) դասը, իսկ վերջինիս՝ եթենքերորդ-սրբիլիոնավորների դասը:

Այսպիսով, հաշվի տասնորդավան սիստեմում:

1) Յուրաքանչյուր կարգի տար սխալոր կազմում և հաջորդ բարեր կարգի մեկ միավոր:

2) Կարգերը միանալով կազմում են դասեր. յուրաքանչյուր դաս կազմված և յերեխան կարգից:

Թվերի համբանէի կարգը համապատասխանում և հետեւալ աղյուսակին:

5-րդ դաս	4-րդ դաս	3-րդ դաս միլիոնավորներ	2-րդ դաս հազարավորներ	1-ին դաս միավորներ
Տրիլիոնավորներ				
Միլիարդավորներ (Բիլիոններ)	9-րդ կարգ հարյուրմիլիոնավորներ	8-րդ կարգ առասիլիոննավորներ	7-րդ կարգ միլիոնմիլիոնավորներ	6-րդ կարգ հարյուրազարդավորներ
				5-րդ կարգ առասիլիոնմիլիոններ
				4-րդ կարգ հարյուրազարդավորներ
				3-րդ կարգ հարյուրազարդավորներ
				2-րդ կարգ առասիլիոնմիլիոններ
				1-ին կարգ միավորներ

§ 2. Թվարկություն

Բոլոր թվերը զրկում են մի քանի նշաններով միայն. դրանք կոչվում են թվանը. Գոյություն ունեն տաս թվանշաններ. սրանցից 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 կոչվում են իմաստավոր նշաններ, իսկ տասերորդը՝ 0—զերո:

Թիվը թվանշենով արտահայտելու համար յուրաքանչյուր կարգի թիվ գրվում և մեկը մյուսից հետո, ուկայով ամենաբարձր կարգից, այնպես, որ բարձր կարգի միավորները ստորին կարգի միավորներից դեպի ձախ գրվեն: Ենքն փոյեկի կարգում կամ դառնամ միավորներ չկան, այդ կարգի տեղը գրվում է զերո, իսկ դասի տեղը՝ յերեք զերո:

1. Գրված ե 3085: Այդ թիվը կազմված է միավորներից (5), տասնավորներից (8) և հազարավորներից (3): Հարյուրավոր չկա այդ թվում, առոտք հարյուրավորների կարգում գրված ե զերո: Յեթե զերոն չգրվեր, կստացվիր 385, այսինքն յերեխարյուր ուրսուն նինդ:

2. Գրված ե 4 000 236. այս թվում հազարավորների դասի յերեք կարգերն ել չկան, ուրիշ խոսքով հազարավորների դաս չկատ:

Մեծ թվերի լնթերցումը հեշտացնելու համար զրելիս դասերի միջև մի փոքր տարածություն և թողնվում:

15 900 կմ թվում հազարավորների դասն անջատված ե միավորների դասից:

3. Վերևի թվում թվանշանների տեղափոխումից փոխվում ե թվի մեծությունը. որինակ, 15 900, 15 090, 19 500, 51 009—սրանը տարբեր թվեր են: Առաջինում 9-ը նշանակում է 9 հարյուրավորը, յ՛րկրորդում՝ 9 տասնավորը, յերրորդում՝ 9 հազարավորը, իսկ չորրորդում՝ 9 միավորը:

Թվերի գրությունը հիմնված է յերկու կանոնի վրա:

1. Վորյեկի թվանշենով արտահայտված միավորների համակարյունը կախված է այն հանգամանքից, թե այդ թվանը առնենք գոր կարգում ե գենակում:

Այն թվանշանը, վոր աջից գեղի ձախ հաշված առաջին տեղումն է, արտահայտում է առաջին դասի միավորները, աջից յերկրորդ տեղում՝ առաջին դասի տասնավորները, յերրորդ տեղում՝ առաջին դասի հարյուրավորները: Այնուհետև աջից գեղի ձախ տեղ էն բոնում յերկրորդ դասի միավորները, տասնավորները և հարյուրավորները: Նույնը. պետք ե ասել նաև յերրորդ, չորրորդ և հինգերորդ դասերի նկատմամբ:

2. Ենքն դասի մեջ փոյեկի կարգի միավորները չկան, ապա այդ կարգի տեղը զերո յեն գենակում ¹⁾:

Այն թիվը, վոր գրվում է մեկ թվանշանով, կոչվում է միանիթ: Այն թիվը, վոր գրվում է յերկու թվանշանով՝ կոչվում է յերկանիթ և այլն. Յերկանիթ, յեռանիթ, քառանիթ թվերը և այլն՝ կոչվում են բազմանիթ:

Որինակ, 9-ը ամենամեծ միանիթ թիվն է:

302-ը՝ յեռանիթ թիվ ե:

5400-ը՝ քառանիթ թիվ ե:

100-ը՝ ամենամեծ յեռանիթ թիվն է:

999-ը՝ ամենամեծ յեռանիթ թիվն է:

Դրված թվերը կարգալու համար վարդում են այսպես՝ կարդում են ամեն մի դասի յերեք կարգի միավորներն առանձին-առանձին, վերջում հիշելով այդ դասի անունը, որինակ, 917 հազար, 459 միլիոն:

1) Զերոն-աբաբական թիվ ե:

Առաջին դասի բոլոր յերեք կարդերի միավորները կարգաւիս, վերջում չի հիշվում այդ դասի անունը, այլ միայն հասկացվում է. Նրա փոխարեն դուռմ են համբանքի յենթակա տուարկաների անունը: Որինակ, կարդում են 345 տողեկառ, բայց վոչ թե 345 միավոր սոգեկառ: 40 239 մ-ը կարդում են այսպես՝ բառառն հազար յերկունարյուր յերեսուն ինը մետք:

§ 5. Հռոմեական
բանական

Մինչև հաղար գրելու համար հոսոմեացիք
գործ եյին ածում հետեյալ հիմնական
թվանշանները.

I-1, X-10, C-100, M-1000

Բայց դրանցից կային նաև հետեյալ միջանկյալ թվանշանները,

V-5, L-50, D-500

Յեթե մի հիմնական թվանշան յերկու կամ յերեք անգամ դրվում եր կողք-կողքի, այդ նշանակում եր, վոր թիվը հավասար և այդ միավորների գումարին, որինակ.

II-2, XXX-30, MM-2000

Յերբ ստորին կարգի միավորը գրվում եր բարձր կարդի միավորի աջ կողմը, այդ նշանակում եր մի թիվ, վորը հավասար և նշված բոլոր թվերի գումարին, որինակ.

VI-6, XXI-21, MD-1500

Յեթե ստորին կարգի միավորը գրվում եր երենից մի կարդ բարձր թիվը առաջ, ապա այդ նշանակում եր մի թիվ վորը հավասար և նշված թվերի տարբերության, որինակ.

IV-4, IX-9, XC-90, CD-400, CM-900

Շատ բարդ բան է յեռանիշ և քառանիշ թվերն արտահայտել այս ձեր գրությամբ: Այդ և պատճառը, վոր ներկայումս հոսոմեական թվանշաններից շատ քիչ են ոգտվում: Միայն այն գեղքերումն են ոգտվում, յերբ ուզում են նշել վորեն հեղինակի գրածքների հատորները, գրքի գլուխները, հուշարձանների վրա կառուցման տարին և այլն:

II. ԶԱԳԵՐ. ԶԱԳԵՐԻ ՄԵՏՐԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿ

§ 1. ՄԻՅՈՒՐԱՆ
ներ յիշ առաջ
չափումը

Մաթեմատիկական հաշվումների ժամանակ մենք զարդ ուժենք մեծությունների հետ Սահմանում: Մարեմատիկայի մեջ մեծությունները են կոչվում այն բայուր, որը

կարենի չեն բաղկացել ու չափեն:

Յերկարությունը, քաշը, ժամանակը մեծությունները են:

Մեծությունները չափելու համար պետք է ունենալ չափի միավոր:

Որինակ, մետրը, սանտիմետրը—յերկարություն չափելու միավորներ են, կիլոգրամը, գրամը—ծանրության, իսկ ժամը, վայոկանը—ժամանակի միավորներ:

Սահմանում, I. Չափի մրագու կոչվում է ա.ն մեծությունը. Վորով չափում կամ գորի հետ բաղկացած են բոլոր համարները:

II. Չափել մեծությունը օօսանելում և այդ մեծությունը բաղկացել եռամ համասեր մի աշխարհի մեծության հետ, գործ միավոր ենք բնութանմ, այսինքն իմաստը, թե եռա հանի միավորներից կամ մասերից և կազմված սկզբ մեծությունը:

Չափման հիմնական միավորներ համարվում են՝ սանտիմետը—յերկարության, գրամը—ծանրության և վայոկանը—ժամանակի համար:

Չափումից առաջանում է թիվ, որինակ, այն առարկայի բաշը, վոր հավասարակշռվում է յերեք կիլոգրամով, նշանակում ենք 3 թվով:

§ 2. Չափերի մետրական սիստեմը

Այն բոլոր միավորների համախումբը, վարոնք գործադրվում են ամեն տեսակ մեծություններ չափելու, կոչվում են չափերի սիստեմ:

Քանի զարգանում է տեխնիկան, այնքան մեծանում են չշպրիչ չափումների և հաստատուն միավորներ ունենալու կարիքը:

Ամեն ժամանակ ել հարց ե հարուցվել, թե ճնարավոր չե՞
արդյոք զիջապատող բնությունից չափման հաստատուն միա-
վորներ ստանալ Սյստես են ստացվել ժամանակի միավորները
—տարին, որը: Այդ միավորները համապատասխանում են յերկրի
մշտապես կրկնվող տարեկան և որական շարժումներին: Յերկա-
րության համար գիտության մեջ ընդունված յերկարության
միավորը—մետրը—կապված է յերկրի մեծության հետ:

Ֆրանսիայում, բուրժուական հեղափոխության ժամանակ,
1795 թ., իբրև յերկարության միավորը ընդունվեց Փարիզի մի-
ջորեականի քառորդի մեկ տասմիլիոներորդական մասը:

Պատրաստվեց այդ միավորի նմուշը—մետրը, վորը ներկա-
յունս ել պահպում և Փարիզում՝ Զափերի ու կշիռների Միջազ-
գալին բյուրոյում:

Եշղը ստուգում կատարելիս սլարդվեց, վոր մետրի յեր-
կարությունը քիչ կարճ ե իրականից: Զնայած դրան, միջազ-
գային համաձայնությամբ մետրի նմուշն ընդունված է իբրև
յերկարության միավոր: Մետրի յերկու նմուշ ել պահպում և
մեղնում՝ Գիտությունների ակադեմիայում և Լենինգրադի Զա-
փի ու կշիռների գլխավոր պալատում:

1918 թ. սեպտեմբերի 14-ին Ժողկոմխորհի վորոշումով
ԽՍՀՄ-ի մեջ պարտադիր հայտարարվեց մետրական չափերի
գործածությունը:

Զափերի մետրական սիստեմը համաձայնեցված է թվերի
տասնորդական սիստեմի հետ: Սյստես, որինակ, մետրը հավա-
սար է 10 դեցիմետրի, 100 սանտիմետրի, 1000 միլիմետրի:
Զափի միավորը 10, 100, 1000 և այլ մասերի բաժանելը հաշ-
վումներ կատարելիս շատ հարմար է:

Ստանդարտավորող Կոմիտեի վորոշումով
ընդունված են մետրական չափերի զանա-
զան միավորների հետեւյալ կրծատ նշանա-
կումները:

ՉԱՐՔԻ ԱԴՅՈՒՆԱԿԸ

I. ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ չափեր	1 կիլոմետրը (կմ)=1000 մետրի (մ)
	1 մետրը (մ)=10 դմ=100 սմ=1000 մմ
	1 դմ=10 սմ=100 մմ
	1 սմ=10 մմ

II. ՄԱԿԵՐԵԿՈՒՅԹԻ չափեր	1 բառ. կմ=1 000 000 քառ. մ=
	=100 հեկտարի (հա)
	1 հա=100 արի (ա)=10 000 քառ. մ
	1 ա=100 քառ. մ
III. ԹԱՐԱՎԻ չափեր	1 քառ. մ=100 քառ. դմ=10 000 քառ. սմ
	1 քառ. դմ=100 քառ. սմ
	1 քառ. սմ=100 քառ. մմ
	1 լուր. մ=1000 լուր. դմ=
IV. ԹԱՅՐՈՒՐՅԱՆ չափեր	=1 000 000 լուր. սմ
	1 լուր. դմ=1000 լուր. սմ=
	=1 000 000 լուր. մմ
	1 լուր. սմ=1000 լուր. մմ
V. ՀԵՂՈՎԿԵՆԵՐԻ յեզ բնդեղեն- երի ծավալի չափեր	1 մետրական տոննը (ս)=10 ցենտ-
	ների (գ)=1000 կիլոգրամի (կգ)
	1 գ=100 կգ
	1 կգ=1000 գրամի (գ)
VI. ԹԱՎԱԼԻ յեզ ծանրուրյան չա- փերի միջեզ յե- ղած կապը	1 լիուրը (լ) 1 խոր. դմ-ի ծավալն ե
	1 հեկտոլիուրը (հլ)=100 լ
	1 խոր. մետր ջրի (4°C) քաշը=1 ս
	1 խոր. դեցիմետր ջրի (4°C)=1 գ
III. ԱՄԲՈԼՃ ԹՎԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՆՈՒՄԸ	1 խոր. սանտիմետր » » =1 գ

§ 1. ԳՈՒՄԱՐՈՒՄ

Համբելով կարելի յե թվերի գումարում
կատարել:

1. Մի տղա դպրոցից ստացավ 8 տետր,
իսկ նրա քուլուը՝ 7 տետր: Նրանք յերկուսով քանի՛ տետր ստա-
ցան:

Այս ինդիքը լուծելու համար ուետք ե համբել բոլոր տետ-
րերը, կստացվի՝ 15:

Լուծման գրառումը. $8+7=15$ տեսքի:

Այս որինակում տված յերկու թվերից պետք եք կազմել մի նոր թիվ, վոր ցույց տար, թե տված թվերում ընդամենը քանի միավոր կա, Այսպիսի գործողությունը կոչվում է զումարում:

2. Կարելի է զումարել նաև մի քանի թվեր, որինակ.

$$28+38+17+40=123$$

Այստեղ կոչվում է 28, 38, 17 և 40 այսինքն՝ չորս թվերի զումարը:

Սահմանում. Այն բայց, վոր զումարում են, կոչվում են զումարելիներ: Այն բիգը, վոր ստացվում է զումարումից, կոչվում է զումար:

1-ին խնդրում տված զումարելիներով ($8+7$) կազմվել ե զրանց զումարը (15):

Յերկու զումարելիների դեպքում ($8+7=15$) մենք ունենք՝

Սաաջին զումարելիին+յեկորդ զումարելին=զումարը:

Այդ զումարումը կարելի է տվելի կրճատ արտահայտել տառեռով. $a+b=c$, վորակ առաջին զումարելին՝ արտահայտված ե ա տառով, յերկրորդ զումարելին՝ Յ տառով, իսկ զումարը՝ Յ տառով:

Գումար կարելի յե անփանել ինչպես Յ-ն, այնպես և $a+b$ -ն:

1. Մի կոլանտեսության յեկամուտն ստացվում եր հետեւյալ աղբյուրներից.

Գիտությանը հացահատիկ վաճառելուց՝

$$65\ 703 \text{ մ.}$$

Բանջարանոցի արտադրանքը 99 682 մ.

Անասնապահական մթերքների վաճառքից՝ 3 319 մ.

Ծնտեսության այլ ճյուղերից 42 416 մ.

Կոլտնտեսության ընդհանուր համախառն յեկամուտը
211 120 մ.

Տվյալ խնդրում առանձին թվերը հանդիսանում են զումարելիներ, իսկ ընդհանուր արդյունքը՝ այդ զումարելիների գումարը: Լուծելով այս խնդիրը մենք զտնում ենք մի բանի զումարելիների գումարը, այսինքն այն բիգը, վորը պարունակում է այնքան միավոր, վարեն բայց զումարելիները միասին առած:

2. Գյուղացին մտնելով կոլտնտեսություն, առաջին տարին աշխարերի համար ստացավ 23 ց հացահատիկի: Հաջորդ տարին 15 ց հանաներով ավելի ստացավ նաև բանից ցենտներ հացահատիկ ստացավ նաև յերկրորդ տարին:

$$\text{Լուծում. } 23+15=38 \text{ ց:}$$

Այս խնդիրը նույնպես զումարման գործողությամբ ե լուծվում: Այստեղ հարկավոր ե բիգը մեծացնել վորու բանակի միավորներով (15):

Այստեղ ել զումարման համար տաճ թվերը (23-ը և 15-ը) կոչվում են զումարելիներ, իսկ 38-ը՝ զումարման արդյունքը՝ զումար:

Գումարման գործողությունը լուծվում են այն խնդիրները, վորտեղ հարկավոր ե:

1) Գտնել այն բիգը, վոր հավասար է սկած բոլոր բայերն միասին առած:

2) Տված բիգը մեծացնել մի բանի միավորով:

Նանորություն. — Յերկու խնդիրներն ել միշտ հնարավոր են, այդ պատճառով կարող ենք ասել, վոր զումարման գործողությամբ բոլոր դեպքերում ել կարելի յե կատարել:

1. Միը տնից մինչև նրբանցքի մի ծայրը
36 մ ե, իսկ մինչև մլուս ծայրը՝ 52 մ:
Դանել նրբանցքի յերկարությունը:

Լուծում.— Ընդհանուր յերկարությունը

$$36+52=88 \text{ մ.}$$

Նույն յերկարությունը կստացվի, յեթե թվերը դասավորենք ուրիշ կարգով՝

$$52+36=88 \text{ մ.}$$

Տեսնում ենք, վոր զումարը կախում չունի զումարելիների տեղափոխումից:

Գումարման սեղափոխումով գումարը չի փոխվում:

Նշանակելով զումարելիները և Յ տառերով, այդ որևէքը տառերով կարելի յե արտահայտել այսպես:

$$a+b=b+a$$

Այդ որենքը ճիշտ են նաև յերեք և ավելի գումարելիների
գումարը նկատմամբ:

2. Գտնել հետեւյալ թվերի գումարը.

$$43+65+28=28+65+4=65+43+8=136$$

Այս որինակում յերեք գումարելին' ըի տեղափոխումները
չեն փոխում գումարի մեծությունը:

Հետեւյալ զրառումը տառերով ել գրվում ե այսպես.

$$a+b+c=b+a+c=c+a+b=a+c+b$$

3. Գումարման վերաբերյալ ինդիրներ լուծելիս, բացի տեղափոխման որենքից, հաճախ ոգտագործում են նաև զարգացական որենքը:

Զուգուրզական որենքն: Մի բանի գումարելիների
գումարը ստանալու համար, կարելի յէ այդ գումարելիները
վերածել խմբերի, զենել ամեն մի խմբի գումարութիների գումարը յեզ ապա գումարել այդ բոլոր գումարները:

Այդ յեղանակով շատ գումարելիներ յեղած դեպքում հեշտանում ե զրանց գումարը դանելլ:

4. Գումարել՝ $15+35+22+8+46+9$

Լուծում. Այդ գումարելիները վերածենք այնպիսի խըմ-
բերի, վորոնց գումարները գումարման համար հարմար թվեր
են տալիս:

$$15+35+22+8+46+9=(15+35)+(22+8)+(46+9)=
=50+30+55=135$$

Դիտուրյուն. Փակագծերը ցույց են տալիս, վոր գումարումը նախ
ողեք ե կատարել փակագծերի ներսում: Արդյունքները գումարում են նետ
չաշումների ժամանակ հաճախ կերտավում ե թե տեղափոխման և թե զու-
գորդական որենքը:

5. Գտնել $43+79+68$ գումարը: Կստացվի 190: Բայց կա-
րելի յէ հեշտացնել հաշվումը: Քանի վոր ($60+7+1$) գումարը
փոխարինում ե 68-ին, ապա ակներև ե, վոր ճշմարիտ ե և հա-
կագարձը, այսինքն 68-ը կարելի յէ փոխարինել $60+7+1$ գու-
մարով:

68-ը վերածենք այս յերեք գումարելիներին և տեղադը-
րենք աված արտահայտության մեջ.

$$43+79+68=43+79+60+1+7$$

Այժմ խմբավորենք այդ գումարելիները.

$$43+79+60+1+7=(43+7)+(79+1)+60=$$

$$=50+80+60=190$$

Գումարման ժամանակ ամեն մի գումարելի կարելի յե
փոխարինել մի բանի այնպիսի գումարելիներով, վորոնց գու-
մարը հավասար ե սված գումարելիին:

§ 4. Խնդիրն պետք
ե գումարն ավել-
խցնել

Գումարման որենքները թույլ են տալիս
յերկու գումարելիների գումարն ավելաց-
նել՝ առանց հաշվի դիմելու:

1. Մի կորտնտեսություն հացահատիկն
ելեկատորին հանձնեց մի քանի նվազում: Սկզբում հանձնեց
845 գ, հետո 30 գ, իսկ վերջին անգամ՝ 75 գ: Ընդամենն ինչ-
քան հացահատիկ հանձնեց կորտնտեսությունը:

Լուծում. Այս խնդիրը կարելի յէ լուծել յերկու յեղա-
նակով.

1. Գումարել բոլոր թվերը.

$$845+30+75=950 \text{ գ:}$$

Գումարումը գտնելու համար այստեղ առաջին գումարե-
լին հետզհետեւ գումարում ենք մյուսներն առանձին-առանձին:

2. Կարելի յէ նախ հաշվել յերկրորդ և յերրորդ անգամ
հանձնված հացահատիկի քաշը, ապա այդ ավելացնել սկզբում
տվածի քաշին, այսպես.

$$30+75=105 \text{ գ. } 845+105=950 \text{ գ:}$$

Ստացվեց նույն գումարը: Այժմ փակագծերի միջոցով
արտահայտենք այդ գումարների հավասարությունը.

$$845+(30+75)=845+30+75=950$$

Թվին մի բան ուրիշ թվերի գումար ավելացնելու հա-
մար՝ կարելի յէ այդ թվին ավելացնել բոլոր գումարելիներն
առանձին-առանձին:



Այս կանոնն տրտահայտինք տառերով. $a+(b+c)=a+b+c$
Այս կանոնը պահում ե լուր ճշությունն անկախ դումա-
րելիների քանակից:
2. Գտնել հետեւալ թվերի գումարը.

$$38+(42+65+27+83)$$

Լուծում.

$$38+(42+65+27+83)=38+42+65+27+83=255$$

§ 5. Ամբողջ թվերի գումարում

իմանալով գումարի հատկությունները,
կարող ենք բացատրել ամբողջ թվերի գու-
մարման յեղանակները:
1. Միանիշ թվերի գումարումը կատար-
վում է համըանքի միջոցով, յեթե այդ թվերի գումարը տասից
պակաս ե, որինակ.

$$3+5=8$$

2. Յեթե միանիշ թվերի գումարը 10-ից ավելի յե, գու-
մարումը կատարվում է այսպես.

$$8+7=8+(2+5)=8+2+5=(8+2)+5=10+5=15$$

Այսուղ յերկրորդ գումարելին փոխարինեցինք յերկու
գումարելիներով և նրանց գումարն ավելացրինք, ողտվելով
գուզորդական որենքով:

Մի գումարելին պետք ե լրացնի առաջին գումարելին
մինչև 10:

3. Բազմանիշ թվերը գումարելին ողտվում ենք թե տեղա-
փոխման և թե զուգորդական որենքներով, որինակ.

$$\begin{aligned} 4385+2297 &= 4000+300+80+5+2000+200+90+7 = (4000+ \\ &+ 2000)+(300+200)+(80+90)+(5+7) = 6000+500+170+ \\ &+ 12 = 6000+500+100+70+10+2 = 6000+(500+100)+(70+ \\ &+ 10)+2 = 6000+600+80+2 = 6682 \end{aligned}$$

Այս որինակից յերեսում ե, թե ինչու գումարը գտնելու
համար առանձին առանձին գումարում ենք ամեն մի կարգի
միավորները:

Վերեկի գրությունը կարելի յե կրծատ գրել այսպես.

4385

+2297

6682

Յեթե գումարելին վորեե կարգի միավորների գումարը
10-ից անցնում ե, ապա վերածում ենք այդ հաջորդ ավելի
բարձր կարգ միավորների և ավելացնում հետեւալ ավելի բարձր
կարգի միավորների գումարին:

Մի բանի բվեր գումարելու համար այդ բվերը գրում ենք
իրար տակ այնպես, որ նույն կարգի բվանեաները լինեն
միյնվեռույն սյունակում: Գրելուց հետո նախ գումարում ենք
աջ սյունակի միավորները յեվ արդյունքը նշանակում այդ
սյունակի ներքեզում, յերե գումարը 10-ից պակաս ե. իսկ յե-
րե 10-ից ավելի յե կամ ուղիղ 10 ե, ապա միայն գրվում է
միավորների բվանեանը, իսկ տասնավորներն ավելացվում են
տասնավորների սյունակի բվերի գումարին, այսեղ ել նույն
կերպ ենք գարվում, ինչպես առաջին սյունակի բվանեանները
գումարելիս: Նույն կերպ գործողությունը շարունակվում է
մինչեվ վերջին սյունակը, զորի տակ գրվում է ամբողջ ար-
դյունքը, անկախ այն հանգամանեից՝ 10-ից ավելի յե, թե պա-
կաս: Այն բիժը, որը սանում յեվ գրում ենք գումարումը կա-
տարելուց հետո, հանդիսանում է հենց մեր վորանած գումարը:

1. Մեքենա-տրակտորային կայանն ունի 36
տրակտոր: Դրանցից 17-ն ուղարկվեց վարդու-
թանիսու մնաց կայանում:

§ 6. Հանում

Լուծում. 36—17=19

Այս գործողությունը կոչվում է հանում: Յեթե գումարենք
19 և 17, ապա կստանանք 36.

$$19+17=36$$

36-ը գումարն ե, 19-ը և 17-ը՝ գումարելիները իմանալով
գումարը (36) և գումարելիներից մեկը (17), հանման միջոցով
գտանք մյուս գումարելին (19):

Սահմանում. Հանումն այն գործողությունն է, վորով իեր հայտնի յև գումարը յեզ գումարելիներից մեկը, գտնում ենք յերկրորդ՝ անհայտ գումարելին:

Հանում կատարելիս թվերը չենք անվանում գումար և գումարելիներ, այլ կոչում ուրիշ անուններով:

I. Այն թիվը, վորց հանում են, կոչվում է նվազելի:

II. Այն թիվը, վորց հանում են, կոչվում է հանելի:

III. Այն թիվը, վորց ստացվում է հանումից, կոչվում է արբերություն կամ մնացորդ:

Առաջին խնդրում գտանք, վոր $36 - 17 = 19$. $36\text{-ը } \text{նվազելին } 4, 17\text{-ը } \text{հանելին}, \text{ իսկ } 19\text{-ը } \text{տարբերությունը:}$

Նվազելի—հանելի=արբերության:

Հանման առային գրությունը հատեյալն է:

$$a - b = c$$

Այստեղ ա տառն արտահայտում է նվազելին, և տառը հանելին, իսկ $c - a$ տարբերությունը:

Տարբերություն կոչվում է ինչպես $c - a$, այնպես և $a - b - c$

Գումարումը և հանումը փոխադարձարար հակադարձ գործողություններ են:

$$30 + 250 = 590 \text{ և } 590 - 250 = 340$$

Գրենք այն թվերի անունները, վորոնցով գործողություններ են կատարվում:

§ 7. Գումարումը յև հանումը փոխադարձարար հակադարձ գործողություններ են

Գումարելիս	Հանելիս
590	գումար
250	մի գումարելի
340	յերկրորդ գումարելի

1. Ներկա 6 է Ե. Ի. Նվազելին հավասար է հանելին, գումարած արբերությունը:

2. Հանելին հավասար է նվազելին, հանած արբերությունը:

1-ին և 2-րդ հետեւանքները հնարավորություն են տալիս գումարել անհայտ նվազելին և հանելին:

$$1) X - 5 = 9$$

Նվազելին է X -ը, հանելին՝ 5, տարբերությունը՝ 9: Գտնում ենք, վոր

$$X = 9 + 5, X = 14.$$

$$2) 8 - X = 3$$

Այստեղ X -ը հանելին է, 8 -ը՝ նվազելին 3-ը՝ տարբերությունը:

Գտնում ենք, վոր

$$X = 8 - 3, X = 5.$$

3) Մարդատար գնացքը բաղկացած է 14 վագոնից: Հանգուցային կայարանում այդ գնացքին կցեցին յերկու վագոն, բայց ուրիշ յերկուսն ել անջատեցին: Փոխվեց արդյոք գնացքի վագոնների թիվը:

$$1) 14 - 2 - 2 = 14 \text{ վագոնների:}$$

Վագոնների կցումը կամ անջատումը կարելի է յեր կատարել ուրիշ կարգով ևս: Կարելի յեր նաև անջատել յերկու վագոն՝ հետո կցել ուրիշ յերկուսը: Այդ գեղագում խնդրի լուծումը կաըթիւ վեր այսպիս: $14 - 2 + 2 = 14$: Արդյունքը նույնն է:

Այս խնդրի լուծումը թույլ է տալիս մատնանշել գումարած ման և հանման հետեւյալ հատկանիշները, վորպիս հակադարձ գործողությունների:

Յերե վորեվի թիւ ավելացնենք մի ուրիօք յեզ հետո նույն այդ թիվը հանենք, կատացվի նախկին թիվը:

Այսպիս, ուրեմն, փոխադարձարար հակադարձ գործողություններից մեկը չքացնում է մյուսի արդյունքները:

1. Կոլոնտեսությունը ծախսեց ընդամենը

§ 8. Հանման գործողությամբ յուծված վեց տնտեսական կարիքների համար, իսկ մնացածը վճարվեց բանկի պարտքը: Կոլումբանասությունը քանի ուրելի վճարեց բանկին:

2. Հանելին հավասար է նվազելին, հանած արբերությունը:

$$46 183 - 27 953 = 18 230 \text{ ռ.}$$

Այս խնդրում է երկու գումարելիների գումարը $46+3=49$ հ,
իսկ գումարելիներից մեկը՝ $37+9=46$ հ է Հարկավոր և յիշելու թվերի
գումարի և այդ թվերից մեկի միջոցով գտնել մյուս թիվը:

Այս խնդիրը լուծվում է հանման գործողությամբ: Գտնում
ենք դրամի մնացորդը, վորը կոլտնտեսությունը վճարեց ըան-
կին:

2. Շոգեմուրճը գետալներ կոփելիս որական մոտ 40 իու-
տան և տալիս: Շոգեմուրճն աշխատեցնող բրիգադը վորոշեց
խոտան գետալների թիվը $15+10=25$ նվազեցնելու համար թի բրի-
գադն որական ամենաշատը քանի խոտան և թույլատրելի հա-
մարում:

Լուծում. $40-15=25$ դեմալ:

Այս խնդրում պետք է 40-ը պահպահնել 15-ով: Խնդիրը
լուծվում է հանման գործողությամբ:

3. Քարտաշներից յուրաքանչյուրն որական 800-ական աղ-
յուս եր շարում: Հարվածայինը շարվող պղուսների թիվը հասցը-
րեց 1300 -ի: Հարվածայինն որական քանի աղյուսով ավելի յիշ-
շարում:

Լուծում. $1300-800=500$ աղյուս:

Այստեղ համեմատում ենք յիշելու թիվը իմանում ենք, թե
դրանցից մեկը քանի միավորով ավելի լի մյուսից:

Այս խնդիրն ես լուծվում է հանման միջոցով:

Համան գործողությունն է կրառավում, իեր հաւելավոր և
1) Ենեկու գումարելիների գումարի յիզ այդ գումարելի-
ներից մենք սիցոցով գտնել մյուսը:

2) Թիվը փոխացնել մի հանի սիցոցով (հանել մի բա-
նի միավոր):

3) Կմանալ, թե մի թիվ հանի սիցոցով մեծ կամ փոք
և մյուսի քանականությունը:

Մանրարյան I. Յերկորդ խնդիրը միշտ հարավոր չե լուծել հանման
միջոցով, այս դեպքում, յիշե կամենում ենք թվը վորացնել սիցոցելից
ավելի մեծ թիվը:

Մանրարյան II. Յեցե նվազելին հավասար է հանելին, ապա տար-
բերությունը հավասար է դերոյի: Որինակ, $8-8=0$:

Հետեւ անձ. Յերե յեկու թիվը աւրեւությունը զեր
յե, ապա ազդ թվերը հավասար են:

§ 9. Գումարի
փոփոխությունը

1. Կոռպելատիվը բանվորների համար ամա-
ռանոցային շենքեր ե կառուցում, վորոն-
ցից յուրաքանչյուրի բնակելի մակերեսը
պետք է լինի 56 քառ. մետր, իսկ ոժանդակ մակերեսը՝ 15 քառ.
մետր: Նախագիծը հաստատելիս վորոշից բնակելի մակերեսն
ընդարձակել 12 քառ. մետրով: Վորքան եր ամբողջ ոգտագոր-
ծելի մակերեսն առաջին նախագծի համաձայն և վորքան փոխ-
վեց դա յիշելորդ նախագծով:

I. Ուծում—Սկզբնական նախագծով ոգտագործելի մակե-
րեսը պետք է լիներ.

$56+15=71$ քառ. մետր:

Գումարելիներից մեկը մեծացնելով 12 քառ. մետրով, այդ-
քանով մեծացրած կլինինք և ամբողջ գումարը, կստանանք.

$56+15+12=68+15=71+12=83$ քառ. մ:

I. Յերե գումարելիներից մեկը մեծացնենք վորոշ թվով,
գումարեն ել նույնանով կմեծանա:

2. Ավտոմոբիլի քաշը 4200 կգ ե, իսկ նրա բեռը՝ 4800 կգ:
Վորքան և ավտոմոբիլի քաշը յուր բեռով: Ի՞նչ փոփոխություն
կառաջանա այդ քաշում, յիշե բեռը պակասի 200 կգ-ով:

Լուծում. Ավտոմոբիլի քաշը բեռով $4200+4800=9000$ կգ
ե: Յեթե բեռը պակասի 200 կգ-ով, ապա բեռան քաշը կլինի
 $4800-200=4600$ կգ, իսկ ավտոմոբիլի և բեռան քաշը՝ $4200+$
 $+4600=8800$ կգ, այսինքն ավտոմոբիլի և նրա բեռան քաշը
նույնպես կիրքանա չու կգ-ով:

Այսպիսով յիշե պակասում է մի գումարելին, փոքրանում
և և նրա գումարը:

II. Յերե գումարելիներից մեկը վարոշ թվով փոխացնենք,
գումարեն ել նույնանով կփոխանա:

3. Ավտոմոբիլի քաշը 4200 կգ ե: Նրա վրա կարելի յի
 4800 կգ բեռ դնել: Ի՞նչ փոփոխություն կառաջանար այդ յիշ-
ելուսի քաշում, յիշե ավտոմոբիլի քաշը 200 կգ պակաս լիներ,
և ակ նրա բեռը՝ 200 կգ ավելի:

Լուծում. Ավտոմոբիլի նախակին քաշը բեռով միասին:

$4200+4800=9000$ կգ

Նրա քաշը՝

$$4200 - 200 + 4800 + 200 = 4000 + 5000 = 9000 \text{ կգ}$$

Ավտոմոբիլի և նրա բեռան քաշը — միասին հաշված՝ չի փոխվի:

Այսպիսով, գումարը չփոխվեց, յերբ գումարելիներից մեկը փոքրացրինք, իսկ մյուսը մեծացրինք 200-ով:

III. Յերե գումարելիներից մեկին ավելացնենք վորյեվերիվ, իսկ մյուսից հանենք նույնեան, ապա գումարը կմնա անփոխ:

§ 10. Տարբերության փախխությունը

1. Կոռպերատիվը անհրաժեշտարար պետք է ունենար 32 զ ալյուրի պաշար, բայց նրան բաց ե թողնված միայն 24 զ. Վորքամն ել պետք և ստանա:

$$\text{Լուծում. } 32 - 24 = 8 \text{ զ.}$$

Այս որինակում 32-ը նվազելին ե, 24-ը՝ հանելին, իսկ 8-ը՝ տարբերությունը:

Ի՞նչ փոփոխություն կկրի այդ քանակը, յեթե մի դեպքում կոռպերատիվին անհրաժեշտ լինի 6 զ ավելի, մյուս դեպքում՝ 6 զ պակաս պաշար: Յեթե նվազելին մեծանա 6 զ-ով, ապա տարբերությունն ել կմեծանա 6 զ-ով: Հասկանալի յե, վոր յեթե նվազելին փոքրանա 6 զ-ով, տարբերությունն ել կփոքրանա 6 զ-ով: Այստեղ ունենք նվազելին մեծացնելու և փոքրացնելու որինակներ:

I. Յերե նվազելին մեծացնենք վորյեվերիվ, ապա տարբերությունն ել կփոքրանա ալգիտանով:

II. Յերե նվազելին փոքրացնենք վորյեվերիվ ապա տարբերությունն ել կփոքրանա ալգիտանով:

2. Ի՞նչ փոփոխություն կկրի ալյուրի քանակը, յեթե կոռպերատիվին բաց թողնված ալյուրը 3 զ-ով ավելի լինի. 3 զ-ով պակաս լինի (սախորդ որինակը):

Առաջին դեպքում հանելին մեծանում է 3-ով: Կարելի յե համազվել, վոր տարբերությունը կփոքրանա 3-ով և կդառնա 5 զ. յերկրորդ դեպքում հանելին կփոքրանա 3-վ, իսկ տարբերությունը կմեծանա 3-ով և կդառնա 11 զ:

I. Յերե հանելին մեծացնենք վորյեվերիվ, ապա տարբերությունն ել նույնեանով կփոքրանա:

II. Յերե հանելին փոքրացնենք վորյեվերիվ, ապա տարբերությունն ել կմեծանանա նույնեանով:

3. Գտնել 1200—800 տարբերությունը: Ի՞նչ փոփոխություն կկրի տարբերությունը, յեթե նույն թվով միաժամանակ մեծացնենք թե հանելին և թե նվազելին: Տարբերությունը դրանից չի փոխվի: Տարբերությունը չի փոխվի նաև այն դեպքում, յեթե հանելին ու նվազելին միաժամանակ փոքրացնենք միևնույն միավորով:

$$1200 - 800 = 1300 - 900 = 1000 - 600 = 400$$

Այստեղ առաջին դեպքում յերկու թիվն ել մեծացրել ենք 100-ով, իսկ յերկրորդ դեպքում՝ յերկու թիվն ել փոքրացրել ենք 200-ով:

Յերե նվազելին յեվ հանելին մեւայնենք (կամ փոքրացնենք) միյեվնույն բվով, տարբերությունը կմնա անփոխ:

1. Ստացված 250 ոուրլուց փոխառության տված ե 25 ո. և զանազան զնումներին՝ 50 ո. Վորքամն դրամ ե մնացել:

Լուծում. Այս խնդիրը կարելի յե լուծել յերկու յեղանակով:

1) 250 ոուրլուց հանել արած ծախսերի ընդհանուր զումարը.

$$250 - (20 + 50) = 250 - 75 = 175 \text{ ո.}$$

2) Հաջորդաբար հանել յերկու թվերը.

$$250 - 25 - 50 = 175 \text{ ո.}$$

Դրի առնելով այդ յերկու արդյունքների հավասարությունը, կստանանք գումարի հանման կանոնը:

$$250 - (25 + 50) = 250 - 25 - 50 = 175.$$

I. Վորյեվերի բվից ուրեմն բվելի գումարը հանելու համար կարելի յե հանել ամեն մի զանարկեց սուսանիք-սուսանիք:

Այս կանոնն արտահայտենք տառերով:

$$a - (b + c) = a - b - c$$

Այս վերջին կանոնը շատ հեշտացնում է հանումը, յիշը
պետք է մինույն թվից հանել մի քանի թվեր:

2. Հանել՝ $420 - 103 - 65 - 42 - 17$

Լուծում. Մենք հանելու յիշը չորս թվերի գումարը
միանդամից:

Այս գործողությունը փոխարինում է հանման չորս հա-
ջորդականության:

$$420 - (103 + 65 + 42 + 17) = 420 - 227 = 193$$

Նույն արդյունքը կստացվի, յեթե այդ թվերը հաջորդա-
քար հանենք:

$$\text{Արիսակ՝ } 420 - 103 - 65 - 42 - 17 = 193$$

3. Շոփերը ստացավ 250 ռ. աշխատավարձ, 80 ռ. պաշտե-
կանից 25 ռ. յետ պահեցին փոխառության համար:

Կանխիկ վորքմն դրամ ստացավ նաև:

Լուծում. Այս խնդիրը կարելի յետ լուծել յիշերու յեղա-
նակով:

$$1) 250 + 80 - 25 = 305 \text{ ռ.}$$

$$2) 250 + (80 - 25) = 250 + 55 = 305 \text{ ռ. :}$$

Վերջին դեպքում մենք միանդամից ավելացրինք ստացած
պարզեցի և յետ պահած դրամի տարբարությունը: Ստացվեց
նախկին արդյունքը:

Ա. Ենքու թվերի տարբերությունը մի թվի ավելացնելու
համար, կարելի յետ այդ թվին ուղղակի ավելացնել նվազելին
յեվ ապա հանել հանելին:

Այս կանոնն արտահայտենք տառերով:

$$a + (b - c) = a + b - c$$

Յեթե փոխենք խնդիրը, ապա կարող ենք ստանալ տար-
բերությունը հանելու կանոնը:

4. Համիլ փոխելիս տրահասորիստին վճարեցին 250 ռ. աշ-
խատավարձ, 40 ռ. պարդի և գուրս յեկան նրան բաց թողած
քննութեաքի առժեքը՝ 60 ռ. Կանխիկ վորքմն դրամ ստացավ նաև:

$$\text{Լուծում. Այժմանակ՝ } 250 - 60 + 40 = 230 \text{ ռ.}$$

$$\text{II յեղանակ՝ } 250 - (60 - 40) = 230 \text{ ռ.}$$

Ըերկրորդ յիշանակով լուծելիս մենք միանդամից հանում
ենք ստացած պարզեցի և յետ պահած դրամի տարբերությունը:
Յիշերու յիշանակի տված արդյունքը նույնն է.

$$250 - (60 - 40) = 250 - 60 + 40$$

Ա. Յերկու թվերի տարբերությունը վորեն թվից հանելու
համար, կարելի յետ այդ թվից հանել նվազելին և ապա ավելաց-
նել հանելին:

Այս կանոնը տառերով արտահայտվում է այսպես.

$$a - (b - c) = a - b + c$$

1. Թվերի հանումը կատարում են գումարի
հանման կանոններով.

$$\begin{aligned} & \boxed{\text{§ 12. Ամբողջ թվե-} \\ & \text{րի հանումը}} \\ & 8426 - 5312 = 8426 - (5000 + 300 + 10 + 2) = \\ & = 8426 - (2 + 10 + 300 + 5000) = 8426 - 2 - \\ & - 10 - 300 - 5000 = 8424 - 10 - 300 - 5000 = 8414 - 300 - 5000 = \\ & = 8114 - 5000 = 3114: \end{aligned}$$

Կարճ ձևով այս գրում են սյունակներով և միանդամից
հանումը կատարում կարդարությամբ:

$$\begin{array}{r} 8426 \\ - 5312 \\ \hline 3114 \end{array}$$

Դժվարություն յերևան ե զալիս միան այն ժամանակ,
յերբ նվազելին վորեն կարգի միավորների թիվը պակաս է հա-
նելիի նույն կարգի միավորների թվից:

$$2. Հանել՝ 6948 - 5173$$

Այսակ նվազելին 4 տասնավորից պետք է հանել հանե-
լիի 7 տասնավորը, վոր անկարելի յետ Այդ դեպքում մի միա-
վոր փոխ և առնվում նվազելիի հարեան բարձր կարգից, այ-
սինքն մի հարյուրավոր վերածում են տասնավորների և աւե-
լացնում նվազելիի 4 տասնավորներին. Ստացվում է՝ $10 + 4 = 14$
տասնավոր, հանում են՝ $14 - 7 = 7$ տասնավորի:

Դրելիս այդ հաշվի մտքունն են կատարում, իսկ փոխ
առնելը նշում են մի կետով, զա զրգում և այն կարգի թվի

վրա, վորից մի միավոր փոխ և առնված: Այնուհետև պետք է
1 հարյուրավորը հանել նվազելիի վոչ թե 9, այլ 8 հարյուրա-
վորից:

Դրվում է այսպես,

$$\begin{array}{r} 6948 \\ - 5173 \\ \hline 1775 \end{array}$$

Այստեղ նվազելիի 4 տասնավորին մտքում ավելացրինք
10 տասնավոր և հանեցինք նվազելիի հարյուրավորներից
, մեկը. բայց գրանով նվազելին չփոխվեց:

Բերենք հանման այլ որինակներ.

$$\begin{array}{r} 1. - 4058 \\ - 2723 \\ \hline 1335 \end{array}$$

Այստեղ մենք պետք ենի հազարավոր կամ 10 հարյուրավոր
ավելացնենք նվազելիի հարյուրավորներին և 1 հազարավորով
պակսցնենք նվազելիի հազարավորները:

$$\begin{array}{r} \dots \\ 2. - 140072 \\ - 58391 \\ \hline 81681 \end{array}$$

Այստեղ 4 տասնազարավորներից առնում ենք մեկ տաս-
հազարավոր և սրանից ել մեկ հազարավոր, այսինքն 10 հար-
յուրավոր, և ավելացնում հարյուրավորներին, իսկ մնացած 9
հազարը՝ հազարավորներին:

Հանման գործողությունը կատարելու համար, նվազելիի
տակ հանելին գրվում է այնպես, որ նույն կարգերը լինեն
առաջ տակ: Միավորների բանահանք տարբերության մեջ ստա-
նալու համար, հանելիի միավորների թիվը հանում են նվա-
զելիի միավորների թիվը: Եթեք այդ անհար է, ապա նվազե-
լիի միավորներին ավելացնում են 10 յեզ հարեվան բարձ-
րի միավորներին պահպանում են 10 յեզ հարեվան բարձ-

րի մասնաւոր կամ առաջարկում են կատարում տասնավոր-
ների, հարյուրավորների յեզ ավելի բարձր կարգերի հետ մինչել
պերը:

§ 13. Գումարման
ստուգումը

Գումարումը գումարման գործողու-
թյամբ ստուգելու համար գործադրում են
գումարման տեղափոխման որենքը, այսինքն նորից են գումա-
րում, փոխելով բար գումարելիների դասավորությունը: Պետք
է ստացվի նախկին գումարը:

Ստուգեցնք հետևյալ թվերի գումարումը:

$$327 + 516 = 843$$

Լուծում. Տեղափոխելով գումարելիները, կստանանք:

$$516 + 327 = 843$$

Եերկու զեղքումն ել ստացանք միւնույն գումարը՝ 843.
Կնշանակի խնդիրը ճիշտ ել լուծված:

Գումարումը գումարման գործողությամբ ստուգելու հա-
մար պես ե աված բվերը կրկին անգամ գումարել, փոխելով
գումարելիների դասավորությունը:

Գումարման ստուգումը հանման գործողությամբ. Գտնել
հետեւյալ թվերի գումարը և ստուգել լուծումը՝ 3573 + 8949

$$1. լուծում. 3573 + 8949 = 12522$$

Ստուգում, Մենք գիտենք, վոր գումարումն ու հանումը
փոխադարձարար հակադարձ գործողություններ են: Ուստի, գու-
մարից մի գումարելին հանելով, պետք է ստանանք յերկրորդ
գումարելին:

$$12522 - 3573 = 8949$$

Գումարումը հանման գործողությամբ ստուգելու համար
պես ե գումարից հանել գումարելիներից մեկը, փորպես ի
ստացվի յերկրորդ գումարելին:

§ 14. Հանման
ստուգումը

Նկատելով գումարումն ու հանումը իրեն
իրար փոխադարձարար հակադարձ գործո-
ղություններ, գտնում ենք հանման ստուգ-
ման պարզ յեղանակները:

Հանման ստուգումը գումարման գործողությամբ:

Գանել 1080—965 տարբերությունը և ստուգել լուծման
ձևությունը.

Լուծում. 1080—935=145

Ստուգման յեղանակը հիմնված է այն բանի վրա, վոր նվազելին հանդիսանում է գումարը, իսկ հանելին և տարբերությունը՝ յերկու գումարելիները:

Գումարելով հանելին և տարբերությունը, այսինքն 935 և 145, պետք է ստանանք նվազելին—գումարը՝ 1080:

$$935 + 145 = 1080$$

Հանման գործողությունը գումարումով ստուգելու համար պետք է գումարել հանելին ու տարբերությունը յև պետք է ստացվի նվազելին:

Հանման ստուգումը հանման գործողությամբ. Հանումը կարելի յե հենց հանման գործողությամբ ստուգել, ողտվելով այն հանգամանքից, վոր հանելին (մի գումարելին) հավասար և նվազելին (գումարին) հանած տարբերությունը (մյուս գումարելին):

Եկեղին հավասարությունը տալիս է հանման ստուգումը հանման գործողությամբ:

Հանումը հանման գործողությամբ ստուգելու համար պետք է նվազելիից հանել մենացորդը յև պետք է ստացվի հանելին:

Հանումը լրացումով կատարելը հիմնված է հակադարձ գործողությունների հատկանիշների վրա. դա մի յեղանակ է, վոր գործադրվում է ուզած թվերի թե բանավոր և

թե գրավոր հաշվի ժամանակ:

Գումարումը և հանումը կատարենք սովորական ձևով.

$$\begin{array}{r} 1. - 849 \\ \quad\quad\quad + 514 \\ \hline 335 \end{array}$$

$$\begin{array}{r} 514 \\ + 335 \\ \hline 849 \end{array}$$

Կարող ենք դատել այսպես. քանի միավոր ավելացնենք 4-ին, վոր դառնա 9. պարզ է, վոր 5: Քանի տասնավոր ավելացնենք 1 տասնավորին, մոր դառնա 4, պարզ է, վոր 3: Քանի հարլուտափոր ավելացնենք 5 հարյուրավորին, վոր դառնա 8, պարզ է, վոր 3:

Լուծումը գրվում է սովորական ձևով:

Վորոշ գժվարություն առաջանում է այն գեղքում, յերբ հանելիի վորեւ կարգի միավորների թիվն ավելի մեծ է նվազելիի նույն կարգի միավորների թվից:

2. — 753

— 738

— 15

Այս դեպքում հալցը տալիս ենք այսպես. 8-ին ինչ թիվ ավելացնենք, վոր գումարը մոտ լինի 8-ին և վերջանա 3-ով: Պատասխան—այդ թիվը 5-ն է, քանի վոր 8+5=13-ի: 5-ը գրվում է միավորների տեղում, իսկ ստացված տասնյակը մըտքում է պահպան: Այնուհետև հանելիի 3 տասնավորը լրացվում է 1-ով, վոր ստացվի 4 և վոչ թե 5 տասնավոր:

Այդ յեղանակը գործադրվում է նաև մի քանի թվերի հանման դեպքում:

3. Ամեն մի բարձր կարգի թիվը 1 միավորով լրացնելն այնքան պարզ ձևով է կատարվում, վոր արդյունքը կարելի է գրել ձախից դեպի աջ—հանելիի յուրաքանչյուր թվանշանը լրացվում է մինչև 9, բացի վերջին իմաստավոր թվանշանից, վորը լրացվում է մինչև 10:

Այդ ձևով կատարենք հանումները.

1000—475=525

1 000 000—512 097=487 903

100 000—81 963=18 037

10 000—5 20=4080

ԿԱՇՄ-ի քաղաքներն արագորեն աճում են. Այսպես, որինակ, Բագու քաղաքի բնակչների թիվը 1913 թ.՝ 333 9'8 եր, 1920 թ.՝ 255 566, 1926 թ.՝ 453 333, իսկ 1931 թ.՝ 589 634: Այդ թվերին նայելով վորոշեցեք Բագու քաղաքի բնակչության աճենամեծ աճը յերբ և լեզել:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ չե վերցնել նաև խաղայմանում տված ձգրիտ թվերը: Բացի զրանից այդ թվերը նույնիսկ չե կարելի ճշգրիտ համարել: Ուստի նպատակահար-

մար և հաշիվը հազարներով կատարել, անտեսելով հարյուրավորները, ասասնավորները և միավորները, վորովհետեւ Բագվի նման մեծ քաղաքի բնակչության թիվը որեցոր տատանվում է: Մի թիվ մի ավելի փոքր և զերոյով կամ զերոներով վերջացող թվով փոխարինելու այս յեղանակը կոչվում է կլորացում: Խնդրի թվերը կլորացնելով մենք ստանում ենք.

1913	թ.	334 000	բնակիչ
1920	»	256 000	»
1926	»	453 000	»
1931	»	590 000	»

1913 թ. մինչև 1926 թ. բնակչությունն աճել է 119 000, իսկ 1926 թ. մինչև 1931 թ. 137 000 մարդով:

Վերջին շրջանում բնակչությունն ավելի արագ և աճել, քան դրանից առաջ:

Կլորացրած թվերով խնդիրներում միշտ պետք է հիշատակվի թե վեր կարգի միավորներով և կլորացրած թիվը: Յերբեմն այդ դրված և լինում խնդրի պայմաններում:

I. Ամբողջ թվերը վորյեվե կարգի միավորներով կլորացնելիս, այդ կարգից գեղի աշ գտնվող բարոր կարգերի թվանը տառենք փոխարինելու այս գերազանցում:

Յերե գերայով փոխարինելով թվանը մեծ և 5-ից կամ հավասար և 5-ի, ապա գրանից գեղի ձախ գտնվող թվանը թվանը մեծացնում են մեկ միավորով, իսկ յերե գերայով փոխարինելով թվանը 5-ից փոքր է, այդ գեղի դուրս են գեղի ձախ գտնվող թվանը մեծ է ի փոխարում:

Որինակ, 437 922-ը հազարավորներով կլորացնելուց հետո դառնում է 438 000, 284 631-ը հարյուրավորներով կլորացնելուց հետո դառնում է 284 600, իսկ 396 754-ը հարյուրավորներով կլորացնելուց հետո՝ 396 800:

Այդ թվերից առաջինը կլորացված և հազարավորների, իսկ յերկրորդը և յերրորդը՝ հարյուրավորների կարգով:

II. Յերե գերայով փոխարինելով առաջին թվանը 5 է, իսկ գրանից ենտեղ ուրիշ թվանըներ չկան, կլորացնելու գեղի մեջ 5-ից գեղի ձախ գտնվող թվանընը, յերե զույգ է, պետք է թվանընը անփոփոխ, իսկ յերե կենտ է, պետք է մեկ միավորով մածացնել:

Որինակ, 2485-ը տասնավորների կարգով կլորացնելուց հետո դառնում է 2480, իսկ 19 635-ը նույն կարգով կլորացնելուց հետո՝ 19 640:

Դիտողություն—Յերկու թվերի կամ արտահայտությունների մոտավոր հավասարությունը ցույց տալու համար զբանք միացվում են ոչ-ու նշանով որինակ չեղաց 1800-ի կարգացվում և այսպես, չ-ը մոտավորագեն հավասար է 1800-ի:

IV. ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄԸ ՅԵՎ ԲԱԺԱՆՈՒՄԸ

§ 1. Բազմապատկում

1. Ավտոմոբիլի գործարանը տասնորյակի առաջին բանվորական որը բաց թողեց 127 ավտոմոբիլ յերկրորդ որն ել՝ 127 ավտոմոբիլ և նույն քանակը աշխատանքի բոլոր 8 որերը: Գործարանը քանի ավտոմոբիլ բաց թողեց այդ ժամանակամիջոցում:

Լուծում. Այս խնդիրը լուծելու համար պետք է 127-ն իրեւ գումարելի կրկնել ութ անգամ: Կարճ ձևով դա գրվում է այսպես՝

$$127 \times 8 = 1016,$$

այսինքն 127-ը բազմապատկում է 8-ով:

Այդպիսի գործողությունը, վարը կրճատ գումարում է, կոչվում է բազմապատկում:

127-ը կոչվում է բազմապատկելի, 8-ը՝ բազմապատկելի, իսկ 2016-ն՝ արտադրալ:

Սա իմ անում. Մի թիվ վորեվե ամբողջ թվով բազմապատկել նշանակում է բազմապատկելին իբրև գումարելի կրկնել այնքան անգամ, վորեան միավոր ունի բազմապատկելը, չեվ ապա հասվել գումարը:

Բազմապատկումն արտահայտում էն յերկու նշանով՝ 1) թեք խաչով, որինակ՝ $42 \times 3 = 126$ և 2) կետով, որինակ՝ $16.7 = 112$:

Տառերով արտահայտելիս կարելի յե բազմապատկման նշանը չդնել:

Դրվում է 1) աբ, փոխանակ ա ։ բ, 2) 5 չ, փոխանակ 5 ։ չ:

Սա իմ անում. Բազմապատկելի կոչվում է այն թիվը, վարը բազմապատկում եւ բազմապատկել կոչվում է այն թիվը,

զորք բազմապատկռում են: Արտագրալ կոչվում ե այն թիվը,
զորք ստացվում է բազմապատկռում իյ:

Սունօրություն—Բազմապատկռին և բազմապատկռում են նույ
արտադրվեն:

Բազմապատկռումը տասկրով գրվում ե այսպէս: a, b=c:

ա և Ե տառերով արտահայտված են արտագրիչները, իսկ
զ տառով՝ արտագրյալը:

2. Հաշվենք հետեւ արտագրյալները, ա) 1.8, բ) 7.1,
զ) 1.1, դ) 0.7:

Լուծում, ա) 1.8=8, բ) 7.1=7, զ) 1.1=1, դ) 0.7=0

Այս որինակները լաւձելով կարելի յի անել այսպիսի հե-
տական թիվներ.

Միավորք զորեմք թվով, ինչպես յեզ զորեմք թիվ միավո-
րք բազմապատկռիս ստացվում է նույն այդ թիվը:

Արտագրալը միշտ զեր կլինի, յերեւ արտագրիչներից մեկը
զեր յի:

3. Հաշվենք այն սենյակի ծավալը, վորի յերկարությունը
8 մետր ե, լայնությունը՝ 3 մ, իսկ բարձրությունը՝ 4 մ:

Լուծում. Ծավալը գտնելու համար այս դեպքում պետք
ե յերկարությունն արտահայտող թիվը բազմապատկռի լայնու-
թյունը և բարձրությունը արտահայտող թվերով:

(8.3.4) խոր. մ:

Տված յերեք արտագրիչների արտագրյալը գտնելու համար
հարկադր ե նախ իմանալ 8.3=24 արտագրյալը, իսկ հետո՝
24.4=93 արտագրյալը կստանանք.

8.3.4=96 խոր. մ:

Յ ա հ մ ա ն ո ւ մ. Յերեք թիվերի արտագրյալ կոչվում ե այն
թիվը, զորք ստացվում է զույն յերեկու թիվերի արտագրյալը յեր-
երորդ թիվով բազմապատկռիս:

§ 2. Բազմապատ-
կռումը ունենալ
իմաստներ:

Լուծում.—4.26=104 հա:

Այս խնդիրը լուծվում ե բաղմապատկռումով:

Այսուղի բազմապատկռումը փոխարինում ե հավասար գույ
մարկելիների գումարման գործողության:

2. Կոլունտեսություն մտավ 120 տնտեսություն: Մի տա-
րուց հետո կոլունտեսություն մտած տնտեսությունների թիվը
յեռապատկիլց: Քանի տնտեսություն մտավ կոլունտեսություն:

Այս խնդիրն էլ լուծվում է բազմապատկռումով: 120.3=360
տնտեսություն:

Այսուղի տված թիվը մեծացրինք մի քանի անգամ:

Սմբողջ թվով բազմապատկռելու միջոցով լուծվում են
այն խնդիրները, զորոնց մեջ պետք ե. 1) իրար հավասար՝ մի
բանի գումարելիների գումարը գտնել, 2) թիվը մեծացնել մի
բանի անգամ:

1. Տ ե զ ա Փ ո խ մ ա ն ո ւ ն ե ն ի: Բաղմա-
պատկել. 1) 3.5, 2) 2.3.7:

Յեթե արտագրյալը գտնելու համար, ար-
տագրիչների տեղերը ամեն յեզրակով
փոխենք և համեմատենք արդյունքները, կստացվի:

1) 3.5=5.3=15

Ենեկու արտագրիչների տեղափոխումից արտագրյալը չի
փոխվի:

Տառերով այսպիս ե գրգռում:

ա. բ=b. ա

Նման հատկությունը ե ոժտված նույն տվելի մեծ թվով ար-
տագրիչների արտագրյալը:

2) 2.3.7=2.7.3=7.3.2=3.2.7=7.2.3=3.7.2=42

Տառերով արտահայտվում ե այսպիս:

ա. բ. ս=a. ս. ս=b. ա. ս=b. ս. ս=a=a. ս=b=c. ս. ս

2. Զ ո ւ գ ո ր դ մ ա ն ո ւ ն ե ն ի. Քանի կերպ կերպուին ե պա-
րունակում ուղղանկյունաձե բաթը, յեթե նրա յերկարությունը
4 մետր ե, լայնությունը՝ 3 մ, իսկ բարձրությունը՝ 2 մ:

Ուղղանկյունաձև բարի տարողությունն իմանալու համար պետք է գտնել $4 \cdot 3 \cdot 2$ արտադրյալը:

Նախ գտնենք $4 \cdot 3$ արտադրյալը և հետո այդ բազմապատկենք $2 \cdot 3$ -ի կստանանք.

$$(4 \cdot 3) \cdot 2 = 24 \text{ խոր. } \text{մ} = 24\,000 \text{ խոր. } \text{դմ} = 24\,000 \text{ լ.}$$

Այժմ բազմապատկենք $4 \cdot 3 \cdot 2$ արտադրյալը կամ այսպիսի կարգը.

$$2 \cdot (3 \cdot 4) = 24 \text{ խոր. } \text{մ.}$$

Ստացվում է նույն արդյունքը:

Մի բանի արտադրյալների արտադրյալը չի փոխվի, յեթե արտադրյաները խմբավորենք ուզած ձեզով:

Տառերով գրվում են այսպես.

$$a \cdot b \cdot c = a(c \cdot b) = (a \cdot b) \cdot c$$

3. Հետեւյալ որինակը ցուց ե տալիս, թե արտադրյալի այդ հատկանիշը յերբեմն վորքան հեշտացնում ե հաշվումը:

$$2 \cdot 2 \cdot 2 \cdot 3 \cdot 5 \cdot 5 = ?$$

Լուծում. Յեթե բազմապատկենք այն կարգով, վոր ցուց ե արված այստեղ՝ կստանանք 600 . Այժմ նույն հաշիվը անենք, փոխելով կարգը:

$$(2 \cdot 5) \cdot (2 \cdot 5) \cdot (2 \cdot 3) = 10 \cdot 10 \cdot 6 = 600$$

Արդյունքը միևնույն է, բայց հաշիվը ավելի հեշտացած:

4. Բառ խման ու ենթադրություն արտադրյալով կամար քանի՞ կիլոգրամ թիթեղ, ե հարկավոր, յեթե կտուրը բազմացած ե յերեք լանջից, վորոնցից մեկը 2 քառ. մետր ե, մետրով՝ 12 քառ. մ, իսկ յերրորդը՝ գարձյալ 2 քառ. մ (1 քառ. մ ծածկի թիթեղի քաշը 5 կգ ե):

Լուծում. Կտուրի ընդհանուրը մակերեսը $2 + 12 + 2 = 16$ քառ. մետր է: Թիթեղի ամբողջ քաշը գտնելու համար պետք է 1 քառ. մետր թիթեղի քաշը բազմապատկել քառակուսի մետրը թվով, այսինք՝ $5 \cdot 16 = 80$ կգ:

Խնդիրները կարելի յե ուրիշ յեղանակով ել լուծել — նախ իմանալ ամեն մի բանջի թիթեղների քաշը, ապա գումարել ստացած թվերը: Կստանանք.

$$2 \cdot 5 + 12 \cdot 5 + 2 \cdot 5 = 10 + 60 + 10 = 80 \text{ կգ:}$$

Արդյունքը նույն է:

5. $(27 + 13 + 4) \cdot 5$ բազմապատկումը կատարենք յերկու յեղանակով:

1) Գումարենք փակագծի ներսում յեղած բոլոր գումարենքները և գումարել բազմապատկենք 5 -ով:

2) Յուրաքանչյուր գումարելին առանձին-առանձին բազմապատկենք 5 -ով և գումարենք ստացված արտադրյալները՝ Յերկու դեպքումն ել կստանանք $նույն արդյունքը՝ 220$:

Գումարը գորեվիք բվով բազմապատկելու հօմար բավական ե ամեն մի գումարեին առանձին-առանձին բազմապատկել այդ բվով յեզ ստացված արտադրյալները գումարենք:

Տառերով գրվում ե այսպես.

$$(a+b) \cdot c = ac + bc$$

§ 4. Բազմապատկում արտադրյալով
յեզ արտադրյալի բազմապատկումը

1. Գտնել շարված աղյուսների քաշը, թե յերկածքի չափանիկը են 5 մ, 8 մ և 2 մ, իսկ 1 խոր. մետր աղյուսների քաշը՝ 18 գ: Լուծում. Այս խնդիրը լուծելու համար հարկավոր ե 1 խոր. մետր աղյուսների քաշը բազմապատկել ծավալի խոր. մետրների թվով:

$$18 \cdot 5 \cdot 8 \cdot 2 = 90 \cdot 8 \cdot 2 = 720 \cdot 2 = 1440 \text{ գ:}$$

Այս խնդրի լուծումը կարելի յե ուրիշ կերպ նշել գրել, նախ գտնենք շարվածքի ծավալը՝ $5 \cdot 8 \cdot 2 = 80$ խոր մ, ապա նրա քաշը՝ $18 \cdot 80 = 1440$ գ:

Արդյունքները հավասար են:

$18 \cdot 5 \cdot 8 \cdot 2 = 18 \cdot 80$. այստեղ 80 -ը $5 \cdot 8 \cdot 2$ թվերի արտադրյալն ե:

Պորեկե բիվ մի շարք այլ բվերի արտադրյալով բազմապատկելու համար, բավական ե բազմապատկելին գրել այդ

թվերի արտադրյալի մոտ վորաբես բազմապատկիք, յեզ ապա կատարել բազմապատկումը մի օտք թվերի արտադրյալը գտնելու կանոնով:

Գիտողություն. Խնդիրը լուծեալ ստացանք՝ $18 \cdot 5 \cdot 8 \cdot 2 = 1440$. Այսուղ արտադրյալ և կոչումը բնչպես հավասարության աջ, այնպես և ձախ մասը

2. Դաշնել (3.5.6).8 արտադրյալը:

Գիտողություն. Փակադժերը ցույց են տալիս, վոր գրանց ներսի զործությունները ավելի շուտ պետք է կատարել, քան մյուսները:

Լուծում. Այստեղ բազմապատկումը կարելի յէ զբել այսպիս:

$$(3 \cdot 5 \cdot 6) \cdot 8 = 3 \cdot 5 \cdot (6 \cdot 8) = 3 \cdot (5 \cdot 8) \cdot 6 = (3 \cdot 8) \cdot 5 \cdot 6 = 720$$

Այս բոլոր գիպքերումն ել արտադրյալներն իրար հավասար են:

Մի օտք թվերի արտադրյալը վորյեմի թվով բազմապատկիք. լու համար, բավական է այդ թվով բազմապատկիք առաջդրիչ ներփակել մեկը, բողնելով մյուսներն անփափոխ:

§ 5. Գործարի յել առընթերության բազմապատկումը
Գործողության հատկանիշներն ուսումնասիրենիս հարկիս հարկ յեղավ գումարը, աարբերությունը և արտադրյալը գրել առանց մինչեւ վիրջ հասցնելու հաշվումները:

1. Թրե՛լ յերկու թվերի՝ 23-ի և 15-ի գումարը պետք ե բազմապատկել 6-ով:

$$1. լուծում. (23+15) \cdot 6 = 38 \cdot 6 = 228$$

Ոգտվելով բազմապատկման բաշխական որենքով, կարելի յէ այսպիս ևս լուծել:

$$(23+15) \cdot 6 = 23 \cdot 6 + 15 \cdot 6 = 138 + 90 = 228$$

2. Գրե՛լ 37-ի և 14-ի աարբերությունը բազմապատկել 9-ով:

$$1. լուծում. (37-14) \cdot 9 = 23 \cdot 9 = 207$$

Գիտողություն. $(23+15)$ և $(37-14)$ արտահայտություններն անվանում ենք գումար և աարբերություն. Ուստի $(23+15) \cdot 6$ արտահայտությունն ել կարելի յէ անվանել զումարի բազմապատկումը 6-ով, իսկ $(37-14) \cdot 9$ -ը՝ աարբերության բազմապատկումը 9-ով:

Յ ջույց տանք, թի ինչպես պիտք և աարբերություն նը բազմապատկել վորեւ թվով:

$$(7-4) \cdot 9 = 3 \cdot 9 = 27$$

կամ

$$(7-4) \cdot 9 = 7 \cdot 9 - 4 \cdot 9 = 63 - 36 = 27$$

Համեմատելով սրանց լուծումը՝ կարելի յէ զրել այսպիս:

$$(7-4) \cdot 9 = 7 \cdot 9 - 4 \cdot 9 :$$

Ծերկու թվերի աարբերությունը փոքր բազմապատկելու համար բավական է այդ թվով առանձին-առանձին բազմապատկել նվազելին ու համելին յեզ սրացրե արտադրյալի 9 հանկ յերկուրզը:

Տառերով գրվում և այսպիս:

$$(a-b) \cdot c = ac - bc$$

$$4. (6+8-9) \cdot 4 = 5 \cdot 4 = 20$$

$$(6+8-9) \cdot 4 = 6 \cdot 4 + 8 \cdot 4 - 9 \cdot 4 = 24 + 32 - 36 = 20$$

§ 6. Արտադրյալի փոխիրարյունն արտադրիչների փոփախության հիմքնելով
Հյուսնոցի աշխատանքների համար հարկավոր եր 12 տախտակ: Առաջին անգամ արված տախտակի չափսներն ելին $4 \text{մ} \times 25 \text{մ} \times 3 \text{մ}$, իսկ յերկրորդ անգամ վահանը՝ $4 \text{մ} \times 25 \text{մ} \times 6 \text{մ}$: Վերջին անգամ տրված տախտակի քանակը քանի անգամ եր ազելի առաջին անգամ տրվածից:

Լուծում. Առաջին անգամ տրված մի տախտակի ծավալը.

$$400 \times 25 \times 3 = 30\,000 \text{ լոր. մ.}$$

Յերկրորդ անգամ տրված մի տախտակի ծավալը.

$$400 \times 25 \times 6 = 60\,000 \text{ լոր. մ.}$$

Տեսնում ենք, վոր արտադրելիչներից մեկը 2 անգամ մեծ, ծավանելու հետևանքով 2 անգամ ել մեծանում և արտադրյալը:

Յեթե $400 \times 25 \times 6 = 60\,000$ լոր. մ. ի փոխիրարյուն վերցնենք $40 \text{մ} \times 25 \text{մ} \times 3 = 30\,000$ լոր. մ. կտևնենք, վոր արտադրելիչներից մեկն ու մեկը 2 անգամ փոքրացնելով՝ նաև արտադրյալն ի փոքրանում 2 անգամ:

I. Յերե արտադրիչներից մեկը մի բանի անգամ մեծացնենք
կամ փոքրացնենք, այդքան անգամ ել կմեծանա կամ կփոքրա-
նա արտադրյալը:

Յեթե առաջին անգամ հանձնված տախտակների փոխարեն
որվեն այնպիսի չորսուներ, վորոնք կրկնակի կարճ, բայց
կրկնակի հաստ են այդ տախտակներից, ապա ամեն մի չորսու-
յի ծավալը հավասար կլինի մի տախտակի ծավալին:

Փոխանակ $400 \times 25 \times 3 = 30\,000$ խոր. սմ.³, կստացվի նույն
ծավալն՝ $200 \times 25 \times 6 = 30\,000$ խոր. սմ.³:

II. Յերե արտադրիչներից մեկը մեծացնենք մի բանի ան-
գամ, իսկ մյուսը փոքրացնենք նույնիան անգամ, արտադրյալը
չի փոխվի:

§ 7. Բազմապատ-
կումնեկ իմաստա-
վոր բվանող բվով

1. Միանիշ թվերի բազմապատկումը կա-
տարգում ե ըստ բազմապատկման աղյու-
սակի:

2. Ցույց տանք, թե ինչպիս ե բազմա-
պատկումը կատարգում այն թվերով, վո-
րոնք արտահայտված են մեկ միավորով և հաջորդող զերոնե-
րով:

Օրինակ. Տեխնիկական մթնոլորտ կոչվում ե 1 կգ ճնշումը
1 քառ. սանտիմետրի վրա: Կաթսալում ճնշումը հավասար է 35
մթնոլորտի: Հաշվեցեք, քանի՞ կիլոգրամ ե ճնշումը 1 քառ.
մետրի վրա:

Խնդիրը լուծելու համար պետք ե 35-ը բազմապատկել
10 000-ով: Արտադրյալը գտնելու համար 35-ը նախ բազմա-
պատկենք 10-ով. այդ նշանակում ե, վոր մեր թվի ամեն մի միա-
վորը 10 անգամ կրկնելով կդառնա տասնավոր, ամեն մի տաս-
նավորը կդառնա հարյուրավոր և կստացվի 35 տասնավոր, վոր
հավասար է 350-ի:

Ցույց արտաքին տեսքով արտադրյալը բազմապատկելիից
տարբերվում է մի զերոյով միայն, վորն ավելացվում ե վեր-
ջում:

Հեշտությամբ կարելի յե նկատել, վոր 100-ով բազմա-
պատկելիս արտադրյալի վերջում պետք ե ավելացնել յերկու
զերո, 1000-ով բազմապատկելիս՝ յերեք զերո և այլն:

Մեր բերած որինակում կստանանք.

$35 \cdot 10\,000 = 350\,000$ կգ 1 քառ. մետրի վրա:

Ամբողջ բիվը 10-ով, 100-ով 1000-ով, բազմապատկելու
համար պես ե բազմապատկելիի աջ կողմում՝ վերջից ավե-
լացնել այնքան զերո, վորքան զերո կա բազմապատկելում:

3. Բազմանիշ թվերը միանիշով բազմապատկում ենք այս-
պես.

$$\begin{aligned} 2437 \cdot 6 &= (2000 + 400 + 30 + 7) \cdot 6 = \\ &= 2000 \cdot 6 + 400 \cdot 6 + 30 \cdot 6 + 7 \cdot 6 = \\ &= 12\,000 + 2400 + 180 + 42 = 14\,622 \end{aligned}$$

Այսակ բազմապատկելին փոխարինում ենք գումարելի-
ների գումարով և գտնում գումարի ու բազմապատկելիչի ար-
տադրյալը:

Բազմապատկումը սկսվում է ստորին կարգերից և գրվում
հետեւյալ ձևով:

$$\begin{aligned} 2437 \cdot 6 &= 2437 + 6 \cdot 42 + 6 \cdot 1 \cdot 4 \\ 14622 &= 14622 + 6 \cdot 14622 + 6 \cdot 1 \cdot 14622 \end{aligned}$$

Մասնավորը մտքում պահվում տասնավորների ար-
տադրյալին ավելացնելու համար: Բազմապատկում են 3 տաս-
նավորը 6-ով, ստացվում է 18: Դրան ավելացնում են 4 տաս-
նավորը, դառնում է 22 տասնավոր: 2 թվանշանը գրվում է
տասնավորների կարգում, իսկ 2 հարյուրավորը մտքում պահ-
վում: Ենունետե 4 հարյուրավորը բազմապատկում են 6-ով,
ստացվում է 24, վորին ավելացնում են մտքում պահված 2
հարյուրավորը, վորով ստացվում է 26 հարյուրավոր: 6 թվանշ-
անը գրվում է հարյուրավորների կարգում, իսկ 2 հազարա-
վորը մտքում պահվում: 2 հազարավորը բազմապատկում են
6-ով, ստացված արտադրյալին ավելացնում են մտքում պա-
հած 2 հազարավորը, դառնում է 14 հազար, վորը և գրվում է
հազարավորների կարգում: Ստացվում է 14622:

1. Գտնել $353 \cdot 800$ արտադրյալը: Գրում
ենք այսպիս:

$$\begin{aligned} 353 \cdot 800 &= 353 \cdot (8 \cdot 100) = 353 \cdot 8 \cdot 100 = \\ &= (353 \cdot 8) \cdot 100 = 2824 \cdot 100 = 282\,400 \end{aligned}$$

Այսակ 800-ը փոխարինված ե յերկու արտադրյաների ար-
տադրյալով: 8 \cdot 100 արտադրյալով բազմապատկելու համար
կարելի յե նախ բազմապատկել 8-ով, ապա 100-ով:

2. Արտադրիչների վերածելով բազմապատկել՝ 1900. 7000:

Լուծում. $1900 \cdot 7000 = (19 \cdot 100) \cdot (7 \cdot 100)$

$$= 19 \cdot 100 \cdot 7 \cdot 1000 = (19 \cdot 7) \cdot (100 \cdot 1000) =$$

$$= 133 \cdot 100 \cdot 1000 = 13 \cdot 300 \cdot 1000 =$$

1. Բազմապատկենք՝ 718. 243:

Լուծում. Բաշխական որենքի հիման
վրա այդ գործողությունը գրենք այսպես.

§ 9. Բազմանիս
բվեր բազմա-
պատկելու

$$718 \cdot 243 = 243 \cdot 718 = (200 + 40 + 3) \cdot 718 = 718 \cdot 200 + \\ + 718 \cdot 40 + 718 \cdot 3 = 143 \cdot 600 = 28 \cdot 720 + 2154 = 174474:$$

Արձատ արտահայտման համար թվերը գրում են իրար տակ.
2154-ը, 718-ի և 3-ի արտադրյալն ե, 28 720-ը $\times 718$
 $\times 243$
718-ի և 40-ի արտադրյալն ե, իսկ 143 600-ը 718-ի $- 2154$
և 200-ի արտադրյալն ե, Դրանք կոչվում են միջան. $- 28720$
Կյալ արտադրյալները յերկրորդ միջանկյալ արտադրյալ $- 143600$
յալը ստացվել ե 718-ը տասնավորներով բազմապատ-
կելուց:

Այդ միջանկյալ արտադրյալը միշտ վերջանում է մի վերո-
յով, ուստի 0-ն չի գրվում. ամբողջ թիվը գրվում է այնպես,
վոր վերջին իմաստավոր թվանշանը՝ տասնավորների տակ լի-
նի:

Բազմապատկելով հարյուրավորներով՝ կոտանանք
718 $\times 200$: Ուստի 1436-ը կարտահայտի հարյուրա-
վորներ և կորվի այսպես, վոր վերջն իմաստավոր
թվանշանը լինի հարյուրավորների տակ:

Միջանկյալ արտադրյաների վերջում յեզած վե-
րաները չեն գրվում:

2. Հաշվել 307. 428:

Լուծում. Բանի վոր առաջին թվում իմաստա-
վոր թվանշանները քիչ են մյուսից, ուստի և այդ
գրում ենք իբրև բազմապատկելիք: Բազմապատկելիքում
տասնավորներ չկան, այդ պատճառով ել չկա յերկ-
րորդ միջանկյալ արտադրյալը: Հետեւյալ միջանկյալ
արտադրյալը գրվում ե զեպի ձախ յերկու կարգից
հետո:

$$\begin{array}{r} \times 718 \\ \times 243 \\ - 2154 \\ 2872 \\ 1436 \\ \hline 174474 \end{array}$$

$$\begin{array}{r} \times 428 \\ \times 307 \\ - 2996 \\ 1284 \\ \hline 131396 \end{array}$$

Բազմանիս թիվը բազմանիս թվով բազմապատկելու հա-
մար պիտի և բազմապատկելին առանձին-առանձին բազմա-
պատկել բազմապատկելին միավորներով, տասնավորներով, հար-
յուրանշաններով յեզ ապա ստացված արտադրյալները գույները:

3. Գտնել 18. 2756 արտադրյալը:

Լուծում. Պատր ե 18-ը բազմապատկել 2756-ով: Բայց,
զիսենալով, վոր արտադրյալը չի փոխվում արտադրիչների տե-
ղափոխությամբ, 2756-ն ենք բազմապատկել 18-ով:

Այսպէս այնին հարմար ե:

$$2756 \cdot 18 = 49 \cdot 608$$

Յերե արտադրյալները հավասար բվով իմաստավոր թվանը-
ունեն չունեն, այդ գեպիում ավելի հարմար ե բազմապատ-
կելի գարնենի այն թիվը, զորի իմաստավոր թվանը սենեն ավելի
իր են:

§ 10. Համապա-
պատկելն ասիհան-
քի մասին

Միենույն արտադրիչների բազմապատկ-
ման գեղքըուն հնարավոր ե վորոշ պարզու-
թյուն մայնել գրության մեջ:

1. Տված են հետեւյալ արտադրյալները:

$$1) 3 \cdot 3, 2) 2 \cdot 2 \cdot 2, 3) 3 \cdot 3 \cdot 3 \cdot 3, 4) 5 \cdot 5 \cdot 5 \cdot 5, 5) 10 \cdot 10 \cdot 10$$

Այսպիսի արտադրյալների համար կա գրության հատուկ
լեզունակել:

$$1) 3 \cdot 3 = 3^2 = 9, 2) 2 \cdot 2 \cdot 2 = 2^3 = 8, 3) 3 \cdot 3 \cdot 3 \cdot 3 = 3^4 = 81$$

$$4) 5 \cdot 5 \cdot 5 \cdot 5 = 5^4 = 625, 5) 10 \cdot 10 \cdot 10 = 10^3 = 1000$$

Հովասար արտադրիչների բազմապատկելու հանդիսանում
ե մի նոր (*հինգերորդ*) գործողություն—ասիհան բարձրացնելու
ներքած որինակում 5^2 կարգացվում է այսպիս-լերիքը բարձ-
րացնել յերկրորդ ասիհանի կամ գունել այն յերկու արտադր-
յալների արտադրյալը վորոնցից յուրաքանչյուրը 3 և $2^3 = 2 \cdot 2 \cdot 2$
կարգում ենք այսպես—օ. ը բարձրացնել յերեք տափան կամ
գունել այն յերեք արտադրիչների արտադրյալը, վորոնցից յու-
րաքանչյուրը հակառակ ե 2-ի:

2. Թեթև հաշվենք 2^5 -ը, 3^4 -ը, 4^3 -ը, 7^3 ը, պետք ե ստո-
նանք՝ 32, 81, 64, 343:

25=32 արտահայտության մեջ 2-ը կոչվում է սստիճանի հիմք, 5-ը՝ աստիճանացույց:

Սա իմանումն եր 1. Աստիճանի հիմք կոչվում է այն թիվը, զորով պետք է աստիճան բարձրացնել:

II. Աստիճանացույց կոչվում է այն թիվը, զորը ցույց է տալիս, թե քանի անգամ պետք է վերցնել հիմքն իբրև արտադրի րիշ:

Հաճախ կը առ գրության նողատակով գերոյով վերջացնող թվերը գրում են 10-ի աստիճանների ողնությամբ:

$$1) 100=10^2, \quad 1000=10^3, \quad 10\,000=10^4$$

$$2) 5000=5\cdot1000=5\cdot10^3$$

$$3) 4\,000\,000=4\cdot10^6$$

Բաժանումը բարգմապատկման հակադարձ

§ 11. Բաժանում

զործողությունն է:

1. Կոլտնտեսությունը ցանեց 800 հա ճակնդեղ և յուրաքանչյուր հեկտարից սաացավ 425 ց բերք, ընդամենը վերքան բերք հավաքեց կոլտնտեսությունը:

$$\text{Լուծում. } 425 \cdot 800 = 340\,000 \text{ ց:}$$

Այս խնդիրը լուծվում է բազմապատկման գործողությամբ: Լուծենք այժմ հակադարձ խնդիրը:

2. Կոլտնտեսությունը ցանեց 800 հա ճակնդեղ և հավաքեց ընդամենը 340 000 ց բերք: Վերքան եր 1 հա-ի միջին բերքը կազմում է 340 000 : 800 = 425 ց:

Հակադարձ խնդրում յերկու արտադրիչների տված արտադրյալի (340 000) և արտադրիչներից մեկի (800) միջոցով գտնում ենք անհայտ արտադրյալը (425):

Յերկրորդ խնդիրը լուծելու համար դիմում ենք բաժանում:

Սա ծմանում, բաժանում կոչվում է այն զործողությունը, զորով գտնում ենք արտադրիչներից մեկը, յերբ հայտնի յե արտադրյալը յեկ մյուս արտադրյալը:

Բաժանման ժամանակ տված և ստացված թվերն ունեն իրենց առանձին անունները:

1) Տված յերկու արտադրիչների արտադրյալը կոչվում է բաժանումի:

2) Տված արտադրիչը կոչվում է բաժանարար:

3) Վորոնելի արտադրիչը կոչվում է բանորդ:

Բանորդ գտնելու համար բաժանման բաժանում ենք բաժանարարի զրա:

Սա իմանում է. Այն թիվը, զոր բաժանում են, կոչվում է բաժանելի: Այն թիվը զորի վրա բաժանում են, կոչվում է բաժանարար: Այն թիվը, զոր սաացնում է բաժանման ենթականությունը:

Իրեկ բաժանման նշան ծառայում է (:) նշանը կամ կոտորակի գիծը:

3. Արենակ. 12-ը բաժանել 4-ի վրա. գրում ենք այսպես.

$$12 : 4 = 3 \quad \text{կամ} \quad \frac{12}{4} = 3$$

$$\downarrow \qquad \downarrow \qquad \downarrow \qquad \downarrow \qquad \downarrow$$

$$(\text{բաժանելի}) : (\text{բաժանարար}) = (\text{բանորդ}) \quad \frac{\text{բաժանելի}}{\text{բաժանարար}} = \text{բանորդ}$$

Յեթև բաժանելին նշանակենք ա, բաժանարարը ե, իսկ բանորդը զապակ, ապա բաժանումը կարելի յե տառերով այսպիս գրել:

$$a:b=q \quad \text{կամ} \quad \frac{a}{b}=q$$

Վորակեղ հավասարության թե ձախ (a:b) և թե աջ (q) մասը կոչվում ե քանորդ:

§ 12. Բազմապատկման բաժանումը կամ վաճառքը բաժանումը վաճառքարձարար հակադարձ զործողություններ են

Բաժանման գործողության սահմանութից յերեվում է, զոր թվերի բաժանումը կամ վաճառքը և բազմապատկման հետ: Ուստի յերկու նիշ և միանիշ թվերը միանիշի վրա բաժանելիս զործադրում են բազմապատկման աղյուսակը:

1. Ասենք թե պետք է 36-ը բաժանել 9-ի վրա:

Լուծում. $36:9=4$, քանի զոր բազմապատկման աղյուսակից հայտնի յե, զոր 4 \cdot 9 = 36,

Բաժանումը յեկ բազմապատկումը փոխադարձաբար հակադարձ զործողություններ ենե

2. Կոսովերատիվը յերկու անդամ կայարան ուղարկեց
160-ական հակ ապրանք, վորը հավասարառեն բարձրեց յիւկու-
վագոնում: Յուրաքանչյուր վագոնում քանի հակ բարձրեց:

$$\text{Լուծում. } 160 \cdot 2 = 320 \text{ հակ}, \quad 320 : 2 = 160 \text{ հակ}$$

Լուծումը փակադերով կդրենք այսպես.

$$(160 \cdot 2) : 2 = 160 \text{ հակ}$$

Գրության ժամանակ կարելի յէ ոգտվել բաժանման մըուս
նշանով ևս (գծավ).

$$\frac{160 \cdot 2}{2} = 160 \text{ հակ}$$

160-ը չփոխվեց, յերբ նրա հետ իրար հակադարձ յերկու
զործողություն կատարվեց. նախ լազմապատկեց 2-ով, ապա
ստացված արտադրյալը բաժանվեց զարձյալ 2-ի վրա:

Հաջորդաբար կատարված բազմապատկումը ուղիղ բաժա-
նումը 2-ի վրա՝ չի փոխում սկզբնական թիվը, և արդյունքն
ստացվում է 160, անկախ այն բանից, 160-ը նախ բազմապատ-
կում ենք 2-ով և ապա բաժանում 2-ի վրա, թէ ընդհակառակը:

Յեթե սգութ թիվը բազմապատկի մի գորեքն բազ չեվ
ստացված արտադրյալը բաժանվի նույն թիվ վրա, կատացի բարձ-
րակ սկսած թիվը:

Եյլ համանից գրակոր արտահայտենք թվերով և տառերով.

$$1) \frac{15 \cdot 7}{7} = 15, \quad 2) \frac{a \cdot b}{b} = a$$

**Տ 13. Տարեւ աս-
տիճանի գուշակու-
րյաններ**

Բվարանական չորս հիմնական զործողու-
թյունները զույգ առ զույգ հակադարձ են
մեկը մյուսին՝ հանումը հակադարձ և գու-
մարման, բաժանումը՝ բազմապատկման:

Բացի դրանից՝ զործողությունները տարբերվում են նաև
ըստ աստիճանների.

I Աստիճան—զույգարում և հանում.

II Աստիճան—բազ լապատկում և բաժանում.

III Աստիճան—աստիճան բարձրացնելը:

Յուր ամենապարզ ձեռվ բարձր աստիճանի զործողու-
թյունը հանդիսանում է նախորդ ստորին աստիճանի զարձողու-
թյան պարզեցումը: Այսպիս, որինակ՝ $3 \cdot 5 = 15$ բազմապատ-
կումը կարելի յէ ավելի յիրկար զրել գումարումով:

$$3 + 3 + 3 + 3 + 3 = 15$$

Կարելի յէ նաև բաժանման զործողությունը փոխարինել
հանման զործողությամբ, որինակ, $5 \cdot 3 = 15$ անդամ և պարու-
նակում 15-ի մեջ՝ 15 : 5 փոխարինել հանումով՝ $15 - 5 - 5 - 5 = 0$,
այսինքն 3 անդամ հանիլ 5-ը:

Ուրիշ խոսքով, բազմապատկումն ամբողջ թվակ միենուին ե
թե նույն գումարելիների գումարը, իսկ բաժանումն ամբողջ
թվի վրա հանդիսանում է հաջորդաբար նույն թվի հանումը:
Բազմապատկումը և բաժանումը կարելի յէ փոխարինել զու-
մարման և հանման զործողությումբ Գումարումը և հանումը
կոչվում են առաջին ասինանի զունդուրյաններ, իսկ բազմա-
պատկումը և բաժանումը՝ յերկրոյ ասինանի զործողություններ:
Նման՝ ձեռվ նույն արտադրիչների բազմապատկման յերկար
զրությունը փոխարինում են ասինան բարձրացնելու զործողու-
թյամբ, վորավ դրա վյուններ կրնաւ ձև և ստանում: Այս գեպքում
ստիճան բարձրացնելը հանդիսանա պարզեցրած բազմապատ-
կում:

$$2 \cdot 2 \cdot 2 \cdot 2 \cdot 2 = 2^5 = 32$$

Բազմապատկումը յերկրոյ ասինանի զործողություն և,
ստիճան բարձրացնելը՝ յերկրոյ ասինանի զործողություն:

**Տ 14. Բաժանման
գործողությունը
լուծված խնդիրներ**

Մենք գիտենք, վոր բաժանումը բազմա-
պատկման հակադարձ զործողություն եւ
մեստի բաժանման միջոցով լուծվող հիմ-
նական խնդիրն անհայտ արտադրիչը գրա-
նելն ե, յերբ հայտնի յէ արտադրյալը և արտադրիչներից մեկը:

1. Արտադրյալը 645 ե, իսկ արտադրիչներից մեկը՝ 15.
զոնել մյուս արտադրիչը:

$$\text{Լուծում. } \frac{645}{15} = 43$$

Խնդիրը լուծվեց բաժանման միջոցով:

2. 1929 թ. սեպտեմբերին Ամերիկայում ձուլվեց 3561 հազար տոնն չուղան, իսկ յերկու տարուց հետո՝ 1^ո 31 թ. սեպտեմբերին՝ դրանից 3 անգամ պակաս: Վորքան չուղուն ձուլվեց Ամերիկայում 1931 թ. սեպտեմբերին:

Լուծում. Այս խնդիրը լուծելու համար պետք է 3561-ը փոքրացնենք 3 անգամ:

3561 : 3 = 1187 հազար տոնն

Բաժանման միջոցով լուծվող խնդիրների յերկրորդ տեսակն է այս:

3. Կոլտնտեսությունը 4525 աշխորվա համար պետք է վճարի 36 200 կգ հացահատիկ: Վորքան և վճարվում մեկ աշխորի համար:

Լուծում. Քանի վոր աշխորերը վճարվում են հավասարաչափ, ուստի այս խնդիրը լուծելու համար հարկավոր է 36 200 կգ-ը բաժանել 4525 հավասար մասերի՝

36 200 : 4525 = 8 կգ

Այս խնդիրը նույնպես լուծվում է բաժանման միջոցով:

4. Յուրաքանչյուր ավտոմոբիլում կարելի յե նստեցնել 25 մարդ: Քանի այդպիսի ավտոմոբիլ է պետք 300 մարդ տեղալորելու համար: Այսուղ հարկավոր ե իմանալ, թե 25-ը քանի անգամ ե պարունակում 300-ի մեջ: Այդ իմանում ենք բաժանման գործողությամբ:

Լուծում. 300 : 25 = 12 ավտոմոբիլ:

5. Յերկու խումբ բանվորներ աղուս ելին դատարկում, մի խումբը հաղարից խոտան եր տալիս 24ը, իսկ մյուսը՝ հազարից 12-ը: Առաջին խումբը քանի անգամ ավելի խոտան եր տալիս:

Լուծում. Այդ իմանուլու համար պետք է 24-ը բաժանել 12-ի վրա, կստացվի 24 : 12 = 2, այսինքն առաջին խմբի տված խոտանը 2 անգամ ավելի յեր յերկրորդից, կամ յերկրորդի տված խոտանը 2 անգամ պակաս եր առաջինից:

Այս խնդրում բաժանման միջոցով բաղդատվում են յերկու թվեր: Այսպիսով, խնդիրները բաժանման գործողությամբ լուծվում են այն ժամանակ, յերբ հարկավոր ե.

1) Սրագրյալի յեվ հայտնի արտագրիչի միջոցով գտնել յերկրող՝ անհայտ արտագրիչը:

2) Թիվը փոքրացնել մի բանի անգամ:

3) Թիվը բաժանել հավասար մասերի:

4) Համեմատել յերկու թվի, իմանալ, թե ա՞դ բվերից մեկը բանի անգամ ե պարունակվում մյուսի մեջ (բանի անգամ բվերից մեկը մեծ կամ փոքր ե մյուսից):

Դիտողություն I. Բաժանման վերաբերյալ խնդիրները մշատ չեն կարելի այնպես լուծեն, վոր ամբողջ թիվ ստացվի:

6. 15-ը փոքրացնել 7 անգամ:

Այս խնդիրի լուծումը չի կարող արտահայտվել ամբողջ թվով:

Նույնպես չի կարելի 15-ը բաժանել 7 հավասար մասերի և ամբողջ թիվ ստանալ, կամ 15-ը և 7-ը բաղդատելով բաժանման գործողությամբ, ամբողջ թվով արտահայտվի բաղդատման արդյունքը:

Դիտողություն II. Գումարելու և ամբողջ թվով բաղմապատկելու միջոցով մենք միծացնում ենք թիվը: Հանելու և ամբողջ թվի վրա բաժանելու միջոցով փոքրացնում ենք թիվը: Սակայն թվերի այս միծացնելու և փոքրացնելու բնույթը տարբեր է, վորի վրա պետք է հատուկ ուժագրություն դարձնել:

Գումարման միջոցով թիվը մեծանում է մի հանի միանորդ:

Միավորից մեծ թվով բաղմապատկելիս թիվը մեծանում է մի բանի անգամ:

Հանման միջոցով թիվը փոքրանում է մի հանի միավոր:

Միավորից մեծ թվի վրա բաժանելու դեպքում թիվը փոքրանում է մի հանի անգամ:

1. Տրակտորի պահեստի մասերը գործարանն որպական միջին հաշվով կարող է բաց թողնել 11 200 ռ. արտադրանք: Ի՞նչ արժեքի արտադրանք կտա գործարանը 15 որում:

Լուծում. 11 200 . 15 = 168 000 ռ:

Անցնենք հակագործ խնդրին:

2. Գործարանը 15 որում բաց թողեց 168 000 ռ. գումարի արակտորի պահեստի մասերը: Այդ ավելների հիման վրա

վորոշեք թե վորքան և գործարանի մի որվա արտազրանքի արժեքը:

$$\text{Լուծում. } 168\,000 : 15 = 11\,200 \text{ ռ.}$$

Քննության առնելով այդ յերկու խնդիրների լուծումը, տեսնում ենք, վոր իմանալով արտազրյալը՝ $168\,000$ ռ. և մի արտազրիչը՝ 15 , կարող ենք գտնել մյուս արտազրիչը հետեւյալ կանոնի համաձայն.

Յերկու արտագրիչներից մեկը հավասար է $6\frac{1}{2}$ արտագրիչին՝ բաժանած մյուս արտագրիչի վեա:

$$\text{Այս յեղակացությունը զրենք տառերով.}$$

$$\text{Ցեղեք } a \cdot b = q \text{ (I), առաջ } c = \frac{q}{b} \text{ (II), կամ } b = \frac{q}{c} \text{ (III)}$$

(I) հավասարությունը ցույց է տալիս, վոր բաժանելին զ հավասար է բաժանարարի և քանորդի (ա և օ) արտազրյալին:

Հետեւյալ որբնակով ստուգենք, թե վորքան ճշշտ և բազմապատկման և բաժանման զործողության անդամների կախումը:

$$\text{3. Հարկավոր և բաժանել և ստուգել } \frac{360}{24}$$

$$\text{Լուծում. } \frac{360}{24} = 15$$

Ուսուզում. 360 -ը պետք է հավասար $1/5$ ի $24 \cdot 15$ -ի, վորտեղ 360 -ը հանդիսանում է բաժանելին, 24 -ը՝ բաժանարարը, 15 -ը՝ քանորդը: Յեկ իսկապես,

$$360 = 24 \cdot 15$$

II. Բաժանելին հավասար է բաժանաւարին, բազմապատկմած բանագով:

Ստուգումը կարելի յէ կատարել ուրիշ կերպ՝ բաժանման միջոցով.

$$360 : 15 = 24$$

Բաժանելին բաժանելով քանորդի վրա, ստուգում է բաժանարարը:

III. Բաժանաւարը հավասար է բաժանելին, բաժանած բանորդի վրա:

Արած յեղակացություններով կարսղանում ենք գտնել անհայտ արտազրիչը, անհայտ բաժանելին իսամ բաժանարարը:

Ներքեւում զետեղված որբնակում պետք է գտնել անհայտ թիվը, վորը նշանակված և չ տառուի:

$$1. 40 : 280$$

Լուծում. Այստեղ անհայտ ե մեկ արտազրիչը, իսկ հայտնի յէ արտազրյալը և մյուս արտազրիչը:

Առաջին կանոնի համաձայն՝

$$x = \frac{280}{40} = 7$$

$$2. x \cdot 70 = 50$$

Լուծում. Այս որբնակը նախորդից տաղբերվում է միտյն նրանով, վոր անհայտ արտազրիչը գրված և առաջին սեղումը կուծումը նույնն է.

$$x = \frac{350}{70} = 5$$

$$3. \frac{x}{16} = 12, \text{ կամ } x : 16 = 12$$

Լուծում. Այս որբնակը լուծելու համար պետք է զործացրել յերկրորդ հատկանիշը. x -ը բաժանելին է, 16 -ը՝ բաժանարարը, 12 -ը՝ քանորդը:

$$x = 12 \cdot 16 = 192$$

$$4. 187 : x = 11, \text{ կամ } \frac{187}{x} = 11$$

Լուծում. Այս որբնակում հայտնի բաժանելիի և քանորդի միջոցով պետք է գտնել անհայտ բաժանարարը:

Յերրորդ հատկանիշով լուծվում է այսպես.

$$\frac{187}{11} = x; \quad x = 17$$

Այս որբնակի լուծմանը կարելի է ուրիշ բացատրություն ել տալ, ընդունելով x -ը և 11 -ը իբրև արտազրիչներ, իսկ 187 -ը՝ վորտեղ նրանց արտազրյալը. Արտազրիչների տեղափոխումը չի փոխում արտազրյալի և հենց արտազրիչների-իբրեւց մեծությունը:

$$11 \cdot x = 187, \text{ կարելի յէ գտնել անհայտ արտազրիչը.}$$

$$x = \frac{187}{11} = 17$$

§ 16. Բազմապատկման յեվ բաժանման սուրգումը

Նախորդ հատվածի կանոնները տալիս են բազմապատկման և բաժանման ստուգման պարզ յեղանակները:

1. Կատարենք $406 \cdot 78 = 31\,668$ բազմա-

պատկման ստուգումը:

Սուրգում. $31\,668 : 406 = 78$

I. Բազմապատկման սուրգումը կատարելու հեմար կարելի յեւ արտադրյալը բաժանել արտադրչներից մեկի վրա, բանուցում պետք է սացվի մյուս արտադրիչը:

2. Ստուգենք $16\,050 : 642 = 25$ բաժանումը:

Սուրգում. 1) $642 \cdot 25 = 16\,050$, կամ 2) $16\,050 : 25 = 642$

II. Անմեացորդ բաժանումն սուրգելու համար կարելի յեւ:

1) Քանորդը բազմապատկել բաժանարարվ, պետք է սացվի բաժանելին.

2) Բաժանելին բաժանել բանորդի վրա, պետք է սացվի բաժանարարը:

§ 17. Քանորդի փախխությունը

1. 16 հազար տոնն չուգունը տեղափոխելու հտմար քանի բաց վագոն և պետք, յեթե մեկ բաց վագոնում տեղափորվում է 16 Տ:

Լուծում. $16\,000 : 16 = 1000$ բաց վագոն:

2. Նույն առողության քանի բաց վագոն և հարկավոր

48 հազար տոնն չուգունը տեղափոխելու համար:

Լուծում. $48\,000 : 16 = 3000$ վագոն:

Համեմատելով վերջին յերկու խնդիրները տեսնում ենք, վոր մեծացնելով բեռը 3 անգամ, վագոնների թիվը ել մեծացալ 3 անգամ: Բաժանելին և քանորդը փոխվեցին—յերկուսն ել մեծացան 3 անգամ:

I. Յերե բաժանելին մեծացնեն կամ փոքրացնեն մի բանի անգամ, բանորդն ել կմեծանա կամ կփոքրանա նույնեան անգամ:

Փոքրացնելու կանոնը հասկանալի կդառնա, յեթե 1-ին և 2-րդ խնդիրների տեղերը փոխենք և ապա համեմատենք դրանց լուծումը:

3. Քանի մեծ վագոն և հարկավոր 48 հազար տոնն չուգունը տեղափոխությունը համար, յեթե ամեն մի բաց վագոնի տառողությունը 48 տոնն եւ:

Լուծում. $48\,000 : 48 = 1000$ բաց վագոն: Այս խնդիրը համեմատենք 2-րդ խնդիրի հետ:

Տեսնում ենք, վոր այստեղ մեկ բաց վագոնը 3 անգամ ավելի յեւ բերնավորված և վագոնների թիվը 3 անգամ պակաս եւ: Բաժանարարը փոխվեց, այդ պատճառով փոխվեց նաև քառորդը:

II. Յերե բաժանարարը մեծացնեն մի բանի անգամ, ապա այդքան անգամ կփոքրանա բանորդը, իսկ յերե բաժանարարը փոքրացնեն մի բանի անգամ, ապա բանորդը կմեծանա այդքան անգամ:

4. 144 հազար տոնն բեռը տեղափոխելու համար քանի բաց վագոն և հարկավոր, յեթե յուրաքանչյուրի տարողությունը 48 տոնն եւ:

Լուծում. $144\,000 : 48 = 3000$ բաց վագոն:

Համեմատելով 4-րդ և 2-րդ խնդիրները՝ տեսնում ենք, վոր բաժանելին 3 անգամ մեծացնելու հետևանքով քանորդն ել մեծացալ 3 անգամ, միաժամանակ բաժանարարը 3 անգամ մեծացնելու հետևանքով քանորդը նվազեց 3 անգամ և վերջիվերջո ննաց նախկինը:

III. Յերե բաժանելին յեվ բաժանարարը միեվնույն բփով մեծացնեն կամ փոքրացնեն մի բանի անգամ, բանորդը չի փոխվի:

Նույն կանոնը կարելի յեւ ուրիշ կերպ ել արտահայտել:

1. Յերե բաժանելին յեվ բաժանարարը միաժամանակ բազմապատկեն միեվնույն բփով, բանորդը չի փոխվի:

2. Յերե բաժանելին յեվ բաժանարարը բաժանեն միեվնույն բփի վրա, բանորդը չի փոխվի:

Սրագրայալի բաժանումը 1. Հարկավոր ե 10 + բենդինը բաժանել 2 հավասար մասի և գանել ամեն մի կեսի քաշը: 1 + բենդինի քաշը 700 գրամ եւ:

Լուծում. Այս խնդիրը կարելի յեւ լուծել յերկու յեղանակով:

§ 18. Արտադրյալի յեվ գումարի բաժանումը

1-ին լուծում. Պահենք ամըրդջ բնդղինի քաշը և ապա կեսին:

$$700 \cdot 10 = 7000 \text{ գ}, \quad 7000 : 2 = 3500 \text{ գ}.$$

2-րդ լուծում. Բնդղինի քանակությունը կեսին ք և ապա գտնենք կեսի քաշը.

$$700 \cdot (10 : 2) = 700 \cdot 5 = 3500 \text{ գ}.$$

Թե առաջին և թե յերկրորդ դեպքում ստացվում են միևնույն արդյունքը.

$$(700 \cdot 10) : 2 = 700 \cdot (10 : 2) = 3500 \text{ գ}.$$

Առաջին դեպքում նախ գտնում ենք յերկու արտադրիչների արտադրյալը և ապա այդ բաժանում 2-ի վրա, իսկ յերկրորդ դեպքում՝ արտադրիչներից մեկն ենք բաժանում 2-ի և հետո գտնում ստացած թիվի և յերկրորդ արտադրիչի արտադրյալը:

Ցերկու արտագրիֆերի արտագրալը գործվե թիվի վրա բաժանելու համար, բարելի յե այդ թիվ վրա ամեն մի գումարելին բաժանել առանձին-առանձին լիդ ապա գումարել ստացված գումարելիները:

$$\text{Տառերով պիտք ե զրել այսպէս. } \frac{a+b}{m} = \frac{a}{m} + \frac{b}{m}$$

Եթ կանոնը ճիշտ և նաև մեծ թվով արտադրիչների հաշմարդ:

2. Ասենք թե հարկավոր ե 3, 12 և 8 թվերի արտադրյալը բաժանել 2-ի վրա:

$$(3 \cdot 12 \cdot 8) : 2 = \frac{238}{2} = 144$$

Լուծ:

$$(3 \cdot 12 \cdot 8) : 2 = 3 \cdot 6 \cdot 8 = 3 \cdot 12 \cdot 4 = 144$$

Յերկրորդ լեզուակի համաձայն 2-ի վրա բաժանում ենք $(12 \cdot 8)$ արտադրիչներից մեկը, փոխանակ նրանց արտադրյալը բաժանելու:

Գումարի բաժանումը. 3. Տրակարավարն առաջին կիսամույթի հումարը ստուգավ 84 ա. իսկ յերկրորդի հումարը՝ 9 և առշխատավարձ. Այդ ամսին քանի արկանը եր ունեցել արակարավարն իթե նա յուրաքանչյուր ալիսը համար ստացել եր շատ:

Լուծում. Այս խնդիրը կարելի յե լուծել յերկու յեղանակով: Կարելի յե գումարել ամսում սահացած զրամը և բաժանել 7-ի վրա կամ, առանձին-առանձին հաշվել առաջինը և յերկրորդ կիսամայսկներում աշխատած որերի թիվը:

$$(84 + 91) : 7 = 175 : 7 = 25 \text{ որ}.$$

Լուծ:

$$84 : 7 + 91 : 7 = 12 + 13 = 25 \text{ որ}.$$

$$\begin{aligned} &\text{Համեմատելով արդյունքները կարելի յե գրել} \\ &(84 + 91) : 7 = 84 : 7 + 91 : 7 = 12 + 13 = 25 \end{aligned}$$

Ցերկու թիվերի գումարը գործվե թիվի վրա բաժանելու համար, կարելի յե այդ թիվ վրա ամեն մի գումարելին բաժանել առանձին-առանձին լիդ ապա գումարել ստացված գումարելիները:

$$\text{Տառերով պիտք ե զրել այսպէս. } \frac{a+b}{c} = \frac{a}{c} + \frac{b}{c}$$

Այս կանոնը ճիշտ և նաև յերեք, չորս և ավելի գումարելիները ունեցող գումարի վերաբերմաբ:

$$\begin{aligned} 4. \text{ Բաժանենք} \quad &(140 + 280 + 360) : 10 = 140 + 280 + 360 = 78 \\ &= 140 : 10 + 280 : 10 + 360 : 10 = 14 + 28 + 36 = 78 \end{aligned}$$

Լուծ:

$$\frac{780}{10} = 78$$

Տառերով արտահայտվում ե այսպէս. $\frac{a+b+c+d}{m} = \frac{a}{m} + \frac{b}{m} + \frac{c}{m} + \frac{d}{m}$

Նման կանոն կա նաև տարբերության բաժանման համար:

* Տարբերության բաժանումը. 5. Յերկու թվերի՝ 375-ի և 255 ի-տարբերությունը բաժանենք 15-ի վրա:

$$\text{Լուծում. 1)} \quad (375 - 255) : 15 = \frac{120}{15} = 8, \text{ Լուծ:}$$

$$2) \quad (375 - 255) : 15 = (375 : 15) - (255 : 15) = 25 - 17 = 8$$

Արդյունքները նույն են:

Ցերկու թիվերի տարբերությունը գործվե թիվի վրա բաժանելու համար, կարելի յե այդ թիվի վրա առանձին-առանձին լիդ ապա գումարել ստացված գումարելիները:

բաժանել նվազելին ու հանելին յեզ առաջին բանորդից հանել յերկորդ բանորդը:

$$\text{Այդ արտահայտենք տասերով: } \frac{a-b}{c} = \frac{a}{c} - \frac{b}{c}$$

Դիտողություն. Գումարի և տարբերության բաժանումը վորհե ամբողջ թվի վրա այդ յեղանակով կտոտել հարմար և միայն այն գեպօւմ, յերբ գումարելիները կամ նվազելին ու հանելին այդ թվի վրա բաժանվում են առանց մացորդու:

§ 19. Բաժանում միավորով յեզ բուներով արտահայտվող բիթը

Յեթե համեմատելու լինենք հետեւյալ լիրկութվերը, 541 և 5410, կտեսնենք, վոր յերկրորդն առաջնից մեծ և 10 անգամ, վոր առաջին թվի հարյուրավորների կարգի միավորները յերկրորդ թվում հանդես են գալիս իբրև հազարավորների կարգի միավորներ, առաջին թվի տասնավորները յերկրորդ թվում՝ իբրև հարյուրավորներ, առաջին թվի առաջին կարգի միավորները՝ յերկրորդ թվում՝ իբրև յերկրորդ կարգի միավորներ: Ուրիշ խոսքով, առաջին թիվը պետք է բազմապատկել 10 անգամ, յերկրորդ թիվը ստանալու համար:

Յեթե այդ թվերը դասավորենք մեծության կարգով՝ նախ 5410-ը և հետո 541-ը, կնկատենք, վոր յերկրորդ թիվն առաջինից փոքր և 10 անգամ, այդ ցույց տալու համար բավական ե առաջին թիվը բաժանել 10-ի վրա, կստանանք յերկրորդ թիվը. հետեւապես դիրոյնվ վերացող ամբողջ թիվը 10 անգամ փոքրացնելու համար բավական է այդ թվի միջից մի զերո վերացնել:

Թիվը 100-ի վրա բաժանելու համար, պետք ենախ բաժանել 10-ի վրա և ապա ստացված քանորդը կրկին բաժանել 10-ի վրա (վերջից 2 զերո ավելացնելով): Նման ձևով 1000-ի, 10 000-ի, և մեկով ու զերոներով վերջացող ուրիշ թվերի վրա բաժանելու համար պետք է տված թիվը հաջորդաբար բաժանել 10-ի վրա:

$$\begin{aligned} 1) \quad & 4\,513\,000 : 100 = (4\,513\,000 : 10) : 10 = 451\,300 : 10 = \\ & = 45\,130; \\ 2) \quad & 356\,000 : 1000 = (356\,000 : 10) : 10 : 10 = (356\,000 : 10) : 10 = \\ & = 3560 : 10 = 356 \end{aligned}$$

Բերված որինակներում բաժանելին վերջանում է զերոներով, իսկ բաժանարարն արտահայտված է միավորով և զերոներով: Բաժանելին կարելի յեր բաժանելիի վերջից միանգամից ջնջել այնքան զերո, վորքան զերոները ունի բաժանարարը: Բաժանումը հնարավոր յեղավ կատարել առանց մացորդի, վորովնետ բաժանելին վերջում այնքան զերոներ ունի, վորքան բաժանարարը, կամ ավելի:

Զերոներով վերջացող թիվը մեկից ու զերոներից բաղկացած թիվի գրա բաժանելու համար, պետք է բաժանելիի վերջից ջնջել այնքան զերո, վորքան կա բաժանարարում:

§ 20. Զերոյով վերջացող թիվի բաժանումը

Դորձարանի որական արտադրանքի արժեքը գնահատվում է 128 000 ռ. Դորձարանն որական տալիս է 400 և չուզուն: Գտնել 1 և չուզունի սիջին արժեքը:

Լուծում. Հարկավոր է 128 000-ը բաժանել 400-ի վրա, լուծումը հեշտացնելու համար կարող ենք բաժանելին և բաժանարարը փոքրացնել 100 անգամ, դրանից քանորդը չի փոխվի.

$$128\,000 : 400 = 1280 : 4 = 320 \text{ ռ.}$$

Զերոներով վերջացող բաժանելիից ու բաժանարարից բանորդ ստանալու համար կարելի յե գրանց վերջից հավասար թվով զերոներ ջնջել: Դրանից բանորդը չի փոխվի:

1. Գտնել 651 : 217 քանորդը:

Լուծում. Մենք բաժանում ենք այն թվերը միան, վորոնք կարելի յե բաժանել բազմապատկման աղյուսակի ոգնությամբ: Այդ պատճառով բաժանելիի բարձր կարգի միավորները բաժանում ենք բաժանարարի բարձր կարգի միավորների վրա: Բերված որինակում 6-ը բաժանում ենք 2-ի վրա և ստանում՝ 6 : 2 = 3, այսինքն՝ 651 : 217 = 3:

Ստուգելու համար բաժանարարը բազմապատկում ենք քանորդով:

$$217 \cdot 3 = 651$$

Յէթե բաժանելիի առաջին թվանշանով արտահայտված թիվը փոքր և բաժանարարի առաջին թվանշանով արտահայտված թիվը, այդ գեղցում անջատում ենք բաժանելիի առաջին յերկու թվանշանները և բաժանում բաժանարարի առաջին թվանշանով արտահայտված թիվը վրա:

2. 20 595 : 4119 = 5

Եյսակ բաժանում էնք 20-ը 4-ի վրա Յիթե պարզի, վոր այդ բաժանումից ստացվող քանորդի ու բաժանարարի պատաղակալը մեծ և բաժանելիից, առա մեկ միավորով պակասեցնում ենք քանորդը և կրկին ստուգում: Այդ շարունակվում է այնքան ժամանակ, մինչև քանորդի թիվը բաժանարարի բաղմապատկելով առաջնում և այնպիսի արտադրյալ վորը կամ փոքր և կամ հավասար և բաժանելիին: Միանի՛ քանորդ ստանալու համար բաժանման այս յեզանակը պահանջում է, վոր բաժանելիին այնքան թվանշան ունենա, վորքան բաժանմարը (չեթե բաժանելիի առաջին թվանշանն ավելի մեծ թիվ և արտահայտում, քան բաժանարարի առաջին թվանշանը), կամ մեկ թվանշանով ավելի (չեթե բաժանելիի առաջին թվանշանի արթվանշանը թիվը ավելի փոքր և, քան բաժանարարինը):

Կա մի յեզանակ ևս, վորը թույլ և տալիս վորոշելու բաժանման այն գեղցերը, յերբ քանորդում միանի՛ թիվ և ստացվում:

Տված և յերկու թիվ՝ բաժանելին և բաժանարարը: Բաժանարարի վերջում աջ կողմից ավելացնենք մի զերո: Ստանում ենք մի նոր թիվ, վորը բաժանարարից 10 անգամ մեծ է: Յեթե այդ նոր թիվը բաժանելիից մեծ լինի, առա տված յերկու թիվը բաժանումից ստացած քանորդը միանի՛ թիվ կրկնի, իսկ յեթե փոքր լինի՝ բաղմանիշ:

Եյս հատվածի որինակներից ստացվեցին միանի՛ քանորդներ, քանի վոր
2170 > 651 + 41 190 > 20 595

Միանի՛ հանուզ ստանուած համար եաւկազու և բաժանելիի առաջին թվանշանի արտահայտած թիվը բաժանել բաժանարարի առաջին թվանշանի արտահայտած թիվ վրա Բաժանումից հետ պետք և միանի՛ հանուզը բազմապատկել բաժանարարով

իվ ստանու բաժանելիի: Յերե արտադրյալն ավելի մեծ և բաժանելիից, ապա անհրաժեշտ, և խառով պակասեցնել մեկ միավորով: Այդ շարունակելու յև այնտեղ ժամանակ, մինչեւ արտադրյալը հավասարվի բաժանելիին: Յերե բաժանուամից հետ ստացվի մնացար, ապա զա պետք և ավելի փոքր լինի բաժանարարից:

Այն դեպիում, յերբ բաժանելիի առաջին թվանշանի արտահայտած թիվը փոքր և բաժանարարի առաջին թվանշանի ցույց տված թիվը, վեցնում են բաժանելիի առաջին յեկու թվանշանով արտահայտած թիվը չեզ բաժանում:

Միշտ հնարավոր չի անմնացորդ բաժանում կատարել:

1. Հայրը վորդուն 2 ռ. տալով ուղարկեց ելեկտրական լամպեր զնիլու: Խանութում կայի՛ միայն 75 կոպեկանոց բամպեր: Ծղան քանի՛ լամպ կարող եր զնել և վորքով դրամ կմնար զնումից հետո:

Լուծում. 200-ը բաժանելով 75-ի վրա՝ քանորդում կըստանանք 2 և կմնա 50 կոպ. չծախսված դրամ: Աւրեմն, այդ տղան կարող եր յերկու ելեկտրական լամպ զնել և յուր տված դրամից 50 կոպ. յետ ստանալ: Այդ կլինի 200-ը 75-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը:

Սահմանում. Յերե բաժանելիի ամբողջ թվով չի բաժանվում բաժանարարի վեա, ապա բաժանելիի յեզ մյուս կողմից բաժանարարի ու խառովի արտադրյալի տարբերությունը կոչվում և մնացորդ:

Դիտողություններ. 1. Մնացորդը միշտ պետք և փոքր լինի բաժանարարից:

2. Կարելի յե ասել, վոր բաժանելիին բաժանարարի վրա անմնացորդ բաժանելու դեպքում, մնացորդը հավասար և զերոյի:

Ստուգենք առաջին խնդրի լուծումը. յերկու լամպերին վճարվեց 1 ռ. 50 կոպ. յիթե զրան ավելացնենք մնացորդը՝ 50 կոպ., կոտացվի 2 ռ.:

Ստուգումը դրինը ավելի կարճ:

75 . 2 + 50 = 200 կոպ. = 2 ռուբ.

Այստեղ 200-ը բաժանելին ե, 75-ը՝ բաժանարարը, 2-ը՝ քա-
նողը և 50-ը՝ մնացորդը: Մնացորդով բաժանման բոլոր դեպ-
քերի համար կանոնն այս ե.

Բաժանելին հավասար ե բաժանարարի յեզ բանորդի ար-
տագրյալին՝ ավելացրած մնացորդը:

Տառային արտահայտությունը հետեւյալն ե. ա=բզ+օ; վորտեղ ա-ն
բաժանելին ե, մ-ն՝ բաժանարարը, զ-ն՝ քանորդը, օ-ն՝ մնացորդը:

Նույն կանոնը յերբեմն կարգում են ուրիշ ձևով:

Բաժանելին առանց մնացորդի հավասար ե բաժանարա-
րի յեզ բանորդի արտագրյալին:

Տառային արտահայտությունը հետեւյալն ե. ա-օ=բզ, վորտեղ ա-ն
բաժանելին ե, մ-ն՝ բաժանարարը, զ-ն՝ քանորդը, օ-ն՝ մնացորդը:

2. $\frac{135}{12}$ -ը տալիս ե 11 քանորդը և 3 մնացորդը, կամ
 $(135-3)=12 \cdot 11$:

Ետ հեշտ ե քանորդը և մնացորդը գտնել այն դեպքերում,
յերբ վորևե թիվ բաժանում ենք մեկով և զերոներով արտա-
հայտվող թիվի վրա:

3. Դանել հետեւյալ թվերի քանորդն ու մնացորդը:

1) 87 536 : 1000, 2) 127 531 : 10 000

Լուծում. 1) 87 536 = 87 . 1000 + 536

Քանորդ ստացվեց 87 և մնացորդ՝ 536: Միևնույն ար-
դյունքը կստացվի, յեթե հազարավորները ստորակետով կամ
գծով անջատենք ստորին կարգերի միավորներից:

87 536 = 87'536

Զախ կողմում կստացվի քանորդը՝ 87, իսկ աջ կողմում
մնացորդը՝ 536:

Յերկրորդ որինակում թիվը բաժանում ենք 10 000-ի վրա:
Քանորդը գտնելու համար պետք է բաժանելիի մեջ անջատենք
տասնազարավորները:

127 531 = 12'7531

Քանորդը հավասար է 12-ի և մնացորդը՝ 7531-ի:

Մի բիվ մեկով ու զերոներով արտահայտված բվի վրա
բաժանելիս, բանորդը յեվ մնացորդը գտնելու համար պետք է
բաժանելիի մեջ աջ կողմից անջատել այնքան բվանում, զոր-
քան բաժանարարի վերջում զերոներով կան: Սակայն բիվը, վոր ար-
տահայտվում է անջատումից հետո մնացած բվանումներով,
որուց ե տալիս բանորդը, իսկ անջատված բվանումները՝ մնա-
ցորդը:

§ 23. Մնացորդի
փոփոխությունը

1. Ավտոմոբիլ գնելու համար գործարանը հատկացրեց
48 700 ռ., ամեն մեկը նստեց 8000 ռ.: Քանի ավտոմոբիլ գնվեց
և վորքան դրամ մնաց:

Լուծում. Հարկավոր ե 48 700-ը բաժանել 8000-ի վրա,
քանորդը կստացվի 6, իսկ մնացորդը՝ 700:

Կրճատ արտահայտման համար թե բաժանելիից և թե բա-
ժանարարից կարելի յեւ հավասար քանակի դերոներ չնշել: Քա-
նորդը չի փոխվի, յեթե բաժանելին և բաժանարարը փոքրաց-
նենք 100 անգամ, կստացվի 487 : 80: Քանորդը գարձյալ կլինի
6, բայց մնացորդը՝ 7: Այդ փոքրացավ 100 անգամ:

Այս որինակը լուծելիս պարզվում է՝ հետեւյալ կանոնը.

Բաժանելին ու բաժանարարը միենալուց բվով բազմա-
պատկելիս կամ նույն բվի վրա բաժանելիս, մնացորդն ել
բազմապատկում ե նույն բվով կամ բաժանվում նույն բվի
վրա քանորդը, սակայն, չի փոխվում:

§ 24. Բաժանման
այն դեպքը, երբ
բանորդը բազմա-
նիու բիվ ե

անկյուն):

1. 21 828-ը բաժանել 642-ի վրա: Գրության ձևն այս ե.

$$\begin{array}{r} 21\ 828 \\ - 1\ 926 \\ \hline 2\ 568 \\ - 2\ 568 \\ \hline \end{array}$$

Տանը բաժանման մի որինակ եօւ
2. 37 943 491 բաժանել 943-ի վրա.
Լուծում.

$$\begin{array}{r} 37\ 943\ 491 \\ - 37\ 72 \\ \hline 223 \\ - 223 \\ \hline 0 \\ - 2234 \\ - 1886 \\ \hline 3489 \\ - 2829 \\ \hline 6601 \\ - 6601 \\ \hline 0 \end{array}$$

Այս որինակում առաջին մասորդին՝ 22-ին ավելացնելով բաժանելիի մի թանգանը, սուսացանք 223, վորը չի բաժանվում 943-ի վրա։ Այսպիսի զետքերում քանորդում նշանակվում է դերո, այդպիս ել արինք, վորից հետո միայն մասորդին ավելացնում ենք բաժանելիի հետեւալ թվանշանը։

Մի բիգ մասուսի վրա բաժանելու համար, բաժանելիից (ակած ձափից) պետք է անշատել աշնան բժանւան, վոր բաժանաւարի վրա բաժանելիս առաջի միանիք բիգ։ առաջին մասորդին աչ կողմից պետք է առելացնել, էամ, ինչու ոռոգուարա առում են, ցած բերել բաժանելիի հետեւյալ թվանը յև այսպիս կազմել յերեսոց բաժանելիին։ Յերե ազգ վերցին բաժանելին բաժանենք բաժանաւարի վրա, կատացին անհայտ բանուցի յերեսոց թվանը նաև, իսկ մնացողը կլինը յերեսոց մնացողը, վորի հետ յեփս պետք է նույն կերպ վարվել, ինչպիս առաջին մնացողի հետ յև առիւ շարունակարար, մինչեւ սպառվեն բաժանելիի բոլոր թվանւանները։ Վերցին մնացողը կլինի սփած յարկու թվերի բաժանումից առաջացած վերշնական մնացողը։

V. ԳՈՐԾՈՂՈԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԴԸ: ՓԱԿԱԳՆԵՐ

Տ 1. Միեմասիկական նշանները ցույց են տալիս, թե առած թվերով ինչ գործողություններ են կարգով պետք ե կատարել։ Մոթեմատիկական նշանների միջոցով գրավոր արտահայտությունը պետք ե լինի պարզ ու վորոշ

Մաթեմատիկական նշանները ցույց են տալիս, թե առած թվերով ինչ գործողություններ են կարգով պետք ե կատարել։ Մոթեմատիկական նշանների միջոցով գրավոր արտահայտությունը պետք ե լինի պարզ ու վորոշ

Ամենակարևորն այն է, վոր զրածը բոլորովին առիթ չուաքանակությունների կարգը։

1. Միեմասիկան առտիճանի գործողությունները կատարվում են այն կարգով, վորով գրած են։

$$1) 63 - 18 + 15 - 40 + 8 + 1 = 29 \quad 2) 80 : 2 \cdot 5 : 4 : 10 = 5$$

Գործողությունների կարգը վորունք և ապա հաշվենք.

$$1) 63 - 18 + 15 - 40 + 8 + 1 = 29 \quad 2) 80 : 2 \cdot 5 : 4 : 10 = 5$$

$$63 + 15 - 40 + 8 - 18 + 1 = 29 \quad 80 : 2 \cdot 5 : 10 : 4 = 5$$

$$63 - 40 + 8 - 18 + 15 + 1 = 29 \quad 80 : 2 : 10 : 5 : 4 = 5$$

$$63 + 1 + 15 - 18 - 40 + 8 = 29 \quad 80 : 10 : 2 \cdot 5 : 4 = 5$$

$$63 - 18 - 40 + 1 + 15 + 8 = 29 \quad 80 : 10 : 5 : 2 : 4 = 5$$

Բոլոր գեպքերումն ել արդյունքը նույնն է։

2. Սակայն լինում են զեպքեր, յերբ միեմասինի գործողությունները կատարելիս ուզում են վորուն գործողությունների կարգը։

$$1) 72 - 45 - 13 = 14, \text{ բայց } 2) 72 - (45 - 13) = 40$$

Առաջին որինակում նախ հանեցինք 45, իսկ հետո՝ 13, Յերկրորդ որինակում 45-ից նախ հանեցինք 13, հետո 72-ից հանեցինք զրանց առընթերությունը։ Այսպիսի գեպքերում գործողությունների կարգը ցույց տալու համար, բացի գործողության նշաններից, ուզում են նաև վակագներով։

Փակագները լինում են յերեք տևակ. 1) պարզ ($15 - 7$) . 7, 2) ուղղակյուն կամ քառակաւոր [$5 + 5 \cdot (12 - 3)$] . 2, 3) ձևավոր $\{(8 + 7) \cdot [(5 + 3) \cdot 2 - 4]\} . 5$

Փակագներով հաշվելիս հարկավոր է հետզհետեւ բանակ զրանք, այսինքն կատարել գործողություններ, վորուց ցույց են տված փակագների ներսում, և փակագները վորունքներու ստացված արդյունքներով։

Դիսողաւրյուն. Փակագները բանակու հարմար և ական ներքին փակագներից։

$$3. \text{ Դրեւ և հաշվել } 43 - ից հանել 13-ի և 8-ի զումարը,$$

$$1) ուծում, $43 - (13 + 8) = 43 - 21 = 22$$$

Յեթե այս արտահայտությունը գրենք առանց փակագծերի, կաղավաղի խնդրի իմաստը, այսինքն կստանանք՝ $43 - 13 + 8 = 38$

Մինույն աստիճանի գործողությունների համար փակագծերից ոգտվելն անհրաժեշտ և այն դեպքերում, յերբ գումարում կամ հանում ենք ցույց տված գործողությունների արդյունքները, առանց կատարելու գործողությունները:

4. Գրել և հաշվել՝

1) 15-ին ավելացնել 7-ի, 13-ի և 8-ի գումարը.

$$15 + (7 + 13 + 8) = 15 + 28 = 43$$

2) 40-ից հանել 19-ի և 12-ի տարբերությունը.

$$40 - (19 - 12) = 40 - 7 = 33$$

3) 8-ին ավելացնել 71-ի և 62-ի տարբերությունը.

$$8 + (71 - 62) = 8 + 9 = 17$$

§ 2. Տարբեր ասինանի գործողությունների կարգին վերաբերող կանոնը

Մինույն աստիճանի գործողությունների կարգին վերաբերող կանոնը չի տարածվում տարբեր աստիճանի գործողությունների վրա: Այդ գործողությունների համար կանոնը հետեւալն է.

Բարձր ասինանի գործողությունները կատարվում են ավելի վաղ, քան սուրբ ասինանի գործողությունները:

1. Գտնենք, թե վորքան և $72 - 8 \cdot 3$, թեթև գործողությունները կատարենք այն կարգով, ինչպես դրված են, ապա $72 - ից$ պետք է հանել $8 \cdot 3$ և արդյունքը բազմապատկել $3 - ով$: Բայց գործողությունների կարգի կանոնի համաձայն այն դեպքերում, յեթե կան տարբեր աստիճանի գործողություններ, ապա բարձր աստիճանի գործողությունները կատարվում են առաջին հերթին: Այդ հանդամանքն ազատում է, բազմապատկում և բաժանում յեղած դեպքում, փակագծեր գրելու անհրաժեշտությունից:

Զենք գրում՝ $72 - (8 \cdot 3)$, այլ գրում են $72 - 8 \cdot 3 = 48$

Այն դեպքերում, յերբ տարբեր աստիճանի գործողությունների կարգը կարող է սխալ մեկնարանվել, ոգտվում են փակագծերով: Այսաեղ, ինչպես և մի աստիճանի գործողություն-

ների ժամանակ, փակագծերի մեջ զբարձր են նշանակած և վոչ է կերպնական հաշվումների արդյունքները:

2. Ցույց տալ և հաշվել՝ $5 \cdot 6$ թվերի արտադրյալի և $5 \cdot 3$ թվերի արտադրյալի զումարի բաժանումը նույն արտադրյալ: Նորի տարբերության վրա՝

$$(5 \cdot 6 + 5 \cdot 3) : (5 \cdot 6 - 5 \cdot 3) = (30 + 15) : (30 - 15) = 45 : 15 = 3$$

Յեթե այս արտահայտությունը զրկի առանց փակագծերի, կստացվի ուրիշ և սխալ արդյունք:

$$5 \cdot 6 + 5 \cdot 3 : 5 \cdot 6 - 5 \cdot 3 = 30 + 15 : 15 = 48 - 15 = 33$$

Դիսուրություն. Բաժանման նշանը կարելի յե փախտինել կոտորակի գծով: Այդ գիծը փախտինում և նու փակագծին:

3. Բաժանել՝ $(15 + 25) : 5$: Այս առաջապերությունը կարելի յե և այլ կերպ զրի:

$$(15 + 25) : 5 = \frac{15 + 25}{5} = \frac{40}{5} = 8$$

VI. ԹՎԵՐԻ ԲԱԺԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Թվերի բաժանականությունը

Յերե գորեք ամբողջ թիվ մի ազ թիվ վրա բաւանվում և առանց մնացուցի, ապա առաջին թիվը կոչվում և յեւըօրդի

բազմավատիկ, իսկ յեւըօրդին ել՝ առաջին թիվ բաժանաւար:

1424-ը 4-ի բազմապատիկ է, իսկ 4-ն ել 1424-ի բաժանարարն է:

Դիսուրություն. Այսուհետեւ, յերբ այս գլուխը խոսելու վիճենք այն մասին, զոր մի թիվ բաժանվում և մյուսի վրա, ապա բարձր զեպքերում պետք է նկատի ունենար, զոր այդ բաժանվում և առանց մնացորդի:

Գրենք ամբողջ թվերի շարքն՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12...: Հայտնի յե, զոր թվերի այսպիսի շարքը կոչվում է բնական շարք:

Բնական շարքի ամեն մի թիվը բաժանել միավորի, նաև այն թիվի վրա, զոր հավասար և իրեն՝ բաժանելին:

Բնական շարքի բայուր թվերը կարելի յե բաժանել իրենց հավասար թվերի յեվ միավորի վրա:

Բնական շարքում կան այնպիսի թվեր, զոր նք բացի միավորից և իրենցից՝ ո նեն ուրիշ բաժանաբարներ են: Արենակ, 15-ը բաժանվում է 1-ի, 15-ի, 3-ի և 5-ի վրա: $15 : 1 = 15$, $15 : 3 = 5$, $15 : 5 = 3$,

Տ. Գումարի համեմութեաբ, գործ վեա հիմնած և բաժանականութեաբ, համեմութեաբ առաջանականութեաբ

Այս յեղանակները, փորոշով, առանց բաժանման դիմելու, կարելի յէ իմանալ, թե մի թիվ հանդիսանում է մյուսի բաժանմարար, կազմում են բաժանականության հատկանիշներ:

Բաժանականության հատկանիշների արտածումը հիմնվում է գումարի հատկայալ հատկությունների վրա:

I. Յերե գումարելիներն առանձին-առանձին բաժանվում են գորեվե թիվ վրա, առաջ գրանց գումարն ել բաժանվում ենույն թիվ վրա:

II. Յերե գումարելիներն բաժանվում են գորեվե թիվ վրա, բացի մեկ գումարելից, զոր չի բաժանվում այս թիվ վրա, առաջ այդ գումարելիների գումարն ել չի բաժանվում այդ թիվ վրա:

1. $20+30+700+50=800$: Այս գեղքում բոլոր գումարելիները բաժանվում են 10-ի վրա, և գումարը նույնական բաժանվում է 10-ի վրա:

2. $20+30+700+49=799$: Այս գեղքում գումարելիները բաժանվում են 10-ի վրա, բացի մեկ գումարելից (49), այն պատճառով գումարն ել չի բաժանվում 10-ի վրա:

Տ. 10-ի, 100-ի, 1000-ի վար բաժանութեաբ, բաժանականութեաբ համեմութեաբ

Զերոյական վերը՝ $10, 50, 90, 100, 400, 1000, 3500$ —բաժանվում են 10-ի վրա:

Հետեւալ թվերը՝ $7, 23, 108, 51916$ —չեն բաժանվում 10-ի վրա:

10-ի վար բաժանվում են այն թվեր, զորոնի վերջանում են զերոյով:

Հետեւալ թվերը՝ $200, 800, 15000$ բաժանվում են 100-ի, խել 270, 420, 1730 չեն բաժանվում 100-ի վրա:

100-ի վար բաժանվում են այն թվեր, զորոնի վերջանում են յերեւ զերոյով:

1000-ի վար բաժանվում են այն թվեր, զորոնի վերջանում են յերեւ զերոյով:

Սահմանական թվեր, փառոնի բազմապատիկ են 2-ին, կոչվում են զույգ թվեր: Մնացած թվերը կազմում են կենականի համեմության համականիները

Տ. 2-ի յեզ 5-ի վար բաժանվող թվերի բաժանականության համեմությունները

Նշանակում է, զոր տասնյակներից կազմված ամեն թիվ պետք և բաժանվի 2-ի և 5-ի վրա, խել քանի զոր տասնյակներից կազմված թվերը վերջանում են զերոյով, ուստի թվերի վերջում զերոն ցույց է տալիս, զոր զրանք բաժանվում են 2-ի և 5-ի վրա:

1) $470 : 2 = 235, \quad 5800 : 5 = 1160$

Եեթե թիվը չի վերջանում զերոյով, բայց ուզում ենք իմանալ՝ արդյոք բաժանվելու և զա 2-ի կամ 5-ի վրա, այդ գեղքում թիվը վերածում ենք յերկու զումարելիների, զորոնցից առաջինը պետք է կազմված լինի տասնյակներից, ուրիշ խոսքով, վերջանակ զերոյով, այսինքն՝ պետք է բաժանվի թիվ 2-ի և թիվ 5-ի վրա:

2) $385 : 5 = (380 + 5) : 5 = 380 : 5 + 5 : 5; \quad 385\text{-ը} \quad \text{բաժանվում} \quad \text{է} \quad 5\text{-ի} \quad \text{վրա:}$

3) $748 : 2 = (740 + 8) : 2 = 740 : 2 + 8 : 2; \quad 748\text{-ը} \quad \text{բաժանվում} \quad \text{է} \quad 2\text{-ի} \quad \text{վրա:}$

4) $928 : 5 = (920 + 8) : 5 = 920 : 5 + 8 : 5; \quad 928\text{-ը} \quad \text{չի} \quad \text{բաժանվում} \quad \text{5-ի} \quad \text{վրա}, \quad \text{զորովնետի} \quad \text{յերկրորդ} \quad \text{զումարելին՝} \quad 8\text{-ը} \quad \text{չի} \quad \text{բաժանվում} \quad 5\text{-ի} \quad \text{վրա:}$

5) $67 : 2 = (60 + 7) : 2 = 60 : 2 + 7 : 2; \quad 67\text{-ը} \quad \text{չի} \quad \text{բաժանվում} \quad 2\text{-ի} \quad \text{վրա:}$

Լուծումը կախում ունի թվի վերջին թվանշանից: Այսպիսով ստանում ենք 2-ի և 5-ի վրա բաժանվող թվերի բաժանականության հետեւալ հատկանիշները:

2-ի վրա բաժանվում են այն թվեր, զորոնք վերջանում
են զերօնի կամ զերչ թվանշանով (2, 4, 6, 8):

5-ի վրա բաժանվում են զերօնի կամ հնգով վերջացող
թվերը:

§ 5. 4-ի յեկ 25-ի
վրա բաժանվող
թվերի բաժանմանը՝
նույնականացնելու
հիմքները

100-ը բաժանվում է 4-ի և 25-ի վրա:
Նշումակում եւ, լրիվ հարյուրավորներից
կազմված (տասնավորներ և միավորներ
չունեցող ուրիշն և յերկու դերայով վեր-
ջացող) յուրաքանչյուր թիվ, ողաք և
բաժանվի 4-ի և 25-ի վրա:

$$1) 100 : 4 = 25, \quad 100 : 25 = 4, \quad 6200 : 4 = 1550, \quad 1750 : 25 = 68$$

$$2) 38 : 8 : 4 (3800 + 68) : 4 = 3800 : 4 + 68 : 4, \quad \text{այստեղից ուարդ-} \\ \text{պում ե, վոր 3868-ը կրամանվի 4-ի վրա:}$$

3868-ը վերլուծելով այնպէս, ինչպիս վարդեցինք նախորդ
հատկածում, կարող ենք պատկերացնել դա իրեն գումար յեր-
կու անպիսի գումարելիների, վորոնցից մեկը վերջանում է
յերկու զերոյով, ուստի և կրամանվի 4-ի և 25-ի վրա: Յեթի
յերկորդ գումարելին բաժանվի կամ չբաժանվի 4-ի և 25-ի
վրա, ապա զրանից ել կազմված կլինի ամբողջ թվի բաժանվելը
կոմ չբաժանվել 4-ի և 25-ի վրա:

$$3) 875 : 25 = (800 + 75) : 25 = 800 : 25 + 75 : 25, \quad \text{ուրեմն } 875-ը \\ \text{կրամանվի 25-ի վրա:}$$

$$4) 917 : 4 = (900 + 17) : 4 = 900 : 4 + 17 : 4, \quad 917-ը չի բա- \\ \text{ժանվի 4-ի վրա, փորոշեակ յերկորդ գումարելին՝ } 17-ը չի \\ \text{բաժանվում 4-ի վրա:}$$

$$5) 1343 : 25 = (1300 + 43) : 25 = 1300 : 25 + 43 : 25, \quad \text{ուրեմն } \\ 1343-ը չի բաժանվում 25-ի վրա:$$

4-ի վրա բաժանվում են այն թվերը, զորոնք վերջանում
են յերկու զերօնի, կամ զորոնց վերջին յերկու թվանշանների
առանձանած թվեր բաժանվում ե 4-ի վրա:

25-ի վրա բաժանվում են այն թվերը, զորոնք վերջանում
են յերկու զերօնի, կամ զորոնց վերջին յերկու թվանշանների
առանձանած թվեր բաժանվում ե 25-ի վրա, այսինքն 25-ով,
50-ով յեկ 75-ով վերջացող թվերը:

§ 6. 8-ի վրա բա-
ժանվող թվերի բա-
ժանականության
հասկանիւթյուրը

և 8-ի և 125-ի վրա, ուստի մի քանի հա-
զարավորների գումարն ևս բաժանվում

որինակ, $25\ 000 : 8 = 3125$:

$$1) 45\ 328-ը 8-ի վրա կը ախտնիվի:$$

Այդ թիվը վերածենք յերկու այսպիսի գումարելիների,
 $45\ 000 + 328, \quad 45\ 000 - 328$, $45\ 000 - 328$ -ը կրամանվի 8-ի վրա. $328 : 8 = 41$, հետեւ
պես ամբողջ թիվը ել $45\ 328$ -ը կրամանվի 8-ի վրա:

2) $16\ 242 : 8, \quad 16\ 242 = 16\ 000 + 242$: Բայց յերկորդ գու-
մարելին՝ 242 -ը չի բաժանվում 8-ի վրա, հետեւպես $16\ 242$ -ը
չի բաժանվի 8-ի վրա:

8-ի վրա բաժանվում են այն թվերը, զորոնք վերջանում
են յերեք զերօնի, կամ զորոնց վերջին յերեք թվանշանների
առանձանած թվեր բաժանվում ե 8-ի վրա:

1. 9 թվանշանով աբտահայտված թվերը
որինակ, 9, 99, 999 և այլն, բաժանվում
են 9-ի և 3-ի վրա:

Հետեւյալ թվերը՝ 10, 100, 1000, 10 000
կարող ենք վերածել գումարելիների ևստա-
նալ հետեւյալ աղյուսակը:

$$10 = 9 + 1$$

$$100 = 99 + 1$$

$$1000 = 999 + 1$$

$$10\ 000 = 9999 + 1$$

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր 1 միավորով և ուր-
վերջում գրած զերոներով արտահայտված թվերն 9-ի վրա բա-
ժանելիս մնացող սացվում ե 1:

2. Առենք թե ուզում ենք իմանակ, 4332 -ը բաժանվում է
9-ի վրա, թե վո՞չ:

$$\begin{aligned} 4332 = & 1000 + 1000 + 1000 + 1000 + \\ & + 100 + 100 + 100 + \\ & + 10 + 10 + 10 + \\ & + 2 \end{aligned}$$

Պատկերացնենք յուրաքանչյուր հոգարավորն իրեն 999+
+1, լուրաքանչյուր հարյուրավորը՝ 99+1 և յուրաքանչյուր
տասնավորը՝ 9+1, կստանանք.

$$\begin{aligned} 4332 = & 999 + 999 + 999 + 999 + 4 + \\ & + 99 + 99 + 99 + 3 + \\ & + 9 + 9 + 9 + 3 + \\ & + 2 \end{aligned}$$

999, 99, 9 գումարելիները բաժանվում են 9-ի և 3-ի վրա,
նշանակում են տվյալ թվի բաժանականությունն 9-ի և 3-ի վրա
կախված են այն հանգամանքից, թե այդ թվի բոլոր կարգերի
միավորների գումարը՝ $4+3+3+2=12$ բաժանվում է 9-ի և
3-ի վրա: 12-ը բաժանվում է 2-ի վրա, հետեւապես ամբողջ
թիվը ել կրածանվի 3-ի վրա: 12-ը չի բաժանվի 9-ի վրա,
հետեւապես 4332-ը 9-ի վրա չի բաժանվի:

3. 3510-ը 9-ի և 3-ի վրա բաժանվում է, թե վոչ
 $3+5+1=9$: 9-ը բաժանվում է 9-ի և 3-ի վրա, ուստի
3510-ն ել կրածանվի 9-ի և 3-ի վրա:

3-ի վրա բաժանվում են այն թվերը, վորոնց բաժանեն-
եի գումարը 3-ի վրա բաժանվում է:

9-ի վրա բաժանվում են այն թվերը, վորոնց բաժանեն-
եերի գումարը 9-ի վրա բաժանվում է:

4. իմացիք, հետեւալ թվերը 9-ի և 3-ի վրա բաժանվում
են թե վոչ:

1) 14 382, 2) 2760, 3) 1345

1) 14 382-ի թվանշանների գումարը 18 եւ Ուրիմ, 14 382-ը
կրածանվի 3-ի և 9-ի վրա:

2) 2760-ի թվանշանների գումարը 15 եւ Հետեւապես
2760-ը 9-ի վրա չի բաժանվի, բայց 3-ի վրա կրածանվի:
3) 4345-ի թվանշանների գումարը 13 եւ Հետեւապես 1345-ը
չի բաժանվի վոչ 3-ի և վոչ 9-ի վրա:

3-ի վրա բաժանվող թվերի բաժանականությունը վորոշե-
լիս կարելի լե թվանշանների գումարում բաց թողնել այն բո-
լոր թվերը, վորոնք բաժանվում են 3-ի վրա, նաև այն դուքար-
ները, վորոնք բաժանվում են 3-ի վրա:

9-ի վրա բաժանվող թվերի բաժանականությունը վորոշե-
լիս նկատի չեն առնվում այն թվերը և գումարելիները, վորոնք
բաժանվում են 9-ի վրա:

5. 865 417-ը բաժանվում է արդյոք 3-ի վրա:

Գտնենք այդ թվի թվանշանների գումարը՝ $8+6+5+4+$
 $+1+7$, 6-ը բաց թողնենք, իբրև 3-ի վրա բաժանվող թիվ, կա-
րելի յե բաց թողնել նաև $8+1-ի$ կամ $4+5$ գումարը, կմաս 7-ը՝
7-ը չի բաժանվում 3-ի վրա, հետեւապես ամբողջ թիվը եւ
865 417-ը չի բաժանվի 3-ի վրա:

6. 63 729 135-ը բաժանվում է արդյոք 9-ի վրա:

Գտնենք այդ թվերի թվանշանների գումարը՝ $6+3+7+$
 $+2+9+1+3+5$: Գումարելիս բաց թողնենք 9-ը և 6+3 ու
7+2 գումարելիները: Կմաս՝ $1+3+5=9$: Նշանակում է այդ
թիվը՝ 63 729 135-ը, կրածանվի 9-ի վրա:

Բնական շարքի թվերը բաժանվում են
§ 8. Պարզ յև
բարդ թվեր
յերկու խմբի. 1) պարզ թվեր և 2) բարդ թվեր:
Պարզ թվերը բաժանվում են միայն
միավորի յև իւնենց վեա:

Բարզ թվերը բաժանվում են վոչ միայն միավորի յև
իւնենց վրա, այլ ուրիշ թվերի վեա:

Բաժանականության հատկանիշներով հնարավոր եւ լինում
բնական շարքի թվերի մեջ նշել պարզ թվերը:

Գրենք բնական շարքի թվերի աղյուսակը 1-ից մինչև 100,
1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14,
15, 16, 17, 18..., 95, 96, 97, 98, 99, 100

Զնշենք բոլոր զույգ թվերը, սկսելով 4-ից: Հեշտ են նկա-
տել լուր թվերը ջնջվում են ամեն անգամ մեկը մեջ տալով:

Այժմ, բացի 3-ից, չնշենք այն բոլոր թվերը, վորոնք բաժանվում են 3-ի վրա: Զնշելու ինք բնական շարքի յուրաքանչյուրդ թիվը: Նույն ձևով հետզհետեւ կշնչենք բոլոր այն պարզ թվերը, վորոնք բաժանվում են 5-ի, 7-ի, 11-ի և մյուս պարզ թվերի վրա: Վորոնք նշված են վերեի աղյուսակում:

$\frac{1}{8}$ -ից, $\frac{400}{8}$ կոտորակը մեծացնենք 5 անգամ: Դրա համար բավական ե կոտորակի համարիչը բազմապատկել 5-ով:

$$400\text{-}b \cdot \frac{5}{8} \text{-ը } հավասար է՝ \frac{400 \cdot 5}{8} = 50 \cdot 5 = 250$$

Ուրեմն հարկավոր ե 250 աղյուս:

2. Նույն ձևով գտնենք $280 \cdot b \cdot \frac{5}{8}$ մասը, այսինքն անհրաժեշտ լուծույթի քանակը:

$$280\text{-}b \cdot \frac{1}{8} \text{ հավասար է՝ } \frac{280}{8} \text{-ի:}$$

$$280\text{-}b \cdot \frac{5}{8} \text{-ը } հավասար է՝ \frac{280 \cdot 5}{8} = 35 \cdot 5 = 175 \text{ լ:}$$

5. Գտնել՝ 1) $50\text{-}b \cdot \frac{3}{8}$ -ը, 2) $\frac{8}{4} \cdot b \cdot \frac{5}{6}$ -ը, 3) $2\frac{8}{21} \cdot b \cdot \frac{3}{4}$ -ը:

Լուծում. 1) $50\text{-}b \cdot \frac{1}{8} = \frac{50}{8}$

$$50\text{-}b \cdot \frac{3}{8} = \frac{50 \cdot 3}{8} = \frac{25 \cdot 3}{4} = \frac{75}{4} = 18\frac{3}{4}$$

$$2) \frac{3}{4} \cdot b \cdot \frac{1}{6} = \frac{3}{4 \cdot 6} = \frac{1}{4 \cdot 2} = \frac{1}{8}$$

$$\frac{3}{4} \cdot b \cdot \frac{5}{6} = \frac{3 \cdot 5}{4 \cdot 6} = \frac{5}{4 \cdot 2} = \frac{5}{8}$$

$$3) 2\frac{8}{21} \cdot b \cdot \frac{1}{4} = \frac{50}{21} \cdot b \cdot \frac{1}{4} = \frac{50}{21 \cdot 4} = \frac{25}{21 \cdot 2} = \frac{25}{42}$$

$$2\frac{8}{21} \cdot b \cdot \frac{3}{4} = \frac{50}{21} \cdot b \cdot \frac{3}{4} = \frac{50 \cdot 3}{21 \cdot 4} = \frac{25 \cdot 1}{7 \cdot 2} = \frac{25}{14} = 1\frac{11}{14}$$

Մի թվի մասը գտնելու համար հարկավոր ե տվյալ թիվը փոքրացնել այնքան անգամ, վորքան միավոր և պարունակում այն կոտորակի հայտարարը, վորքը ցույց ե տալիս ամբողջի անհայտ մասը: Ստացված արդյունքը հարկավոր ե մեծացնել այնքան անգամ, վորքան միավոր ունի այդ կոտորակի համարիչը:

§ 2. Գումար թիվը
յերբ սված և նրա
մասը

Մենք սովորեցինք ինդիքներ լուծել թվի մասը գտնելու վերաբերյալ: Այժմ լուծենք հակադարձ խնդիրը՝ գտնել թիվը, յերբ սված և նրա մասը:

1. Հատուկ տեսակի պողպատի բաղադրության $\frac{1}{25}$ մասը նիկել եւ վորոշեցեք քաշն այն պողպատի, վորք ստանալու համար կործադրված և 20 կգ նիկել:

Լուծում. x տառով $\frac{5}{12}$ նշանակենք պողպատի անհայտ քաշը
Այդ թվի $\frac{1}{25}$ մասը կազմում է նիկելը. Անհայտ x -ի $\frac{1}{25}$ մասը
նշանակենք $\frac{1}{25}x$:

$$\text{Խնդրի պայմանը} \quad \text{գրենք} \quad \frac{1}{25}x = 20 \quad \text{կգ} \quad \text{բանաձեռվէ:}$$

Միանդամայն պարզ ե, վոր x քաշը 25 անգամ ավելի կլի-
նի, քան $\frac{1}{25}x$:

$$x = \frac{25}{25}x \quad \text{կիլոգրամ, } x = 20 \cdot 25 = 500 \quad \text{կգ:}$$

Խնդրի լուծումն ավելի կարճ կզրկի այսպես.

$$\frac{1}{25}x = 20, \quad x = 20 \cdot 25 = 500 \quad \text{կգ:}$$

Այս խնդրում հայտնի մասն արտահայտված եր ամբողջ կիլոգրամներով:

Այժմ լուծենք մի ուրիշ խնդրի, վորտեղ հայտնի մասն արտահայտված ե կոտորակային թվով:

2. $\frac{1}{5}$ մ յերկարության յերկաթաճողի քաշը $\frac{8}{4}$ կգ ե,
վերքան ե այդ ձողի 1 մետրի քաշը:

$$\text{Լուծում. } \frac{1}{5}x = \frac{8}{4} \quad \text{կգ, } x = \frac{5}{8}x, \quad x = \frac{8 \cdot 5}{4} = \frac{15}{4} \quad \text{կգ} = 3\frac{3}{4} \quad \text{կգ}$$

§ 3. Թվի գտնելը,
յեր հայտնի յենա-
մասը՝ արտահայ-
տված վորեփի կոտո-
րակով

1. Կոլտնտեսականների մի բրիգադ վարեց
25 հա հողամաս: Այդ կազմում եր առա-
ջադրված պլանի $\frac{5}{12}$ մասը՝ Ընդամենը
վերքան տարածություն պետք ե վարեց
բրիգադը:

Լուծում. Բրիգադին տված առաջադրանքն ընդունենք իրրե վորոնելի թիվ: Կատարած աշխատանքը կազմում ե առա-
ջադրանքի միայն մի մասը: Հարկավոր ե խմանալ, թի վերքան
եր ամբողջ առաջադրանքը: Մեզ անհայտ առաջադրությունը նշա-
նակենք x -ով և գտնենք դրա մի մասը:

$$\text{Անհայտ } x - \frac{5}{12}x \quad \text{նշանակենք} \quad \frac{5}{12}x$$

$$\rightarrow \quad \rightarrow \quad \frac{1}{12}x \quad \rightarrow \quad \frac{1}{12}x$$

Այսպիսով, $\frac{5}{12}x$ -ը կազմում է 25 հա. $\frac{1}{12}x$ -ը կլինի 5 ան-
գամ պակաս, այսինքն՝ 5 հա, Գրենք՝ $\frac{1}{12}x = 5$ հա, Այդ
բրիգադին տրված ամբողջ առաջադրությունը, ամ ողջ x -ը, 12
անգամ ավելի յե լուր մը տասներկուերորդական մասից:
Գտնենք այն:

$$x = 5 \cdot 12 = 60 \quad \text{հա}$$

Խնդրի լուծումը կարելի յե ավելի կարճ գրել, այսպիս:

$$\frac{5}{12}x = 25, \quad \frac{1}{12}x = \frac{25}{5}, \quad x = \frac{25 \cdot 12}{5} = 60 \quad \text{հա}$$

2. Գտնել x -ը, յեթե հայտնի յե, $\frac{5}{16}x^3 = \frac{4}{5}$ հա:

Լուծում. $\frac{1}{16}x^3 = 3$ անգամ փոքր ե $\frac{3}{16}x^3$ ից:

$$\frac{1}{16}x^3 = -\frac{4}{5}, \quad x = \frac{16}{5}x^3 = \frac{5}{5 \cdot 3} \cdot 16 = \frac{4 \cdot 16}{5 \cdot 3} = \frac{64}{15} = 4\frac{4}{15} \quad \text{հա:}$$

Ամբողջը գտնելու համար—յերբ տված ե ամբողջի վորեց
մասին համապատասխանող թիվը և այն կոտորակը, վորը ցույց
ե տալիս, թե ամբողջի վոր մասն ե կազմում տված թիվը—հար-
կավոր ե տված թիվը փոքրացնել այնքան անգամ, վորը ան
միավոր պարունակում ե կոտորակի համարիչը: Վտացված ար-
դյունքը պետք ե մեծացնել այնքան անգամ, վորքան միավոր
պարունակում ե նույն կոտորակի հայտարարը:

X. ՀԱՍՏԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԶԱՐԱԿՈՒՄԸ

§ 1. Կոտորակի
բազմապատկանն
ամբողջ բփով

1. Ավտոմոբիլը 1 կմ անցնելով սպասում ե
 $\frac{4}{5}$ կգ բենզին: Վորքան բենզին կդնա 6 կմ
անցնելու դեղքում:

Լուծում. 1 կմ ճանապարհի համար հարկավոր ե $\frac{4}{5}$ կգ
բենզին, յերկրորդ կիրամետրին՝ դարձյալ $\frac{4}{5}$ կգ, յերրորդ չոր-
րորդ, հինգերորդ, վեցերորդ կիլոմետրին՝ յուրաքանչյուրին
 $\frac{4}{5}$ կգ:

$$\text{Հնդամենը հարկավոր ե. } \frac{4}{5} + \frac{4}{5} + \frac{4}{5} + \frac{4}{5} + \frac{4}{5} + \frac{4}{5} = \frac{24}{5},$$

կամ $\frac{4}{5}$ կզ բենդին:

Մենք պետք ե. $\frac{4}{5}$ -ն իրեւ գումարելի կրկնենք 6 անգամ,
այսինքն $\frac{4}{5}$ կոտորակը մեծացնենք 6 անգամ: Այդ կարող ենք
բազմապատկման միջոցով կրճատ գըել այսպիս:

$$\frac{4}{5} \cdot 6 = \frac{24}{5}$$

Այստեղ մենք ունենք կոտորակն ամբողջով բազմապատկե-
լու դեպքը:

Կոտորակն ամբողջ թվով բազմապատկելու համար պետք է
համարիչը բազմապատկել ամբողջ թվով յեվ ստացված ա-
ռագրյալը բաժանել հայտարարի վրա:

Այդ կանոնն արտահայտենք տառերով.

$$\frac{a}{b} \cdot m = \frac{a \cdot m}{b}$$

2. Լուծենք հետևյալ որինակները.

$$1) \frac{1}{7} \cdot 7, \quad 2) \frac{4}{7} \cdot 7$$

$$\text{Լուծում. } 1) \frac{1}{7} \cdot 7 = 1$$

Այս բազմապատկման համար առանձին բացատրության
կարիք չկա: Միավորը 7 մասի բաժանելով, այդ մասերից յու-
րաքանչյուրը 7 անգամ կրկնելով, կատարում ենք փոխար-
ձարար հակադարձ յերկու գործողություններ և նորից ստանում
միավոր:

$$2) \frac{4}{7} \cdot 7 = 4$$

Բաժանելով 4-ը 7-ի վրա և քանորդը 7-ով բազմապատկե-
լով, ստանում ենք դարձյալ 4:

Դիտողության Յերե կոտորակային թիվը բազմապատկում ենք
կոտորակի հայտարարին. հայտարար թվով արտադրյալում ստացվում է
կոտորակի համարիչին հավասար թիվ: Նման դեպքերում պետք է արդյունքը
միանգամից դընք:

3. Ավտոմոբիլը մեկ վայրկյանում անցնում է $10\frac{1}{2}$ մ:
Վորքման և անցնում նա մեկ բովելում:

Այս խնդիրը լուծելու համար պետք է խառը թիվը բազ-
մապատկել ամբողջով: Բազմապատկումը կարելի է կատարել
յերկու յեղանակով:

$$1) 10\frac{1}{2} \cdot 60 = 10 \cdot 60 + \frac{1}{2} \cdot 60 = 600 + \frac{60}{2} = 600 + 30 = 630 \text{ մ մեկ բովայում:}$$

Այստեղ 60-ով ամբողջ թիվը առանձին բազմապատկեցինք
և կոտորակն՝ առանձին:

$$2) 10\frac{1}{2} \cdot 60 = \frac{21}{2} \cdot 60 = 21 \cdot 30 = 630 \text{ մ մեկ բովելում:}$$

Այս յերկորդ դեպքում մինչև բազմապատկելու խառը թիվը
դարձրինք անկանոն կոտորակ և ապա բազմապատկեցինք ան-
կանոն կոտորակն ամբողջով:

$$4. \frac{7}{20} \cdot 4 = \frac{7 \cdot 4}{20} = \frac{7}{5} = 1\frac{2}{5}$$

Մինչև վերջնական արդյունքը ստանալը պետք է կրճա-
տում կատարել այսինքն համարիչը և հայտարարը բաժանել
4-ի վրա:

$$\frac{7}{20} \cdot 4 = \frac{7 \cdot 4}{20} = \frac{7}{5} = 1\frac{2}{5}$$

**Ամբողջ թվով բազմապատկել նշանակում
է գումարմանը պարզ ձև տալ:**

**Ամբողջ թվով բազմապատկելիս տված
թիվը մեծացնում ենք այնքան անգամ,
վորքան միավոր պարունակում է բազմա-
պատկիչը:**

Տեսնենք այժմ, թե ինչ իմաստ ունի կոտորակով բազմա-
պատկելը:

1. Մեկ մետր շերտավոր յերկաթի քաշը 12 կգ է, Վորքման
և 1) 2 մ, 2) 5 մ, 3) $\frac{1}{4}$ մ, 4) $2\frac{1}{3}$ մ շերտավոր յերկաթի քաշը

Լուծում. Վերեւում բազմապատկումը տառերով արտահայ-
տեցինք այսպիս: ab=q, վորտեղ ա-ն և b-ն արտադրիչներն են,
իսկ զ-ն՝ արտադրյալը: Այժմ լուծենք մի խնդիր. տառերը փո-

իսրահնենք թվերով. ա արտադրի էջը պետք եւ արտահայտվի մի այն-
պիսի թվով, զոր ցույց տա 1 և յերկաթի քաշը, իսկ ե՞ն մի
թվով, զոր ցույց տա, թե յերկաթը քանի՞ մետր յերկարություն
ունի: Արտադրյան ել կարահայտի յերկաթի քաշը:

$$\begin{array}{ll} 1) \ 12 \cdot b = 12 \cdot 2 = & 2) \ 12 \cdot b = 12 \cdot 5 = \\ 3) \ 12 \cdot b = 12 \cdot \frac{1}{4} = & 4) \ 12 \cdot b = 12 \cdot 2 \frac{1}{2} = \end{array}$$

Այս բոլոր դեպքերում մեզ տված եր ամբողջ մետրի քաշը,
իսկ զորոնում ելնք քաշն այնպիսի չեղափ, զորի յերկարու-
թյունը պարբեր եւ ամբողջ մետրից,՝ ավելի լե կամ պակաս:
Նպատակահարմար չեր լինի զորոց դեպքերում խնդիրը
լուծել բազմապատկման, միուս դեպքերում ուրիշ գործողու-
թյունների միջոցով: Ուստի ամեն անգամ, յիրք մեզ տված եւ
ամբողջը, և պետք եւ գտնել մի թիվ, զոր մեծ եւ ամբողջից մի
քանի անգամ, կամ այդ ամբողջի մասն եւ կազմում, զործադրե-
լու լինք բազմապատկման գործողությունը: Այսուիսով, ստա-
նում ենք, զոր կոտորակով բազմապատկելը նույն գործողու-
թյունն ե, ինչ զոր ամբողջի մաս դանելը:

Տանք ինքը լուծումը վերահշուակ բոլոր դեպքերի համար.

$$1) \ 12 \cdot 2 = 24, \quad 2) \ 12 \cdot 5 = 60$$

Այս լուծումները բացատրության կարիք չունեն:

$$\begin{aligned} 3) \ \frac{1}{4} \text{ մ } \text{յերկաթի } \text{քաշը } 12 \text{ կիլոգրամի } \frac{1}{4} \text{ մասն } \text{եւ } \text{գտնենք} \\ 12 \text{ կգ-ի } \frac{1}{4} \text{-ը, կընի } 3 \text{ կգ: Վերևում } \text{ասվեց, զոր } \text{լինդիրը } \text{լուծ-} \\ \text{վում } \text{ե } 12 \cdot \frac{1}{4} \text{-ով } \text{բազմապատկելու } \text{միջոցով, կստանանք:} \\ 12 \cdot \frac{1}{4} = 3: \end{aligned}$$

$$\begin{aligned} 4) \ \text{Նույն } \text{ձևով } \text{բազմապատկենք } 12 \cdot \frac{1}{2} \text{-ով, Այդ } \text{նշա-} \\ \text{նակում } \text{ե } \text{կրկնել } 2 \text{ անգամ } \text{և } \text{հետո } \text{գրան } \text{ավելացնել } 12 \text{-ի } \text{կեսը:} \\ 12 \cdot 2 = 24, \quad 12 \cdot \frac{1}{2} = 6, \quad 12 \cdot 2 \frac{1}{2} = 24 + 6 = 30 \end{aligned}$$

Տանք մյուս լեզանակը: $2 \frac{1}{2} \text{-ը } \text{դարձնենք } \text{անկանոն } \text{կո-}$
տորտկ եւ բազմապատկենք: $12 \frac{5}{2} = \frac{12 \cdot 5}{2} = 30,$

Կոտորակով բազմապատկելիս գտնում են բազմապատկելիի
մեջ կամ մի բանի մասերը:

Քանի զոր կոտորակով բազմապատկում
այնպիս ա: ինք, ինչպիս ամբողջի մասը
գունելը, ապա առանց առանձին դժւարու-
թյան կարող ենք կոտորակով բազմապատկելու կանոնը դուրս
բերել:

I. Կոտորակի բազմապատկումը կոտորակով. 1. Հարկավոր
ե բազմապատկել՝ $\frac{3}{4} \cdot \frac{2}{5} :$

Լուծում. Գտնենք $\frac{3}{4} \text{-ի } \frac{2}{5} \text{-ը:}$

$$1) \ \frac{3}{4} \text{-ի } \frac{1}{5} \text{-ը } \text{կընի } \frac{3}{4} \cdot \frac{1}{5}, \quad 2) \ \frac{3}{4} \text{-ի } \frac{2}{5} \text{-ը } \text{կընի } \frac{3 \cdot 2}{4 \cdot 5}$$

Նշանակում ե,
 $\frac{3}{4} \cdot \frac{2}{5} = \frac{3 \cdot 2}{4 \cdot 5}$

Յերկու կոտորակներ իրաւ հետ բազմապատկելիս պես ե
համարչների արտադրյալը բաժանել հայտարանների արտադրյալի
վեա:

Այս կանոնն արտահայտենք տառերով.

$$\frac{a}{b} \cdot \frac{c}{d} = \frac{a \cdot c}{b \cdot d}$$

II. Արտադրիչներից մեկն ամբողջ կամ խառը թիվ են

$$2. \text{ Գտնել } \frac{3 \frac{1}{8}}{8} \cdot 10 \text{ արտադրյալը:}$$

$$\text{Լուծում. } 3 \frac{1}{8} \cdot 10 = \frac{25}{8} \cdot 10 = \frac{25 \cdot 10}{8} = \frac{25 \cdot 5}{4} = \frac{125}{4} = 31 \frac{1}{4}$$

Այսուեղ խառը թիվը վերածեցինք անկանոն կոտորակի և
այդ կոտորակը բազմապատկեցինք ամբողջ թվով:

Այդ բազմապատկումը կարելի յեւ ուրիշ ձեռվ ել կատարել

$$\begin{aligned} 3 \frac{1}{8} \cdot 10 &= \left(3 + \frac{1}{8}\right) \cdot 10 = 3 \cdot 10 + \frac{1}{8} \cdot 10 = 30 + \frac{10}{8} = \\ &= 30 + 1 \frac{2}{8} = 31 \frac{1}{4} \end{aligned}$$

3. $\frac{8}{5}$ -ը բազմապատկենք 4-ով:

$$\text{Լուծում. } 4 \cdot \frac{8}{5} = \frac{4 \cdot 8}{5} = \frac{12}{5} = 2 \frac{2}{5}$$

Այսիդ դարձյալ կոտորակով բազմապատկելուն հայում ենք իբրև ամբողջի մասը գտնելուն, ուստի և ամբողջ թիվը բազմապատկում ենք ավյալ կոտորակի համարիչով և արտադրյալը բաժանում նրա հայտարարի վրա:

Արտադրյալը բաղդատելով

$$\frac{8}{5} \cdot 4 = \frac{8 \cdot 4}{5} = \frac{12}{5} = 2 \frac{2}{5}$$

արտադրյալի հետ, տեսնում ենք, վոր այդ արտադրյալները հավասար են իրար, այսինքն ամբողջ թիվը և կոտորակը բազմապատկելիս կարելի յեւ արտադրիչների կարգը փոխել:

$$4. \text{ Բազմապատկել՝ } 5 \cdot 2 \frac{2}{3}$$

$$\text{Լուծում. } 5 \cdot \frac{8}{3} = \frac{5 \cdot 8}{3} = \frac{40}{3} = 13 \frac{1}{3}$$

III. Ցերկու արտադրյալերն ել խառը թվեր են:

$$5. \text{ Բազմապատկենք՝ } 4 \frac{1}{2} \cdot 1 \frac{8}{27}$$

$$\text{Լուծում. } 4 \frac{1}{2} \cdot 1 \frac{8}{27} = \frac{9}{2} \cdot \frac{35}{27} = \frac{9 \cdot 35}{2 \cdot 27} = \frac{35}{2 \cdot 3} = \frac{35}{6} = 5 \frac{5}{6}$$

Խառը թվերը նախնան բազմապատեկելը պետք է գարնեն անկանոն կոտորակ:

IV. Կոտորակի բազմապատկումը նրա հայտարարին հավասար թվով:

$$6. \quad \frac{5}{9} \cdot 9 = \frac{5 \cdot 9}{9} = 5 \quad 7. \quad \frac{8}{14} \cdot 14 = 8$$

Կոտորակը հայտարարին համաստ թվով բազմապատկելիս առաջնում է նամարիքն ետպատ թիվ:

Գիտողություն. Բազմապատկելու արտադրյալները.

$$1) \quad 18 \cdot 3 = 54$$

$$4) \quad 18 \cdot \frac{1}{2} = 9$$

$$2) \quad 18 \cdot 2 = 36$$

$$5) \quad 18 \cdot \frac{1}{4} = \frac{18}{4} = \frac{9}{2} = 4 \frac{1}{2}$$

$$3) \quad 18 \cdot 1 = 18$$

$$6) \quad 18 \cdot \frac{2}{15} = \frac{36}{15} = \frac{12}{5} = 2 \frac{2}{5}$$

Տեսնում ենք, վոր առաջին յերկու որինակներում արտադրյալը մեծ է բազմապատկելից յերրորդում՝ արտադրյալը հավասար է բազմապատկելիին, ինկ մնացածներում՝ վոքը և բազմապատկելիից:

Նշանակում ե, վոր կանոնավոր կոտորակով բազմապատկելիս արտադրյալը վոքը և լինում բազմապատկելիից: Ուստի և պետք է հրաժարվենք այն մտքից, թե բազմապատկել միշտ մեծացնել և նշանակում բազմապատկելիս թիվը այն ժամանակ է մեծանում, յերբ բազմապատկելիք մեծ է միավորից, իսկ կանոնավոր կոտորակով բազմապատկելիս թիվը փոքրանում է:

XI. ՀԱՍՏԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

§ 1. Փոխադարձաբար հակադարձ թվեր

Սահմանում. Ցերկու թվեր կոչվում են փոխադարձաբար հակադարձ թվեր, յերենանց արտադրյալը հավասար է մեկ միավորի:

$$1. \quad Գտնել՝ 7, 2, \frac{1}{4}, \frac{5}{8}, \frac{7}{10} \text{ թվերի հակադարձ թվերը:}$$

$$\text{Լուծում. } 7\text{-ի հակադարձը կլինի } \frac{1}{7}\text{-ը, վորով հետև:}$$

$$7 \cdot \frac{1}{7} = 1:$$

$$2\text{-ի հակադարձը կլինի } \frac{1}{2}, \text{ քանի վոր } 2 \cdot \frac{1}{2} = 1$$

$$\frac{1}{4}\text{-ի } \rightarrow \rightarrow 4 \rightarrow \rightarrow \frac{1}{4} \cdot 4 = 1$$

$$\frac{5}{8}\text{-ի } \rightarrow \rightarrow \frac{8}{5} \rightarrow \rightarrow \frac{8}{5} \cdot \frac{5}{8} = 1$$

Ցերեն տված է վորեւ ո թիվ, ապա դրա հակադարձը պետք է նշանակել $\frac{1}{n}$, $\frac{a}{b}$ կոտորակի հակադարձը կլինի $\frac{b}{a}$:

§ 2. Բաժանում
կոսորակի վրա

Բաժանումը՝ բազմապատկման հակաղարձ գործողությունն եւ Բաժանման գործողությամբ գտնում էնք արտադրիչներից մեկը, յերբ հայտնի յե յերկու արտադրիչների արտադրյալը և մյուս արտադրիչը:

Այսպես, որինակ, յեթե արտադրյալը՝ 80 ե, իսկ մեկ արտադրիչը՝ 40, ապա ոգտվելով բաժանումով գտնում ենք, վոր յերկրորդ արտադրիչը հավասար ե 2-ի:

Նման ձևով բաժանման գործողության միջոցով յերկրորդ արտադրիչը գտնում ենք նաև այն դեպքում, յերբ առաջին արտադրիչը կոտորակ եւ:

$$1 \cdot 9 : \frac{3}{4} = ?$$

Բաժանելին (այսինքն արտադրյալը) հավասար ե 9-ի, մի արտադրիչը (բաժանարարը)՝ $\frac{3}{4}$ -ն ե, իսկ մյուսը (քանորդը) հարկավոր ե գտնել: Յերկրորդ արտադրիչը նշանակենք խ, այն ժամանակ.

$$9 : \frac{3}{4} = x, \quad \frac{3}{4}x = 9, \quad \frac{1}{4}x = \frac{9}{3} = 3, \quad \frac{4}{4}x = 3 \cdot 4 = 12$$

Այս ինդիրը հանգում ե մասով ամբողջը գտնելուն:

Մյուս կողմից չ անհայտ արտադրիչը հանդիսանում ե 9-ը $\frac{8}{4}$ -ի վրա բաժանելուց առաջացած քանորդ, այսինքն՝ $9 : \frac{3}{4}$:

Նշանակում ե, գտնելով 12-ը, 9-ը և $\frac{3}{4}$ թվերով, մենք գտանք $9 - \frac{3}{4}$ -ի վրա բաժանելուց առաջացած քանորդը՝ $9 : \frac{3}{4} = 12$, այլ խոսքով՝ բաժանման խնդիրը վերածվեց մասով ամբողջը գտնելու խնդրին:

Եերենք բաժանման մի որինակ ես:

2. Արտադրյալի ե հայտնի արտադրիչի միջոցով գտնենք անհայտ արտադրիչը: Արտադրյալը՝ $\frac{3}{2}$ ե, հայտնի արտադրիչը՝ $\frac{5}{9}$:

Լուծում. Անհայտ արտադրիչը նշանակելով չ, կստանանք

$$\frac{5}{9} \cdot x = \frac{3}{2}$$

Մասով ամբողջը գտնելով, կհմանանք, վոր

$$x = \frac{3 \cdot 9}{2 \cdot 5} = \frac{27}{10} = 2 \frac{7}{10}$$

Այս որինակը լուծելով մենք դարձյալ բաժանում կատարեցինք, քանի վոր գտանք անհայտ արտադրիչը (չ) յերբ հայտնի յե արտադրյալը՝ $\left(\frac{3}{2}\right)$ և մյուս արտադրիչը՝ $\left(\frac{5}{9}\right)$:

Դրում ենք այսպիս:

$$\frac{8}{2} : \frac{5}{9} = \frac{8 \cdot 9}{2 \cdot 5} = \frac{27}{10} = 2 \frac{7}{10}$$

Վորոնելով ամբողջը լուր մասով, գտնում ենք անհայտ արտադրիչը արտադրյալի և հայտնի կոտորակային արտադրիչի գործողությամբ, կատարում ենք բազմապատկման հակագարձ գործողություն՝ բաժանում: Մեր բերած որինակներում կատարեցինք բաժանում կոտորակի վրա:

$$3. \quad Գտնել x-ը, յեթե \frac{8}{4}x = \frac{15}{2}$$

Լուծում. x-ը գտնելու համար պետք ե կատարել բաժանման գործողություն:

$$x = \frac{15}{2} : \frac{3}{4}$$

կամ, վոր նույնն ե, գտնել x-ը յուր մասերի միջոցով: Վերջին գործողությունը տալիս ե:

$$x = \frac{15 \cdot 4}{2 \cdot 3} = 10$$

Փոխանակ $\frac{15}{2}$ -ը՝ $\frac{8}{4}$ -ի վրա բաժանելու, կատարում ենք $\frac{15}{2} \cdot \frac{4}{3}$ բազմապատկումը, վորից նույն արդյունքն ե ստացվում:

$$\frac{15}{2} \cdot \frac{4}{3} = 10$$

Դիսողուրյուն. Կոտորակի վրա բաժանելը և բաժանարարի հակառակով բազմապատկելը սկզբույն արդյունքն է տալիս:

$$4 \cdot \frac{3}{4} = \text{բաժանենք } \frac{5}{7} \text{-ի վրա:}$$

$$\text{Լուծում. } \frac{3}{4} : \frac{5}{7} = x, \quad \frac{5}{7}x = \frac{3}{4}, \quad x = \frac{3 \cdot 7}{4 \cdot 5}$$

Ցերե բաժանումը փոխարինենք բաժանարարի հակագարձ կոտորակով՝ բազմապատկելու գործողությամբ, կոտանենք $\frac{3}{4} \cdot \frac{5}{7} = \frac{3 \cdot 7}{4 \cdot 5}$: Պատասխանը նույնն է:

Գորեվե թիվ կոտորակի վրա բաժանելու համար հարկավոր ե այդ թիվը բազմապատկել բաժանարարի հակագարձ բաժանելիս պետք է միայն համարիչները բաժանել, մի կողմ բողնելով հայտարարեցին:

Այս կանոնն արտահայտենք տառերով:

$$\frac{a}{b} : \frac{p}{q} = \frac{a}{b} \cdot \frac{q}{p} = \frac{a \cdot q}{b \cdot p}$$

$$1. \text{Գտնել } \frac{12}{49} : \frac{4}{7} \text{ քանորդը:}$$

$$\text{Լուծում. } \frac{12}{49} : \frac{4}{7} = \frac{12}{49} \cdot \frac{7}{4} = \frac{12 \cdot 7}{49 \cdot 4} = \frac{3}{7}$$

$$2. \text{Գտնել } \frac{3}{4} : 6 \text{ քանորդը:}$$

$$\frac{3}{4} : 6 = \frac{3}{4} \cdot \frac{1}{6} = \frac{3 \cdot 1}{4 \cdot 6} = \frac{1}{8}$$

$$3. \text{Գտնել } 6 : \frac{3}{4} \text{ քանորդը: } 6 : \frac{3}{4} = 6 \cdot \frac{4}{3} = 8$$

$$4. \text{Գտնել } 8 \frac{1}{3} : 1 \frac{3}{4} \text{ քանորդը:}$$

Լուծում. Վերջին որինակը վերաբերում է խառը թվերի բաժանման, նախքան բաժանումը պետք է բաժանելին և բաժանարարը անկանոն կոտորակ դարձնել.

$$\frac{8 \frac{1}{3}}{3} : 1 \frac{3}{4} = \frac{25}{3} : \frac{7}{4} = \frac{25 \cdot 4}{3 \cdot 7} = \frac{100}{21} = 4 \frac{16}{21}$$

$$5. \text{ Տարր բաժանել } \frac{3}{5} \text{-ի վրա:}$$

$$\text{Լուծում. } \frac{2}{5} : \frac{3}{5} = \frac{2 \cdot 5}{5 \cdot 3} = \frac{2}{3}$$

Այս վերջին որինակում բաժանեցինք հավասար հայտարարներով կոտորակներ: Նույն արդյունքը կարելի է ստանալ անմիջապես համարիչները բաժանելով, նկատի չառնելով կոտորակների հավասար հայտարարները:

I. Խառը թվերը բաժանելիս անհրաժեշտ է այդ թվերը գարենել անկանոն կոտորակներ:

II. Յերկու հավասար հայտարարներով կոտորակներ բաժանելիս պետք է միայն համարիչները բաժանել, մի կողմ բողնելով հայտարարները:

III. Կոտորակի ամբողջ թվի վրա բաժանելիս հարկավոր կոտորակի հայտարարը բազմապատկել ամբողջ թվով, համարիչն անփափոխ թողնելով:

Դիսողուրյուն. Մրնէ վերջնական բազմապատկումն ամեն անգամ պետք է կրճատում կատարել ստացված կոտորակային արդյունքում:

$$6. \frac{12}{25} : \frac{4}{5} = \frac{12 \cdot 5}{25 \cdot 4} = \frac{3 \cdot 1}{5 \cdot 1} = \frac{3}{5}$$

$$7. \frac{8}{9} : \frac{4}{3} = \frac{8 \cdot 3}{9 \cdot 4} = \frac{2 \cdot 1}{3 \cdot 1} = \frac{2}{3}$$

Զանազան խնդիրներ լուծելու համար մենք շատ անգամ ենք զիմել բաժանման գործողության: Բայց միայն այժմ, յերբ սույուղերը ենք կոտորակները բաժանել, կարելի յի ցույց տալ այն բոլոր դեպքերը, վորոնց լուծման համար կիրառվում է բաժանումը:

Բաժանման գործողությամբ լուծվող հիմնական խնդիրներից մեկը իբրև ամբողջություն ընդունած թվի գտնելն է, այդ ամբողջությունից մեծ կամ փոքր թվի ոգնությամբ:

Տված մասերով ամբողջը գտնում են բաժանման գործողությամբ:

1. Յերկու արտադրիչների արտադրյալի և արտադրիչներից մեկի միջոցով գտնել մյուս արտադրիչը:

2. Բաժանել թիվը մի քանի հավասար մասերի (բաժանում ամբողջ թվի վրա):

3. Գտնել ամբողջը, յերբ հայտնի յեն նրա մասերը:

4. Բաղդասել լերկու թիվ: Իմանալ, թե մի թիվը քանի՞
անգամ մեծ կամ փոքր ե մյուսից, կամ մի թիվի վճը մասն ե
կազմում մյուս թիվը (գտնել թիվը հարաբերությունը):
Կանգ առնենք վերջին կետի վրա:

1. Ասենք թե պետք ե իմանալ, թե 5-ը 30-ի վճը մասն ե:
Այս խնդիրը կարելի յե այսպես լուծել. իմանանք, թե 5-ը
քանի անգամ ե պարունակվում 30-ի մեջ, այդ նպատակով 30-ը
բաժանում ենք 5-ի վրա և ստանում ենք 6 անգամ:

Այսուղից յեզրակացնում ենք, վոր 5-ը կազմում ե 30-ի
 $\frac{1}{6}$ - մասը:

Նույն խնդիրը կարելի յե լուծել 5-ը 30-ի վրա բաժանե-
լով. կստանանք.

$$5 : 30 = \frac{1}{6}$$

2. Ավտոմոբիլը կարող է $1\frac{1}{2}$ տոնն ըեռ կրել, բայց նա
տանում է միայն $1\frac{1}{4}$ Տ: Լրիվ բեռնվածության վճը մասն ե
տանում ավտոմոբիլը:

Լուծում. Այս խնդիրը լուծվում է բաժանման միջոցով.

$$\frac{1}{4} : 1\frac{1}{2} = \frac{5}{4} : \frac{8}{2} = \frac{5 \cdot 2}{4 \cdot 3} = \frac{5}{6}$$

Հարկավոր ե մի կարեռը դիտողություն ել անել խնդիր-
ները բաժանման մէջոցով լուծելու վերաբերյալ: Բայց նախ ըե-
րենք լերկու որինակ:

3. $4\frac{1}{2}$ կգ շաքարին վճարեցին $7\frac{7}{8}$ սուբլի: Ի՞նչ արժե մի
կիոզրամը:

$$\text{Լուծում. } 7\frac{7}{8} : 4\frac{1}{2} = \frac{63}{8} : \frac{9}{2} = \frac{63 \cdot 2}{8 \cdot 9} = \frac{7}{4} = 1\frac{3}{4} \text{ սուբլի:}$$

Այսուղի քանորդը փոքր ե բաժանելիից:

4. Ռեզինե խողովակի $\frac{3}{4}$ մետրին վճարվեց $1\frac{1}{2}$ Տ: Ի՞նչ
արժե այդպիսի խողովակի 1 մետրը:

$$\text{Լուծում. } 1\frac{1}{2} : \frac{3}{4} = \frac{3}{2} : \frac{3}{4} = 2 \text{ սուբլի:}$$

Այսուղի քանորդը մեծ ե բաժանելիից:

5. Իրար հետ համեմատենք հետեւալ քանորդները:
12 : 3 = 4 (քանորդը փոքր ե բաժանելիից),
12 : 1 = 12 (քանորդը հավասար ե բաժանելիին):

$$12 : \frac{1}{2} = 24 \text{ (քանորդը մեծ ե բաժանելիից):}$$

Դիտուր 10. Կանոնավոր կոտորածի վրա բաժանեն քանորդն
ավելի մեծ ե ինում, իսկ ամբողջ թվի կամ անկանոն կոտորածի վրա բա-
ժանելիս քանորդը փոքր ե ինում բաժանելից:

**§ 5. Ամ բազօք բվերի
գումարման ու բազ-
մապատկման ուելի-
ներ վերաբերու-
մեն նայել կոտորա-
կային բվերին**

Կարելի յե ստուգել թվային որինակներով:

**§ 6. Կոտորակային
բվերով հաօքելու
մի ավելի բարդ
որինակ**

$$H = \frac{ab}{abc}, \quad p = 30 \frac{2}{3}, \quad a = 3 \frac{6}{7}, \quad b = 5 \frac{4}{9}, \\ c = \frac{36}{15}$$

Լուծում. Տառերը փոխարինենք իրենց թվային ար-
ժեքներով:

$$H = \frac{6 \cdot 30 \frac{2}{3}}{3 \frac{6}{7} \cdot 5 \frac{4}{9} \cdot \frac{76}{10}}$$

Խառը թվերը փոխարինենք անկանոն կոտորակներով:

$$H = \frac{6 \cdot \frac{92}{3}}{\frac{27}{7} \cdot \frac{46}{9} \cdot \frac{76}{10}}$$

Անցնենք հաշվելուն:

Գրում ենք բաժանելին՝ $\frac{6 \cdot 92}{8}$, Այս կոտորակը, փոխանակ
բաժանելու մյուս բոլորի վրա, բազմապատկում ենք հակաղարձ
թվերով:

$$\begin{array}{r} 6 \cdot 92 \cdot 7 \cdot 9 \cdot 10 \\ - 3 \cdot 27 \cdot 49 \cdot 76 \\ \hline \end{array}$$

Կատարում ենք կրծատում.

$$\frac{6 \cdot 92 \cdot 7 \cdot 9 \cdot 10}{3 \cdot 27 \cdot 49 \cdot 76} = \frac{46 \cdot 10}{3 \cdot 7 \cdot 19} = \frac{460}{399} = 1 \frac{61}{399}$$

Դիտություն. Հաշվելիս միշտ պետք է բավականանալ կոտորակի
մեկ գծով, համարեցում և հայտարարում յեղած կոտորակային արտահայտու-
թյունները փոխարինել այնպիսի արտահատություններով, վորոնց համարիշը
և հայտարարը մըրով թվեր են:

XII. ՏԱՅՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

§ 1. Տասնորդական կոտորակների կար-
գայն ու գրելը

Թվերը կարդալու և գրելու մեր սիստեմը
կոչվում է հաւելի տասնորդական սիստեմ,
վորովճետե այդ սիստեմում բարձր կարգի
յուրաքանչյուր միավոր պարունակում է
հարեան ստորին կարգի 10 միավոր—հազարավորը 10 անգամ
մեծ և հարյուրավորից, հարյուրավորը 10 անգամ մեծ և տաս-
տասնավորից, տասնավորը 10 անգամ մեծ և միավորից, վորին
անվանում ենք պարզ միտոր: Հաշվի միավորներ կազմելու
այդ յեղանակը կարելի յե շարունակել նաև վորոշ կոտորակային
թվերի վրա, վորոնք փոքր են միավորից—այսպիս կոչված տաս-
նորդական կոտորակների վրա:


Սահմանում. Տասնորդական է կոչվում այն կոտորա-
կային թիվը, վորի հայտարարը 10 է, կամ 10 թիվի առանձանը:

Հետեալ կոտորակային թվերը՝ $\frac{1}{10}, \frac{1}{100}, \frac{1}{1000}, \frac{7}{100}, \frac{28}{100}$
տասնորդական կոտորակներ են:

Վերջնենք սանտիմետրների բաժանված մետր (նկ. 5):
Մետրն ընդունենք իբրև միավոր:

Բաժանելով միավորը 10 մասի, ստանում ենք միավորի մի
տասնորդական մասը՝ $\frac{1}{10}$: Ենկ տասնորդական մասը բաժանե-
լով տաս մասի, ստանում ենք միավորի հարյուրերորդական
մասը՝ $\frac{1}{100}$: Տեսնում ենք, վոր տասնորդական կոտորակները

նույնպիս մտնում են թվարկության տասնորդական սիստեմի
մեջ: Այդ հանդամանքը մարդկանց ըերեց այն մաքին, վոր



Նկ. 5

տասնորդական կոտորակները գրել կարելի է նաև առանց
հայտարարի: Յուրաքանչյուր տասնորդական կոտորակի արժեքը
և անվանումը վորոշվում է այն տեղով, վոր բունում և համա-
պատասխան թվանշանը:

Տասնորդական սիստեմի հատկություններից ըզիսում ե
այն, վոր տասնորդական մասերը պետք է միավորի աջ կողքին
լինեն, քանի վոր մի տասնորդական մասը 10 անգամ փոքր ե
միավորից: Մնում է միայն թվի ամբողջ մասն անջատել կոտո-
րակայինից: Այդ արգում և ստորակետով:

Որինակի համար այդ յեղանակով գրենք մի կոտորակային
թիվ, ասենք թե՛ չորս ամբողջ և ութ տասնորդական:

$$4 \frac{8}{10} = 4,8$$

Յեթե կամենանք տասնորդական սիստեմով հարյուրոր-
դական մասեր գրել, ապա պետք է դա գրենք տասնորդական մա-
զերի մոտ աջ կողմում: Այսպիսով, տասնորդական մասերը գրվում
են ստորակետով դեպի աջ առաջին տեղում, իսկ հարյուրորդա-
կան մասերը՝ ստորակետով դեպի աջ, յերգրադ տեղում: Արինակ՝

$$4 \frac{83}{100} = 4,83$$

Նման ձևով շարունակում է միավորի հազարերորդական,
տասնազարերորդական և ավելի մասն մասերի գրությունը:

Յեթե վորեն կարգում բացակայում են միավորները,
նշանակում ենք զերո: Զերո լինք գրում նաև այն ժամանակ,

յերբ կանոնավոր կոտորակ արտահայտելիս ամբողջ միավորներ չկան, որինակ՝ $\frac{8}{10}$ -ի փոխարեն գրում ենք 0,3,

Իերենք տասնորդական կոտորակների գրության ժամանակ զերոյով ոգովելու մի քանի որինակ.

$$\frac{1}{10} = 0,1; \quad \frac{5}{10} = 0,5; \quad \frac{1}{100} = 0,01; \quad \frac{7}{100} = 0,07; \quad \frac{28}{100} = 0,28;$$

$$\frac{1}{1000} = 0,001; \quad \frac{4}{1000} = 0,004; \quad \frac{29}{1000} = 0,029; \quad \frac{156}{1000} = 0,156;$$

$$\frac{703}{1000} = 0,703; \quad 205 \frac{402}{1000} = 205,402$$

Տասնորդական կոտորակների գրելու կանոնն հետևյալն է.

Տասնորդական կոտորակներ գրելիս ամբողջը ստորակետով անջատվում է կոտորակային մասից: Եերեք ամբողջ միավորներ չկան, գրանց փոխարեն գրվում է զերո: Տասնորդական մասերը գրվում են ստորակետից աշ՝ առաջին տեղում, հարյուրեռորդական մասերը՝ յերկրորդ տեղում, հազարեռորդականը՝ յերրորդ տեղում յեվ այլն:

Յերբ կարողանում ենք տասնորդական կոտորակներ գրել, կարող ենք նաև կարդալ: Որինակ.

$0,1 - \text{մեկ } տասնորդական$

$0,01 - \text{մեկ } հարյուրերորդական$

$0,001 - \text{մեկ } հազարերորդական$

$0,2 - \text{յերկու } տասնորդական$

$0,03 - \text{յերեք } հարյուրերորդական$

$0,25 - քսանինգ հարյուրերորդական$

$0,007 - յոթ հազարերորդական$

$0,023 - քսանյերեք հազարերորդական$

$0,271 - \text{յերկու } հարյուր յոթանասունմեկ հազարերորդական}$

$52,325 - հիսուն յերկու ամբողջ յերեք հարյուր քսանինգ հազարերորդական:$

Տասնորդական կոտորակները կարգավիս նախ կարգում են ստորակետից հետո գրված թիվն իրեվ համարից Հայտարարում կարգում են մեկ միավորն այնքան գերներով, վորքան թվանը՝ տան կա ստորակետից հետո:

§ 2. Տասնորդական
կոտորակների
հասարակ կոտորակ

Տասնորդական կոտորակների հատկությունները և գրել-կարգալու յեղանակները նկատի ունենալով հաճախ հասարակ կոտորակների հանդեպ առավելություն են բավարար տասնորդական կոտորակներին: Որինակ, մետրական սիստեմի հաշվումներն անկիս տասնորդական կոտորակները հեշտացնում են գրությունը փոխանակ գրելու 4 կգ 287 գ, գրում ենք 4,287 կգ:

Ուսումնասիրելով տասնորդական կոտորակի մյուս դեպքերը ես, կտեսնենք, վորքատ հաճախ հասարակ կոտորակի վոլումներն հարմար են գործածել տասնորդական կոտորակները:

Սակայն լինում են և այնպիսի զեպքեր, յերբ ավելի հարմար են հասարակ կոտորակները գործադրել: Հասարակ կոտորակներն ունեն այնպիսի հատկություն, վորը միայն սահմանափակ չափով և կիրառվում տասնորդական կոտորակների մեջ՝ գա կոտորակների կրատումն եւ: Որինակ, 0,125 կոտորակը հասարակ կոտորակի ձեռվ գրելիս ստորակետ է շատ պարզ տեսք:

$$0,125 = \frac{125}{1000} = \frac{1}{8}$$

Հարկ յեղած դեպքում տասնորդական կոտորակը կարելի յեւ գալձնել հասարակ կոտորակ և լինդհակառակը:

§ 3. Տասնորդական
կոտորակների մեծության բաղդասականի առաջանակը թիվը և փոկի շարժման արագությունը: Փոկի արագությունը ցույց ետակիս, թե մեկ վայրկյանում փոկը քանի մետր ետակ շարժմանում հոլովակի վրա դիցուք, որինակի համար, ճախարակող գագգյան ունի փոկի հետևյալ չորս արագությունները՝ 7,32 մ, 5,5 մ, 4,4 մ և 4,2 մ գալրկյանում: Բաղդասականի այս թվերը՝ վարագությունը կլինի ամենամեծը և վարագությունը՝ Այդ թվերը գալրկյանում մեծության նվազման կարգով:

$$7,32 > 5,5 > 4,4 > 4,2$$

7,32-ը մեծ և մյուս թվերից, վորովհետեւ 7 միավորն ավելի մեծ և մյուս թվերի միայն 5 կամ չորս ամբողջ միավորներից, Նույն պատճառով 5,5-ն ավելի մեծ և 4,4-ից և 4,2-ից:

Նախորդ տողի վերջին լերկու թվերն ունեն միենույն ամբողջ թվերը, բայց 4,4-ը մեծ և 4,2-ից, քանի վոր հավասար ամբողջների գեղքում առաջինի տասնորդական մասերն ավելի լին մյուսի տասնորդական մասերից:

Նման ձևով բաղդատում են տասնորդական այն կոտորակները, վորոնք ստորակետից հետո ավելի շատ նշաններ ունեն:

Աւալիսով, տասնորդական կոտորակներ պարունակող յերկու թվեր բաղդատելու համար պետք են սախ բաղդատել ամբողջ միավորները, Յերկու թվերից մեծը այն է, վորի ամբողջները շատ են մյուսից: Յեթե ամբողջները հավասար են, ապա պետք են բաղդատել տասերորդական մասերը, սրանցից վոր թվի տասնորդական մասերն ավելի յեն, նշանակում է, այդ կոտորակնել ավելի մեծ է: Յեթե տասերորդական մասերն ել նույնն են, պետք են բաղդատել հարյուրերորդական և ավելի մանր մասերը:

2. Բաղդատենք 0,2, 0,3 և 0,5-ը:

Այս կոտորակներում ամբողջ միավորներ չկան: Նշանակում է, դրանցից մեծը կլինի այն, վորի տասերորդական մասերն արտահայտող թիվը մեծ և մուսների տասերորդական մասերի թվից:

Այդ կոտորակները դասավորենք մեծության կարգով և դրինք:

$0,5 > 0,3 > 0,2$

3. Բաղդատենք 0,531, 0,582, 0,594 կոտորակները:

Տեսնում ենք, վոր այդ կոտորակներն ամբողջ միավորներ չունեն, տասնորդական մասերն ել հավասար են: Կը շանակի, դրանք տարբերվում են հարյուրերորդական մասերով: Ակներեւ է, վոր ամենամեծը կլինի այն կոտորակը, վորի հարյուրերորդական մասերի թիվն ամենամեծն է:

$0,594 > 0,582 > 0,531$

Տասնորդական կոտորակներով արտահայտված թվերը բաղդատելիս հաճախ տվյալ թվերը փոխարինում ենք դրանց համապատասխանող մոտավոր կամ կոտրացրած թվերով:

Տասնորդական կոտորակները կորացնելու համար ոգտագործում ենք այն յեղանակները, վորոնք ընդունել ենք ամբողջ թվերի կորացման համար (գլ. III, § 16):

Տանք կորացման մի քանի որինակներ:

Տված թիվը	մասավոր թիվը
0,3758	0,38 կորացված և հարյուրերորդ. մասերով,
0,3724	0,37 » » »
0,625	0,63 » » »
0,35	0,64 » » »

§ 4. Տասնորդական կոտորակների բնույթում հայտարարի բերելի յեզ տասնորդական կոտորակների կրծառումը

1. Հարկավոր ե 300 մմ յերկարությունն արտահայտել կիլոմետրի մասերով:
Լուծում. Հայտնի յեզ, վոր 1 կմ = 1000մ =
= (1000 · 1000) մմ = 1 000 000 մմ: Մասը գտնելու համար, վորը ներկա գեղքում
300 մմ է, յեթե —ամբողջն ընդունենք

1 000 000 մմ, հարկավոր ե բաժանման դիմել:

Գրելով տասնորդական կոտորակի ձևով, կստանանք.

$$\frac{300}{1\,000\,000} = 0,000300$$

Յեթե մինչև տասնորդական կոտորակի ձևով գրելը, ոգտը վելով կոտորակի գլխավոր հատկությունից, կատարենք հասարակ կոտորակի կրծառում, կստանանք.

$$\frac{300}{1\,000\,000} = \frac{3}{10\,000} = 0,0003$$

0,000300 և 0,0003 կոտորակները հավասար են:
0,000300 = 0,0003: Յերկրորդ տասնորդական կոտորակն ավելի պարզ տեսք ունի:

2. Բաղդատենք 2,8 2,80 և 2,800 թվերը:

Այդ թվերի ամբողջ միավորները և տասնորդական մասերը նույնն են. ուրիշ մասեր ել չունեն: Նշանակում է, այդ թվերը հավասար են:

$$2,8 = 2,80 = 2,800$$

Յեթե այդ տասնորդական կոտորակները պատկերացնենք հասարակ կոտորակներ, կստանանք.

$$2\frac{8}{10} = 2\frac{80}{100} = 2\frac{800}{1000}$$

Այդ կոտորակների հավասարությունը հաստատվում է հասարակ կոտորակների գլխավոր հատկությունով:

Ստորակետից հետո տասնորդական կոտորակի վերջից դեռներ ավելացնելով, փոխում ենք կոտորակի միայն արտաքին տեսքը, բայց վոչ նրա մեծությունը՝ ձիշտ և նաև հակառակը՝ ստորակետից հետո կոտորակի վերջին զերոները ջնջելով չենք փոխում կոտորակի մեծությունը:

Այդ բանի շնորհիվ կարելի յե տասնորդական կոտորակները բերել ընդհանուր հայտարարի:

3. Բնդհանուր հայտարարի բերենք՝ 0,25, 0, 1732 և 3,154 կոտորակները:

Լուծում.

$$0,25 = 0,2500, \quad 0,1732 = 0,1732, \quad 3,154 = 3,1540$$

Այսեղ բերված բոլոր թվերն ել արտահայտեցինք տասնադարորդական մասերով:

1. Մի բանի տասնորդական կոտորակներ ընդեանուր հայտարարի թերելու համար, պեսք ե տված կոտորակների ստորակետից հետո յեղած բժանանեների բանակը հավասարեցնենք՝ վերջին զերոներ ավելացնելով:

Կոտորակի գլխավոր հատկությունը թույլ ե տալիս նույնապես կրծատել այդ կոտորակները, յեթե նրանք վերջում դերոներ ունեն, դրանով չի փոխվում կոտորակի արժեքը:

0,8700 մ կոտորակին պարզ տեսք տանք,

$$0,8700 = \frac{8700}{10000} = \frac{87}{100} = 0,87 \text{ մ}$$

II. Յեթե տասնորդական կոտորակի վերում զերոներ կան, կարելի յե այդ զերոները զեն զցեր Դրանից չի փոխվի կոտորակի մեծուրում:

Այդ վերջին ձևափոխությունը կարելի յե անվանել կրծա-

§ 5. Տասնորդական կոտորակների գումարումը մեջ հանումը

1. Գումարելու հետեւալ թվերը. 3,75+	
+ 8+4,125,	
Այդ կարելի յե զրել յերկու յեղանակով.	
3,750	3,75
+ 8,000	կամ + 8
4,125	4,125
15,875	15,875

Առաջին դեպքում բոլոր կոտորակները բերեցինք ընդհանուր հայտարարի՝ վերջից զերոներ ավելացնելով և տառհազարերորդական մասերի վերածելով:

2. 4,875-ից հանենք 2,37264:

Լուծում.

4,87500	4 875
- 2,37264	կամ - 2,37264
2,50236	2,50236

Տասնորդական կոտորակների գումարումը և հանումը կատարվում ե այնպես, ինչպես ամբողջ թվերի գումարումը և հանումը:

Տասնորդական կոտորակները գումարելու կամ հանելու համար հարկածու ե.

1) Թվերն իւրաքանչիւր պահպան պահպան ամբողջները լինեն ամբողջների տակ, տասնորդական մասերը տասնորդականի տակ, հայտարարութանը՝ հայտարարութանի մասերի տակ յեւ ալեն:

2. Գումարումը յեւ հանումը կատարել այնպես, ինչպես վարդում ենք ամբողջ թվերի հետ:

3) Գործողությունը կատարելուց հետո ստորակետը պեսք ե դնել հետո այնպես, վորեղ գրած եր տված գումարելիների կամ նվազելիի ու հանելիի մեջ:

Դիտողություն. Կոտորակները գումարելիս և հանելիս պետք ե համեմ, զոր բոլոր ստորակետները իրար տակ լինեն:

Աւշադրություն գարենքնենք հանման հետեւալ դեպքի վրա՝

3. 1—0,027564=0,972436

Այստեղ հանելի բոլոր կարգերի թվերը հանվում են 9-ից, բացի վերջինից, զորը հանվում է 10-ից:

4. Տասնորդական կոտորակները գումարելիս և հանելիս հաճախ հարկավոր ե լինում գանել մոտավոր գումարը և տարբերությունը:

Գանենք հետեւալ թվերի գումարը և տարբերությունը մեկ հարբյուրերդական ճշտությամբ:

$$1) 8,5434 + 2,271 + 3,186 + 2,05, \quad 2) 12,3764 - 5,171$$

I. Ուժում. Համաձայն խնդրի պայմանի գումարը և տարբերությունը կորացնենք հարբյուրերդական մասերով, բաց թողնելով դեպի աջ զանգող մյուս կարգերը:

$$\begin{array}{r} 1) 8,5434 \\ + 2,271 \\ + 3,186 \\ - 2,05 \\ \hline - 16,05 \end{array} \quad \begin{array}{r} 2) 12,3764 \\ - 5,171 \\ - 7,21 \\ \hline \end{array}$$

Տասնորդական կոտորակների կորացման կանոնները նույն են, ինչ վոր ամբողջ թվերինը:

Բազմապատկում 10-ով յեզ 18-ի ասինաներով:

Տ. Տասնորդական կոտորակների բազմապատկումը

1. Ցերե բազմատեսք $0,0001, 0,001, 0,01,$
1 թվերը կամ $0,00097, 0,0097, 0,097,$
 $0,97, 9,7$ և 97 թվերը, կանոններ, վոր յուրաքանչյուր հաջորդող թիվը մեծ ե նախորդից 10 անգամ, կամ յուրաքանչյուր նախորդող թիվը 10 անգամ մեծացնելով կառացվի հաջորդող թիվը, և ընդհակառակը, հաջորդող թիվը 10 -ի վրա բաժանելով, կառացվի նախորդող թիվը:

Սահմանադրություն է, վոր տասնորդական կոտորակը 10 -ով բազմապատկելիս բավական ե ստորակետը մի թվանշան աջ տանել:

$$\begin{array}{ll} 2. 1) 84,72 \cdot 10 = 847,2 & 2) 0,0271 \cdot 10 = 0,271 \\ 3) 3,2 \cdot 10 = 32 & 4) 0,512 \cdot 10 = 5,12 \end{array}$$

Տասնորդական կոտորակը 10 -ի վրա բաժանելու համար բավական ե ստորակետը մի թվանշան ձախ տանել:

$$\begin{array}{ll} 3. 1) 84,7 : 10 = 8,47 & 2) 3,45 : 10 = 0,345 \\ 3) 0,42 : 10 = 0,042 & 4) 0,056 : 10 = 0,0056 \end{array}$$

100-ով, 1000-ով և մեկով ու հաջորդող մի քանի զերոներով կազմված ուրիշ թվերով բազմապատկելու կամ այդ թվերի վրա բաժանելու հաճար բավական ե հաջորդաբար բազմապատկել 10 -ով կամ հաջորդաբար բաժանել 10 -ի վրա, որինակ.

$$4. 4,273 \cdot 10 = 42,73 \cdot 10 = 427,3$$

$$5. 35,68 \cdot 10 = 356,8 \cdot 10 = 3,568 \cdot 10 = 0,3568$$

I. Տասնորդական կոտորակները միավորով յեզ զերոներով արտահայտված թվերով բազմապատկելու համար բավական ե ստորակետը գեպի աջ տանել այնքան բավանան, վորբան զերոներունի բազմապատկից:

II. Տասնորդական կոտորակները միավորով յեզ զերոներով արտահայտված թվերի վրա բաժանելու համար, բավական ե ստորակետը գեպի ձախ տանել այնքան բավանան, վորբան զերոներունի բաժանապատկից:

Դիտողություն. Բազմապատկման և բաժանման ժամանակ ստորակետը անդափոխելիս պակասող թվանշանների փոխարեն պետք ե նշանակել զերոները:

Բերենք որինակներ.

$$6. 37,2 \cdot 1000 = 372 \cdot 0$$

Այստեղ ստորակետը պետք ե յերեք թվանշան դեպի աջ տանել Պակասում ե յերկու թվանշան, վորոնց տեղը զերոներն ենք դնում:

$$7. 0,25 : 100 = 0,0025$$

Այստեղ ստորակետը տանում ենք յերկու թվանշան դեպի ձախ: Պակասում ե յերկու թվանշան: Դրանց տեղը զերոներն ենք դնում:

Դիտողություն. Ստորակետը դեպի աջ տանելով տասնորդական կոտորակը մեծացնում ենք $10, 100, 1000$ անգամ և այն, իսկ դեպի ձախ տանելով տասնորդական կոտորակը փոքրացնում ենք $10, 100, 1000$ անգամ, նայած թե քանի թվանշան ե անդափոխած ստորակետը:

$$1) 0,723 \cdot 100 = \frac{723}{1000} \cdot 100 = \frac{723 \cdot 100}{1000} = \frac{723}{10} = 72,3$$

$$2) 412,73 : 100 = \frac{41273}{100} : 100 = \frac{41273}{100 \cdot 100} = \frac{41273}{10000} = 4,1273$$

Տասնուրդական կոտորակի բազմապատկում ամբողջով:

Տասնուրդական կոտորակի բազմապատկումն ամբողջ թվով՝ հանգում և թվի իմտուտավոր մասի բազմապատկմանն ամբողջ թվով:

8. Բազմապատկել՝ 4,18 . 7:

Դաշնենք արտադրյալը.

$$418 \cdot 7 = 2926$$

Ստացված արտադրյալը տարրերվում է գոռոննելի արտադրյալից, քանի փոք 4,18-ը գարձնելով 418, բազմապատկելին՝ 4,18-ը մեծացրինք 100 անգամ, Արտադրյալը նույնպես մեծացավ 100 անգամ: Ուստի գործնելի արտադրյալը գանհլու համար պետք է 2926-ը փոքրացնենք 100 անգամ և կստանանք՝ 4,18 . 7 = 29,26:

Տասնուրդական կոտորակն ամբողջով բազմապատկելու համար, պես և բազմապատկել ոված թվերը, ուսագրություն չգարենելով սուրակեփ վրա, ստացված արտադրյալում սուրակեն աշխ հաւած նշանակել այնքան թվանշներից հետո, զորքան թվանշան կար կոտորակադին արտադրիչում սուրակեփից հետո:

4,18 . 7-ի արտադրյալը կարելի յե գոտնել և ուրիշ յեղանակներով:

1) 4,18-ը բազմապատկենք իբրև հասարակ կոտորակ:

$$4,18 \cdot 7 = \frac{418}{100} \cdot 7 = \frac{418 \cdot 7}{100} = \frac{2926}{100} = 29,26$$

2) Բազմապատկումը փոխարինենք գումարումով:

$$4,18 \cdot 7 = 4,18 + 4,18 + 4,18 + 4,18 + 4,18 + 4,18 + 4,18 = 29,26$$

Բազմապատկելիի մեջ կար յերկու տասնուրդական նշան, իսկ բազմապատկիչի մեջ՝ վաչ մի տասնուրդական նշան, արտադրյալուն ել յերկու տասնուրդական նշան ստացվեց:

$$9. 3,2 \cdot 7 = 3 \frac{2}{10} \cdot 7 = \frac{32 \cdot 7}{10} = \frac{224}{10} = 22,4$$

Այսուեղ բազմապատկելիի մեջ կա մեկ տասնուրդական նշան, բազմապատկիչն՝ ամբողջ թիվ և, արտադրյալուն ել՝ մեկ տասնուրդական նշան ունի:

Բերենք տասնուրդական կոտորակը և ամբողջ ունեցող տասնուրդական կոտորակն ամբողջով բազմապատկելու մի քանի որինակներ:

$$10. 0,283 \cdot 25 = 7,075$$

$$11. 0,00538 \cdot 4307 = 23,17166$$

$$12. 0,02854 \cdot 3 = 0,08562$$

$$13. 14,805 \cdot 359 = 5314,995$$

Բազմապատկում զերոներով վերացող ամբողջ թվերով:

14. Դաշնենք 2,875-ի և 500-ի արտադրյալը:

$$2,875 \cdot 500 = 2,875 \cdot 5 \cdot 100 = 14,375 \cdot 100 = 1437,5$$

Տասնուրդական կոտորակը զերոներով վերացող թվով բազմապատկելու համար, պես և բազմապատկելին բազմապատկելի բազմապատկիփ իմաստավոր մասով, յեվ հետո արգյունական տարածությունում գեղագույն գեղի աշ այնքան թվանշան, վորան զերո կար բազմապատկիփ վերշում:

Տասնուրդական կոտորակի բազմապատկումը տասնուրդական կոտորակով:

15. Դաշնենք 6,19-ի և 2,5-ի արտադրյալը:

Լուծենք դա յերկու յեղանակով:

1) Յերկու թվերն ել գարձնենք հասարակ կոտորակներ:

$$6,19 \cdot 2,5 = \frac{619}{100} \cdot \frac{25}{10} = \frac{619 \cdot 25}{1000} = \frac{15475}{1000} = 15,475$$

2) Դաշնենք 6,19-ի և 2,5-ի արտադրյալը ուրիշ յեղանակով, առաջին արտադրիչը մեծացնենք 100 անգամ, իսկ յերկու թվագրիչին՝ 10 անգամ, արտադրյալը կլինի $619 \cdot 25 = 15,475$: Այդ արտադրյալը իսկականից մեծ և 1000 անգամ չետևապես գործնելի արտադրյալը գտնելու համար պետք է այդ թիվը փոքրացնել 1000 անգամ:

$$6,19 \cdot 2,5 = \frac{619 \cdot 25}{1000} = 15,475$$

Հաշվելով արտադրիչների և արտադրյալի թվանշանների թիվը ստորակետից գեղի աջ, կարող ենք լնդունել տասնորդական կոտորակների բազմապատկման այսպիսի կանոն.

Տասնորդական կոտորակը տասնորդական կոտորակով բազմապատկելու համար, պես և տված թվերը բազմապատկենեն իրենի ամբողջներ, բաց բոլենելով սուրակետները յեզ սացված արտադրյալում աշխատ գեղի ձախ անջատենեն այնուան թվանշան, վորքան թվանշան կա յերկու արտադրիչների սուրակետներից ենքու, միասին վեցը:

Գիտողուրյուն. Ստորակետը տեղափոխելիս սուրակառող թվանշանները տեղուած պահպանութեանից անդամ գործում են զերոներ:

16. Արթեակ. Բազմապատկենը 0,72.ը 0,003-ով:

Լուծում. $0,72 \cdot 0,003 = 0,00216$, վրանել 72.3 = 216:

Գիտողուրյուն. Տասնորդական կոտորակները բազմապատկենը դորձողությունը կատարվում և արտադրյանը բաժանում մասերով:

Տասնորդական կոտորակի բաժանումը ամբողջ թվի վրա. 1. Բաժանել՝ 164,32 : 52:
§ 7. Տասնորդական կոտորակների
բաժանումը
Լուծում. Տասնորդական կոտորակի բաժանումն ամբողջ թվի վրա սկսվում է այնպիս, ինչպես ամբողջ թվերի բաժանումը: Մեր բերած որինակում հարկավոր է 164,32-ը բաժանել 52-ի վրա: Սատանում ենք.

$164,32 : 52 = 3,16$

Լուծումը գրվում է այսպիս:

$$\begin{array}{r} -164,32 \\ -156 \\ \hline 83 \\ -52 \\ \hline 312 \\ -312 \\ \hline \end{array}$$

Հաճախ պատահում է, վոր հասնելով բաժանելի վերջին կարգին, մնացորդ ել և ստացվում: Կարելի յեւ մնացորդը

մանրացնել հարկան ցածը կարդի մասերի մեծությամբ և շարունակել բաժանումը:

2. 63,189 : 18

$$\begin{array}{r} 63,189 \\ -91 \\ \hline 3,5105 \\ -18 \\ \hline 90 \end{array}$$

Տասնորդական կոտորակն ամբողջ թվի վրա բաժանելու համար նախ պես և բաժանել ամբողջները, բանորդում սուրակետ գնելով. իսկ մնացուցքը գործնելով տասնորդական մասեր, միացնել ունեցած տասնորդական մասերին յեզ օգուտնակել կոտորակային մասի բաժանումը:

Գիտողուրյուն. Յեթե բաժանելիս ստորակետից հետո ստացվող թվանշանների թիվը այլի յեւ, քան հարկավոր և ինպար լուծան համար այդ գեղը պահպանում էն ան կարգի միացորդներով, վոր անհրաժեշտ է:

Այսպես, 2-րդ որինակում կարող ենք բավականական 3,51 քանորդով, յեթե պատասխանում հարկավոր լինել միայն հարյուրերորդական մասերով թիվ ունենալ:

Անցնենք տասնորդական կոտորակի վրա բաժանումուն բաժանում տասնորդական կոտորակի վրա.

3. Բաժանել՝

1) $1,61 : 0,5$ 2) $0,1808 : 0,452$

Լուծում. 1) Բաժանելին և բաժանաբարը մեծացնենք այնքան անդամ, վոր բաժանաբարն ամբողջ թիվ գառնա: Տըլ-յալ գեղպատմ յերկու թիվը ել պետք և բազմապատկել 10-ով: Դրանից քանորդը չի փոխվի:

$1,61 : 0,5 = 16,1 : 5$

Վերջնական լուծման համար մնում է բաժանում կատարել ամբողջ թվի վրա:

$16,1 : 5 = 3,22$

Նման ձեռվ բաժանում կատարում ենք նաև այն գեղքեցաւմ վերը բաժանաբարի կոտորակային մասը ստորակետից հետո մի քանի ստանորդական նշաններ և պարունակում:

2) $0,1808 : 0,452 = 180,8 : 452 = 0,4$

Այս գեղքում — վորակեադի բաժանարարն ամբողջ թիվ դառնա, իսկ քանորդը անփոփխ մնա, կարելի զպացվի թե բաժանելին և թե բաժանարարը մեծացնել 1 00 անգամ:

Տասնօրդական կոտորակի գրա բաժանելիս հարկավոր ե բաժանելին յեվ բաժանարարը նախապես մեծացնել այնքան անգամ, որ բաժանարարն ամբողջ թիվ դառնա Դրա համար պետք է բաժանելին յեվ բաժանարարի սուրակետները տեղափոխել զետի աշ այնքան կարգ, վորակ բաժանարարի կարգեն են սուրակետից ենու: Դրանից բանորդը չի փոխվի:

Այսպիսով, յեթե դորձ ունենք տասնորդական կոտորակների հետ, կարելի յե այդ կոտորակների բաժանումը պարզեցնել և տասնորդական կոտորակների բաժանումը դարձնել բաժանում ամբողջ թիվ վրա:

Հարկավոր և ուշագրություն դարձնել տասնորդական կոտորակների բաժանման մի քանի գեղքերի վրա:

4. Գունենք $400,4 : 728$ քանորդը:

Լուծում. $400,4 : 0,728 = 400$ $400 : 728 = 550$

Դիտադրյուն. Այս գեղքերում, յերբ բաժանելին մեջ ստորակետից հետո յեղած թվանշաններն ավելի քիչ են, քան բաժանարարում, հարկավոր և բաժանելին վերջն զերոներ ավելացներ

5. 1) $9 : 0,75 = 900 : 75 = 12$. 2) $9,9 : 2,25 = 990 : 225 = 4,4$

6. Բաժանել՝ $74,75 : 3,25$

Լուծում. $74,75 : 3,25 = 7475 : 325 = 23$

Դիտադրյուն. Յերբ բաժանելին ու բաժանարարը ստորակետից հավասար թվով նշաններ ունեն, ապա ստորակետը բաց ենք թողնում և բաժանում դառնում և ամբողջ թվերի բաժանում:

Այժմ ցույց տանք, թե ինչպես պետք ե տասնորդական կոտորակներով հաշվումներ անել այն դեպքերում, յերբ անհրաժեշտ և միաժամանակ մի քանի բազմապատկումներ ու բաժանումներ կատարել:

7. Հաշվենք հետեւյալ արտահայտությունը $\frac{4,5 \cdot 0,18 \cdot 0,005 \cdot 40}{0,012 \cdot 22,5}$

Տասնորդական կոտորակները կարելի յե փոխարինել ամբողջ թվերով՝ համարիլ և հայտարարը մեծացնելով նույնքան անգամ:

Լուծումը կարելի յե այսպես գրել.

$$\begin{aligned} \frac{4,5 \cdot 0,18 \cdot 0,005 \cdot 40}{0,012 \cdot 22,5} &= \frac{45 \cdot 18 \cdot 5 \cdot 40 \cdot 1000 \cdot 10}{10 \cdot 100 \cdot 1000 \cdot 12 \cdot 225} = \\ &= \frac{45 \cdot 18 \cdot 5 \cdot 40 \cdot 10000}{12 \cdot 225 \cdot 1000000} = \frac{6}{10} = 0,6 \end{aligned}$$

XIII. ՄԻԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏՐԱԿ ՅԵՎ ՏԱԽՈՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐՈՎ

§ 1. Տասնօրդական կոտորակի հասարակի կարգելիք

Արդեն ասել ենք, վոր ամեն մի տասնորդական կոտորակ կարելի յե դիտել և իբրև տասնորդական և իբրև հասարակ կոտորակ 0,07-ը տասնորդական ե, $\frac{7}{100}$ -ը՝ հասարակի

Տարբերությունը միայն այդ կոտորակների գրության ձեվն եւ Ուստի ամեն մի տասնորդական կոտորակ կարող ենք հասարակ կոտորտկով փոխարինել: Ստացված հասարակ կոտորակը պետք ե կրծատել, յեթե այդ հնարավոր ե, որինակ՝

$$0,24 = \frac{24}{100} = \frac{6}{25}$$

§ 2. Հասարակ կոտորակի կառականության դարձնելը

1. Այն հասարակ կոտորակները, վորոնց հայտարարները կազմված ե մեկ միավորից և գրան հաջորդող զերոներից, ուղղակի գրվում են ինչպես տասնորդական

կրամարտկներ:

Որինակ՝

$$\frac{97}{100} = 0,97 \quad \frac{48}{10000} = 0,0048$$

Հասարակ կոտորակներն ընդհանրապես, յերբ հայտարարը մեկ միավորից ու հաջորդող զերոներից չի կազմված, այլ վորեւ ուրիշ թիվ ե, տասնորդական կոտորակի ձեռվ արտահայտելու համար պետք ե բաժանում կատարել:

2. $\frac{5}{8}$ -ը դարձնել ատասնորդական կոտորակ:

Մենք գիտենք, վոր ամեն մի հասարակ կոտորակ կարող է զիտվել իբրև քանորդ, առաջացած կոտորակի համարիչը հայ-

տարարի վրա բաժանելուց՝ $\frac{5}{8}$ -ը կարելի յէ համարել 5-ը 8-ի
վրա բաժանելու արդյունք:

5-ը 8-ի վրա բաժանելով կստանանք՝

$$5 : 8 = 0,625$$

Հասարակ կոտորակը տասնորդական գարնենելու համար
պես և եւս համարիչը բաժանել հայտարարի վեա, համաձայն
տասնորդական կոտորակների բաժանման կանոնի:

§ 3. Անվերջ տասնորդական կոտորակների մասին

Կոտորակի համարիչը յուր հայտարարի
վրա բաժանելիս միշտ չի տալիս վերջնաշ-
կան արդյունք:

1. $\frac{2}{11}$ -ը դարձնենք տասնորդական կոտո-
րակ՝ դրա համար 2-ը բաժանենք 11-ի վրա:

$\frac{2}{20}$	11	$\frac{2}{11}$	$= 0,1808\dots$
$\frac{0}{20}$	0,1808...	մասնակում ե,	Սկսած յերրորդ մացորդից՝ կրկնվում են մնացորդները, ուստի սկսած հազարերրորդական
$\frac{20}{11}$	0,1808...	մասնակում յանույնպես ստացանք կրկն-	մասնակում են անվերջ տասնորդական ար-
$\frac{90}{88}$	0,1808...	վող թվանշանները: Այսպիսի բաժանման ար-	դյունքը կոչվում է անվերջ տասնորդական կոտո-
$\frac{20}{11}$	0,1808...	րակ՝ $\frac{2}{11} = 0,1808\dots$	րակ՝ $\frac{2}{11} = 0,1808\dots$

Այդ նշանակում ե, չկա ճշգրիտ տասնոր-
դական կոտորակ, վոր հավասար լինի $\frac{2}{11}$ հա-
սարակ կոտորակին: Սովորաբար այդպիսի քա-
նորդի վորեմ կարգի միավորները կլորացնում
են և ստանում կոտորակ այդ կարգի միավորի ճշտությամբ:

Այսպես, որինակ, ասում են, վոր $\frac{2}{11}$ $\approx 0,18$ մեկ հարյուրերոր-
դականի ճշտությամբ: (\approx նշանը արտահայտում է մոտավոր
հավասարությունը):

$\frac{2}{11} \approx 0,182$ մեկ հազարերրորդականի ճշտությամբ:

$\frac{2}{11} \approx 0,1818$ մեկ աստհազարերրորդականի ճշտությամբ և այլն:

Բաժանման ժամանակ տված ճշտությունը զործագրելով՝
մացնում ենք վորոշ պարզություն:

2. 93 : 11 մեկ տասնորդականի ճշտությամբ: Վճռքան և
քանորդը:

Լուծում.

$\frac{93}{88}$	11	$\frac{5}{64}$	Քանորդում ստորակետից հետո առաջն թվանշանը 4-ն եւ Յեթե շարունակենք բաժա- նումը, քանորդի հետեւյալ թվանշանները կլինեն 545: Այդ ցույց ե անլիս, վոր ավելի ճիշտ կի- նի 4 տասնորդականի փոխարեն վերցնել 5 տասնորդական:
$\frac{50}{44}$	60	55	Գիտողություն: Կարեք չկա քանորդի հետեւյալ թվանշանը հաջվելու, բավական և մնացորդը համեմատել բաժանարարի հետ, յեթե զա բաժանարարի կեսից ավելի լինի, ապա քանորդի հետեւյալ թվով 5-ից մեծ կլինի:
$\frac{60}{55}$	50		

Պատուի բաժանումը կերպություն: Կարեք չկա քանորդի հետեւյալ
թվանշանը հաջվելու, բավական և մնացորդը համեմատել
բաժանարարի հետ, յեթե զա բաժանարարի կեսից ավելի լինի, ապա քանորդի
հետեւյալ թվով 5-ից մեծ կլինի:

Պոտավոր բանուցի վերջին բվածանը ստանալու համար
պես և մնացորդը համեմատել բաժանարարի վեա, յեթե մնա-
ցորդը հավասար է կամ մեծ և բաժանարարի կեսից, ապա
հարկավոր է մեկ միավորով մեծացնել բանուցի բված-
անը, իսկ յեթե պակաս է բաժանարարի կեսից, ապա պես և
մնացորդը մի կողմ բողնելի, առանց փոփոխելու բանուցը:

3. Ամերիկական գաղգրահները հարմարեցված են անդիմա-
կան չափերի սիստեմին, վորտեղ փոքր յերկարությունները
չափվում են դյույմով (1 դյույմը = 25,4 մմ):

Պետք ե մետրական չափերի վերածել $\frac{5}{64}$ դյույմը:

Նույն յերկարությունը միլիմետրով կլինի՝

$$25,4 \cdot \frac{5}{64} = \frac{25,4 \cdot 5}{64} = \frac{127}{64} \text{ մմ}$$

$\frac{127}{64}$	դարձնելով	տասնորդական կոտորակ, կոտանանք
1,984 375 մմ:		

Դազգահի աշխատանքը թույլ ե տալիս ճշտությունը հասց-
նել միայն մինչև միլիմետրի հարյուրերրորդական մասերը: 127-ը
բաժանելով 64-ի վրա, պետք ե կանգ առնենք, յերբ քանորդում
հարյուրերրորդական մասեր ստացվեն, և խնդրի պատասխանը
1,98 մմ լինի:

ինչպես այս որինակից յերեսում ե, կոտորակի տասնորդական նիշերի թիվը սահմանվում է տեխնիկական պայմաններով՝ նույնիսկ այն ժամանակ, յերբ հասարակ կոտորակը վերջնական տասնորդական և զառնում, պետք է տասնորդական նիշերի թիվը սահմանափակել, համաձայն խնդրի պայմանների:

Հարկավոր և ուշագրություն դարձնել բաժանման այն առանձնահատկության վրա, վորով քանորդում անվերջ կոտորակներ են ստացվում: Անվերջ բաժանումից միշտ առաջանում են կրկնվող մնացորդներ:

Իրոք, անվերջ բաժանման ժամանակ միշտ ել չի կարող տարբեր մնացորդներ ստացվել, քանի վոր լուրաքանչյուր նոր մնացորդ պետք է պակաս լինի բաժանաբարից, իսկ այդպիսի մնացորդների թիվը սահմանափակ եւ:

Վերևում բերված որինակներից մեկն և $2 : 11 = 0,1818\dots$ Քանի վոր այսեղ բաժանաբարը 11 ե, ուստի մնացորդ կարող ել լինել 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10—ընդամենը տասը տարբեր մնացորդներ:

Անվերջ բաժանման ժամանակ այդ մնացորդները հանդես գալով, անշուշտ, վորեն տեղում կոկսվի սրանցից մեկն ու մեկը կրկնվել և այնուաեան նրան կհաջորդեն մյուս բոլոր մնացորդները նույն կարգով:

Մեր որինակում կրկնությունը սկսվում է 2 մնացորդից: Մնացորդի կրկնությունն անդրադառնում է քանորդի վրա—այսուել ել ստանում ենք նույն թվանշանները, վոր առաջ ունեցինք, և նույն հաջորդականությամբ: Յեթե մնացորդները մի քանի անգամ են կրկնվում, ալդքան անգամ ել պարբերաբար կրկնվում են քանորդի թվանշանները: Անվերջ բաժանման ժամանակ քանորդի կրկնվող թվանշանների խումբը կոչվում է պարբերություն, իսկ այն անվերջ տասնորդական կոտորակը, վոր ստացվում է քանորդում այդ ժամանակը, կոչվում է պարբերական կոտորակ:

$2 : 11 = 0,18\dots$ քանորդում ստանում ենք պարբերական կոտորակ, վորաեղ «18»-ը պարբերությունն ե, կազմված յերկու թվանշանից:

Սա իմաստում. Յերեւ անվերջ տասնորդական կոտորակում, ոկտենով տասնորդական վորեգի նշանից, մի բանի բվանանենենք խումբ 60-ն կարգով կրկնվում է անսահմանափակ անդի լուսական վորեգի տասնորդական կոտորակը կոչվում է պարբերական կոտորակ:

Պարբերական կոտորակը նշանակվում է բազմակետով, վորը գրվում և պարբերությունից հետո:

Որինակ, 1) $\frac{2}{11} = 0,1818\dots$ արտահայտության մեջ տարբերությունը 1 և 8 թվանշաններն են (18 թիվը):

$$2) \frac{5}{12} = 0,41666\dots$$

5-ը տասնորդական դարձնելիս ձևափոխվում է իրեն պարբերական կոտորակ: Պարբերությունը 6 թիվն եւ:

Վորդեպի պարզեցնք, թե վոր հասարակ կոտորակներն են գործեալի պարզեցնք, թե վոր հասարակ կոտորակներն են կերպավոր տասնորդական և վորոնք անվերջ, քննարդառնում վերջավոր տասնորդական դարձնելու մի յեղանակ ևս կենք հասարակը տասնորդական դարձնելու մի յեղանակ ևս: Այդ այն յեղանակն եւ, վորի համաձայն պետք է լրացուցիչ բաղդամակալիչներ վորոնել կոտորակի թե համարիչի և թե հայտապարի համար՝ կոտորակի հայտարարը վերածելով միավորի ու հաջորդող գերաններից կազմված թիվն:

Այդ յեղանակը կիրառվում է միայն չկրճատվող կոտորակների նկատմամբ, այսինքն այն կոտորակների, վարոնց բոլոր կրճատմաններն արված են, և համարիչն ու հայտարարը փոխադարձ պարզ թիվը են:

4. Հետեւյալ հասարակ կոտորակները դարձնել տասնորդական կոտորակներ:

$$\frac{1}{2}, \frac{1}{4}, \frac{1}{8}, \frac{1}{16}, \frac{1}{32}, \frac{1}{64}, \frac{8}{256}, \frac{7}{512}, \frac{11}{1024}$$

Լուծում:

$$\frac{1}{2} = \frac{5 \cdot 1}{5 \cdot 2} = \frac{5}{10}$$

$$\frac{1}{4} = \frac{25 \cdot 1}{25 \cdot 4} = \frac{25}{100}$$

$$\frac{1}{8} = \frac{125 \cdot 1}{125 \cdot 8} = \frac{125}{1000}$$

$$\frac{1}{16} = \frac{625 \cdot 1}{625 \cdot 16} = \frac{625}{10000}$$

Ըման ձեռվ գոնում են նաև $\frac{3}{250}$ -ի, $\frac{7}{500}$ -ի, $\frac{11}{40}$ -ի բացուշիչները:

Յուլյո տված յեղանակով հասարակ կոտորակը տասնորդական դարձնում ենք միայն այն ժամանակի, յերբ հասարակ կոտորակի հայտարար հանդիսանում ե 2 և 5 կամավոր աստիճանների արտադրյալը:

Այլ գեպքերում այդ անգործազրելի է: Այդ յուլյո տանք ժի որինակով:

5. Տասնորդական կոտորակ դարձնենք $\frac{2}{3}$ -ը և $\frac{5}{12}$ -ը:

$$\text{Լուծում. } 1) \frac{2}{3} = 0,666\ldots, 2) \frac{5}{12} = 0,41666\ldots$$

Այդ որինակներում քանորդը պարզերական կոտորակի տեսք ունի:

Հեշտ կարելի յե հասկանալ թե ինչու յուրաքանչյուր հասարակ կոտորակ չի կարելի ճիշտ տասնորդական կոտորակի վերածել Յեթե չկրճատվող կոտորակի հայտարարը, բացի 2-ից և 5-ից, ուրիշ պարզ արտադրյակներ են ունի, ապա այդպիսի կոտորակից չի կարելի 10, 100, 1000 հայտարար ունեցող կոտորակ ստանալ:

$\frac{2}{3}$ -ը և $\frac{5}{12}$ -ը չի կարելի ճշգրիտ տասնորդական կոտորակի իրածել: Զենք կարող այնպիսի ամրող թիվ գտնել, վոր յեթե 3-ով բազմապատկելու լինենք, ստանանք 10, 100, 1000 և այլն նույն բանը տեսնում ենք $\frac{5}{12}$ կոտորակում:

$$\frac{5}{12} = \frac{5}{2 \cdot 2 \cdot 3} = \frac{5 \cdot 5 \cdot 5}{2 \cdot 2 \cdot 5 \cdot 3} = \frac{125}{100 \cdot 3}$$

Այստեղ անկարող ենք 3-ի համար հարկավոր բազմապատկելը գտներ:

I. Յերե չկրճատվող կոտորակի հայտարարը պարզ բազմապատկիշերի վերլուծելիս տալիս ե միայն 2 յե 5 արտագրյալներ, ապա այդպիսի կոտորակը կարող ե գտնալ վերջավոր տասնորդական կոտորակ:

II. Յերե չկրճատվող կոտորարը պարզ բազմապատկիշերի վերլուծելիս տալիս ե այնպիսի արտագրյալ, վոր չունի յերկուսներ յե եինքե կամ այնպիսի արտագրյալ, վոր չունի բացի 2-ից յե 5-ից, մենում են նաև վերի ուրիշ բազմապատկիշեր, այս այդպիսի կոտորակը չի կարելի վերջավոր տասնորդական կոտորակ կունակ գտնենք:

Այն հաշվումները, վորոնք կատարելիս միաժամանակ ոգովում են հասարակ և տասնորդական կոտորակներից, առանձնապես զործագրվում են բարդ հաշվների մեջ: Այդ գեպքում բոլոր տասնորդական կոտորակները պարձնել են գրանցումները: Ուրիշ կերպ ել կարելի յե անել ցով կատարել հաշվումները: Ուրիշ կերպ ել կարելի յե անել ցով զործագրվում են բարձնել տասնորդական կոտորակների հետ:

Սակայն զործնականում այդպիսի պարզեցումները միշտ ձեռնուու չեն, յերբեմն ավելի լավ ե հասարակ և տասնորդական կոտորակները թողնել նույնությամբ՝ անփոփոխ: Կոտորակների մուտքագրությունը կազմվում է այսպիսի:

$$\text{Օրինակներ } 1) 0,0028 \cdot \frac{4}{7} = 0,0028 \cdot \frac{4}{7} = 0,0016$$

$$0,0028 \cdot \frac{4}{7} = \frac{0,0028 \cdot 4}{7} = 0,0004 \cdot 4 = 0,0016$$

Լուծելիս թողեցինք հասարակ կոտորակը: Յեթե $\frac{4}{7}$ -ը յանչ կանալինք տասնորդական կոտորակ դարձնել կառաջանային մուտքագր թվեր:

$$2) 9 \cdot 11 \cdot \frac{11}{15} : 2,64 = 2,64 \cdot \frac{11}{15} \cdot \frac{11}{15} = 2,64 \cdot \frac{121}{225} = 2,64 \cdot 0,54 = 1,43$$

Լուծում. $2,64 \cdot \frac{11}{15}$ վրա բաժանենք համաձայն ամբողջ թվի վրա բաժանելու կանոնի:

$$1,43 : 2,64 = \frac{11}{15} : 2,64 = \frac{11 \cdot 100}{15 \cdot 264} = \frac{100}{360} = \frac{100}{360} = \frac{5}{18}$$

$$3) 0,753 \cdot \frac{12}{251} = 0,753 \cdot \frac{12}{251} = 0,753 \cdot 0,048 = 0,036$$

Բազմապատկում ենք ամբողջ թիվը կոտորակով բազմապատկելու կանոնով:

$$0,753 \cdot \frac{12}{251} = \frac{0,753 \cdot 12}{251} = \frac{753 \cdot 12}{1000 \cdot 251} = \frac{8 \cdot 12}{1000} = \frac{86}{1000} = 0,036$$

Այստեղ բազմապատկերիս և բաժանելիս տասնորդական կոտորակի հետ գարվում ենք այնպես, ինչպես ամբողջ թվի հետ:

Տասնորդական կոտորակն հասարակ դարձնելն այն ժամանակ ե ձեռնոտու, յերբ հասարակ ու տասնորդական կոտորակները բազմապատկում կոմ բաժանում ենք միատեղ:

Հասարակ և տասնորդական կոտորակի միատեղ գումարման, ինչպես և հանման գեղքերում միայն փոքր տասնորդական կոտորակներն ենք դարձնում հասարակ կոտորակներ, իսկ ամենի բարդ գեղքերում ձեռնոտու յե հասարակ կոտորակը դարձնել տասնորդական.

$$4) \frac{2}{7} + 0,3 - \frac{1}{4} = \frac{2}{7} + \frac{3}{10} - \frac{1}{4} = \frac{40 + 42 - 35}{140} = \frac{47}{140}$$

$$5) \text{Հաշվել } \frac{7}{12} \cdot \frac{3}{5} \cdot 0,18 : 0,125$$

Լուծում.

$$\frac{7}{12} \cdot \frac{3}{5} \cdot 0,48 : 0,125 = \frac{7 \cdot 3 \cdot 48 \cdot 1000}{12 \cdot 5 \cdot 125 \cdot 100} = \frac{7 \cdot 3 \cdot 4 \cdot 10}{5 \cdot 125}$$

Լուծումը հեշտացնելու համար կարելի յե համարիչը և հայտարարը բազմապատկել 2-ով և ծ-ով, վորովհետև 2 և 5 բազմապատկիչները բազմապատկելիս հայտարարում ստանում ենք 10, իսկ 8-ը 125-ով բազմապատկելիս հայտարարում ստանում ենք 1000:

$$\frac{2 \cdot 8 \cdot 7 \cdot 3 \cdot 4 \cdot 10}{5 \cdot 2 \cdot 125 \cdot 8} = \frac{2 \cdot 8 \cdot 7 \cdot 8 \cdot 4 \cdot 10}{10 \cdot 1000}$$

Ստացանք ավելի հարմար արտահայտություն, վորը կը ճառավում հետո տալիս և ալսպիսի արդյունք:

$$\frac{2 \cdot 8 \cdot 7 \cdot 8 \cdot 4}{1000} = \frac{1344}{1000} = 1,344$$

Դիսողություն. Եերե ստացված կոտորակի հայտարարում պատահ է, 25, 125 բազմապատկիչներ, ապա այդ կոտորակի և համարիչը և հայտարարը պետք ե համապատասխարար բազմապատկել 2-ով, 4-ով, 8-ով

$$6) \frac{11}{13} + 8,823 + \frac{1}{50} \approx 0,846 + 8,823 + 0,020 \approx 9,689$$

Դիսողություն I. Եերե հաշվումների ժամանակ հանդիպում են և՝ կոտորակներ, ապա հասարակ կոտորակը տասնորդականի վերացնելիս պետք ե այնքան տասնորդական նշաններ դականի վերացնելիս և կոտորայնելիս պետք ե այնքան տասնորդական կոտորակները անջատել, վորքան թվանշաններ ունեն տվյալ տասնորդական կոտորակները:

Դիսողություն II. Մոտավոր թվերի գումարման և հանաւան գեղարումը բոլոր զումարելիները, նվազելին ու հանելին ստորակետից հետո պետք ե նույնչափ թվանշաններ ունենան:

Դիսողություն III. Մոտավոր թվերի բազմապատկման և բաժանման ժամանակ բոլոր արտազրիչները, արտազրյալը, բաժանելին, բաժանած ժամարը և քանորդը պետք ե նույնչափ թվանշաններ ունենան իմաստավոր առան:

$$7) \frac{8}{7} \cdot 0,51 \approx 0,43 \cdot 0,51 \approx 0,22$$

$$8) \frac{111}{115} \cdot 0,376 \approx 0,965 \cdot 0,376 \approx 0,363$$

$$9) 5,73 : 28,1 \approx 57,3 : 281 \approx 0,204$$

XIV. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՃԱՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ Ա. Թավերի բազմապատման յերկու յիզանակ զուգերի յուն ունի:

Արթակ. Շինարարությունն աղյուսի գործարանին վճարեց լերկու անգամ ստացված

աղյուսի համար 4800 ու և 1200 ու Բազդատենք այդ թվերը լուծում. Կարելի յե տալ լերկու պատասխան. 1) Կարերի անգամ ասել լերկու վոր առաջին անգամ ստացված աղյուսի համար վճարեցին 3600 ուռբլի ավելի, քան լերկրորդ անգամ ստացածի համար:

2) Կարելի յե ասել նաև, վոր առաջին անգամ ստացած աղյուսի համար վճարեցին 4 անգամ ավելի, քան լերկրորդ անգամ ստացածի համար:

Եերկու զետքում ել ունենք յերկու համասեռ մեծությունների հարաբերություններ

Առաջին դեպքում թվերը բաղդատեցինք ճանհլու միջոցով, իսկ յերկրորդ դեպքում բաժանելու Առաջին արդյունքը կոչվում է տարբերական հարաբերություն, իսկ յերկրորդը՝ քանորդական հարաբերություն:

Տարբերական հարաբերությունը լերկու թվերի բաղդատաման արգյունքն է հանման գործողության միջոցով. Որինակ՝ 25 միլ. ս. – 10 միլ. ս. = 15 միլ. ս.

Քանորդական հարաբերությունը լերկու թվերի բաղդատաման արգյունքն է բաժանման գործողության միջոցով. Այս հարաբերությանը համապատասխանում է մի թիվ, զոր կարող է լինել ամբողջ կամ կոտորակ.

$$\text{Որինակ. } 1) \frac{210}{35} = 6, \quad 2) \frac{25}{10} = 2 \frac{1}{2}$$

Ամեն մի հարաբերության մեջ մենք ունենք յերկու թիվ, զորոնց բաղդատում ենք: Այդ թվերը կոչվում են հարաբերության անդամներ:

Առաջին թիվը կոչվում է հարաբերության նախորդ անդամ:

Երկրորդ թիվը կոչվում է հարաբերության հետնորդ անդամ:

Տարբերական հարաբերությունը առանելով գրվում է այսպիս:

$$a - b = d$$

Այսուղ ձևում նշանակում է հարաբերության նախորդ անդամը, ենա հետնորդ անդամը, իսկ $(a - b)$ -ն, կամ դրան հավասար ձևում նշանակում է տարբերական հարաբերության մեծությունը:

Թափանցական հարաբերությունը առանելով գրվում է այսպիս:

$$a : b = q \quad \text{կամ} \quad \frac{a}{b} = q$$

Այսուղ նույնպես ձևում նշանակում է հարաբերության նախորդ անդամը, ենա հետնորդ անդամը, իսկ $\frac{a}{b}$, կամ դրան հավասար զանորդական հարաբերության մեծությունը:

Օրինակ. Շենքի պատերի շարվածքի վրա ծախսվեց 40 000 ռ., Ցեղե պատերն ավելի բարակ լինելին, ապա թեթև տիպի շարվածքը կնսաեր 20 000 ռուբլի:

Քանի անդամ է պակասում շարվածքի արժեքը թեթև տիպի շարվածքի գեպը:

Լուծում. Պետք է գիտենալ թե ծանր տիպի պատի շարվածքի համար քանի անդամ ավելի յէ ծախսվում քան թեթև պատի շարվածքի համար:

Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է բաղդատել թվերը, բաժանման միջոցով գտնում ենք հետևյալ հարաբերությունը:

$$\frac{40\ 000}{20\ 000} = 2 \quad \text{պատասխան՝ 2 անդամ:}$$

Հարցը կարելի յեր զնել այլ կերպ, այն եւ թեթև տիպի պատի արժեքը սկզբում նախատեսած արժեքի վեր մասն է կազմում:

Խնդրի այս ձևի լուծման համար պետք է հարաբերության անդամների տեղերը փոխենք (տեղափոխենք):

$$\frac{20\ 000}{40\ 000} = \frac{1}{2} \quad \text{պատասխան՝ } \frac{1}{2}$$

Երկրորդ հարաբերությունն արտահայտված է մի թվով, զոր նախորդի հակադարձ մեծությունն եւ:

I. Մեծ թիվի հարաբերությունը փոքրին՝ ցույց է տալիս, թե առաջին թիվը յերկրորդից խնի անգամ է մեծ:

II. Փոքր թիվի հարաբերությունը մեծին՝ ցույց է տալիս, թե փոքր թիվը մեծի վոր մասն է կազմում:

III. Հարաբերության անգամները տեղափոխելուց սացվում է մի նոր հարաբերություն, զոր առաջինի հազարան մեծությունն է:

§ 3. Քանօրգական
հարաբերության
գլխավոր
համարյաներ

Կոտորակների հատկություններին վերա-
բերող գլխում մենք ցուց տվինք, վոր
քանորդը, կոտորակը և հարաբերությունը
կարելի յե զիտել վորպես միենույն գոր-
ծողություն՝ բաժանման արդյունք։ Այդ
պատճառով կոտորակի և քանորդի հատկությունները կարող
ենք վերագրել նաև հարաբերությանը։
Թվենք այդ հատկությունները.

I. Յերե հարաբերության նախորդ անդամը մի բանի ան-
գամ մեծացնենք, հարաբերությունն ել մի բանի անգամ կմե-
ծանա։ Յերե հարաբերության նախորդ անդամը մի բանի ան-
գամ փոքրացնենք, հարաբերությունն ել նույնին անգամ
կփոքրանա։

II. Յերե հարաբերության հետնորդ անդամը մի բանի ան-
գամ մեծացնենք, հարաբերությունը նույնին անգամ կփոքրա-
նա։ Յերե հարաբերության հետնորդ անդամը մի բանի անգամ
փոքրացնենք, հարաբերությունը նույնին անգամ կմեծանա։

Որինակ՝ մեծացնելով $\frac{80}{20} = 4$ հարաբերության նախորդ

անդամը 3 անգամ, կոտանանք $\frac{240}{20} = 12$ նոր հարաբերությունը,
վորը 3 անգամ մեծ և նախորդից Մեծացնելով նույն
հարաբերության հետնորդ անդամը 2 անգամ, կոտանանք
 $\frac{80}{40} = 2$ հարաբերությունը, վոր 2 անգամ փոքր և սկզբնական

հարաբերությունից։

Կոտորակների հիմնական հատկությունն ել պահում և յուր
ճշտությունը հարաբերությունների համար։ Այդ հատկությունը
մենք կանգանենք հարաբերության գլխավոր հատկություն։

III. Յերե հարաբերության յեւկու անգամներն ել բազ-
մապատկենք կամ բաժանենք միյեվնույն բառով, կփոփոխվի
միայն հարաբերության տեսք, իսկ նրա բական առծեմն ան-
փոփոխ կմնա։

Որինակ՝ $\frac{6\,000\,000\,000}{2\,000\,000\,000} = \frac{6}{2} = 3$ հարաբերությունը

Նշենք հարաբերության մի հատկություն եք
վերցնենք $\frac{12}{4} = 3$ հարաբերությունը,

Արտահայտենք այդ հարաբերության նախորդ անդամը
հետնորդի և հարաբերության մեծության միջոցով, համաձայն
հետևյալ կանոնի—բաժանելին հավասար և բաժանաբարին՝
բաղմապատկած քանորդով։

12=4. 3

Այսուեղ մենք ստանում ենք հարաբերության նախորդ
անդամը, գիտենալով և նրա հետնորդ անդամի հարաբերության
մեծությունը, գրի առնելով այդ կատանանք։

Նախորդ անդ. = հետնորդ անդ. \times հարաբերության մեծու-
թյունով։

Նույն հատկությունը բառերով կարտահայտվի այսպես.

IV. Քանօրգական հարաբերության նախորդ անգամը հա-
վասար և հետնորդ անգամի յեզ հարաբերության մեծության
արտադրյալին։

§ 4. Հարաբերու-
թյան անհայտ ան-
գամը գտնելը

Հարաբերության հատկությունները մեզ
հնարավորություն են տալիս գտնելու նրա
անհայտ անդամը, յեթե հայտնի յեն միուս
անդամը և հարաբերության մեծությունը։

1. $\frac{x}{3} = 5$: Այսուեղ անհայտը հարաբերության նախորդ ան-
գամն ե, վոր նույն բաժանելին ե։ Գտնում ենք՝

$x = 3 \cdot 5 = 15$

2. $\frac{72}{x} = 4$: Այսուեղ անհայտը անհայտը բաժանաբարն ե, կամ նույն
և առել՝ հարաբերության հետնորդ անդամը։ Գտնում ենք՝

$x = \frac{72}{4} = 18$

§ 5. Կրճատումներ՝ հարաբերությունների մեջ չարաբերության գլխավոր հատկությունը մեզ թույլ ե տալիս պարզեցու հարաբերությունները և կրճատել նրանց անդամները:

I. Կրճատում հարաբերությունների մեջ չարաբերության գլխավոր հատկությունը մեզ թույլ ե տալիս պարզեցու հարաբերությունները և կրճատել նրանց անդամները:
1. Գտնենք $17\ 200$ և 1290 թվերի հարաբերությունը:

Լուծում.

$$\frac{17\ 200}{1290} = \frac{1720}{129} = \frac{40}{3}$$

Բաժանելով կրճատեցինք հարաբերության նախորդ և հետնորդ անդամները նախ 10-ի , ապա 43-ի վրա:

Եթե բանուրդական հարաբերության նախորդ յեզ եւենորդ անդամներն ունեն ընդհանուր բազմապատկիշ, կարելի յե հարաբերությունը կրճատել այդ բազմապատկիշով:

II. Հարաբերության մեջ կոտորակային թվերի փոխարհումն ամբողջ թվերով:

2. Գտնեք հետեւյալ թվերի հարաբերությունները. 1) $40,5$, $15,3$, 2) $2\frac{1}{2} : \frac{3}{4}$:

Լուծում.

$$1) \ 40,5 : 15,3 = \frac{40,5}{15,3} = \frac{405}{153} = \frac{45}{17} = 45 : 17$$

$$2) \ 2\frac{1}{2} : \frac{3}{4} = \frac{5}{2} : \frac{3}{4} = \frac{5 \cdot 4}{2 \cdot 3} = \frac{10}{3} = 10 : 3$$

Այս որինակների մէջ կոտորակները բուժանելով և կրճատելով՝ մենք կոտորակային թվերի հարաբերությունը փոխարինում ենք ամբողջ թվերի հարաբերությամբ:

Կոտորակա ին թվերի հարաբերությունը գտնելու համար պես ե այդ թվերը բերել ընդհանուր հայտարարի յեզ գեն զելով այդ հայտարար՝ գրել համարիչների հարաբերությունը

$$1) \ 5,9 : 4,7 \text{ հարաբերությունը} = 59,47$$

$$2) \ 4,113 : 2,5 \text{ հարաբերությունը} = 413,250$$

§ 6. Հասկացողություն համեմատությունների մասին

Դիսուր գուրյունը. Քանորդական համեմատությունն այսուհետեւ կանգանենք «ամեմատություն»:

Խնդիր. Փոստատար գնացքը 6 ժամում անցավ 180 կմ: Շարունակելով առաջ շարժվելը, նա 3 ժամում անցավ 90 կմ: Փոխվեց արդիոք գնացքի արագությունը:

Լուծում. Ճանապարհի առաջին մասը գնացքն անցավ ժամում $\frac{180}{6} = 30$ կմ արագությամբ: Ճանապարհի յերկրորդ մասը նա անցավ նույնպես ժամում $\frac{90}{3} = 30$ կմ արագությամբ: Գնացքի արագությունը չի փոխվել: Այս ինդիրի մեջ $\frac{180}{6} = 30$ և $\frac{90}{3} = 30$ հարաբերությունները հավասար են: Նրանց հավասարությունը՝ $\frac{180}{6} = \frac{90}{3}$ կազմում ե համեմատություն:

Այս համեմատությունը կարգացվում է այսպես՝ 1) 180 -ը հարաբերում է 6-ին այնպես, ինչպես 90 -ը հարաբերում է 3-ին , կամ 2) 180-ի և 6-ի հարաբերությունը հավասար է 90-ի և 3-ի հարաբերությանը. կամ 3) 180-ը 6-ից այնքան անդամ է մեծ, զորքան անդամ 90-ը մեծ է 3-ից :

Համեմատությունը տառերով կգրվի այսպես՝

$$a : b = c : d, \text{ կամ } \frac{a}{b} = \frac{c}{d}$$

Համեմատության յուրաքանչյուր անդամ ունի իր անունը: և գոչ կոչվում են ծայր անդամներ, եւ շաման միջին անդամներ:

Սակայն թվերը, փորոնցից կարելի յե համեմատություն կազմենք կոչվում են համեմատական թվեր:

§ 3. Քանորդական
հարաբերության
գլխավոր
հատկությունները

Կոտորակների հատկություններին վերաբերող գլխում մենք ցուց ավինք, զորքանորդը, կոտորակը և հարաբերությունը կարելի յի գիտել վորպես միենույն գործողություն՝ բաժանման արդյունք։ Այդպատճառով կոտորակի և քանորդի հատկությունները կարող ենք վերագրել նաև հարաբերությանը։
Թվենք այդ հատկությունները։

I. Եթե հարաբերության նախորդ անդամը մի բանի անգամ մեծացնենք, հարաբերությունն ել մի բանի անգամ կմեծանա։ Եթե հարաբերության նախորդ անդամը մի բանի անգամ փոփացնենք, հարաբերությունն ել նույնան անգամ կփոփանա։

II. Եթե հարաբերության հետնորդ անդամը մի բանի անգամ մեծացնենք, հարաբերությունը նույնան անգամ կփոփանա։ Եթե հարաբերության հետնորդ անդամը մի բանի անգամ փոփացնենք, հարաբերությունը նույնան անգամ կմեծանա։

$\text{Որինակ} \cdot \frac{\text{մեծացնելով}}{20} = \frac{80}{20} = 4$ հարաբերության նախորդ անդամը 3 անգամ, կստանանք $\frac{240}{20} = 12$ նոր հարաբերությունը, վորը 3 անգամ մեծ և նախորդից։ Մեծացնելով նույն հարաբերության հետնորդ անդամը 2 անգամ, կստանանք $\frac{80}{40} = 2$ հարաբերությունը, վոր 2 անգամ փոքր և սկզբնական հարաբերությունից։

Կոտորակների հիմնական հատկությունն ել պահում է յուր նշառությունը հարաբերությունների համար։ Այդ հատկությունը մենք կանգանանք հարաբերության գլխավոր հատկություն։

III. Եթե հարաբերության յեւկու անգամներն ել բազմապատճենն կամ բաժանենք միյեվնույն թվով, կփոփոխվի միայն հարաբերության տեսք, իսկ նրա բավական արժեքն անփոխ կմնա։

$$\text{Որինակ} \cdot \frac{6\,000\,000\,000}{2\,000\,000\,000} = \frac{6}{2} = 3 \text{ հարաբերությունը}$$

Նշենք հարաբերության մի հատկություն եղ վերցնենք $\frac{12}{4} = 3$ հարաբերությունը։

Արտահայտենք այդ հարաբերության նախորդ անդամը հետնորդի և հարաբերության մեծության միջոցով, համաձայն հետեւյալ կանոնի՝ բաժանելին հավասար և բաժանարարին բազմապատճած քանորդով։

12=4·3

Այսուղ մենք ստանում ենք հարաբերության նախորդ անդամը, գիտենալով և նրա հետնորդ անդամի հարաբերության մեծությունը, զրի առնելով այդ կստանանք։

Նախորդ անդ. = հետնորդ անդ. \times հարաբերության մեծությունով։

Նույն հատկությունը բառերով կարտահայտվի այսպես։

IV. Քանորդական հարաբերության նախորդ անդամը հավասար և հետնորդ անդամի յեզ հարաբերության մեծության արտադրյալին։

§ 4. Հարաբերության անհայտ անդամը գտնելը

1. $\frac{x}{3} = 5$ ։ Այսուղ անհայտը հարաբերության նախորդ անդամն ե, վոր նույն բաժանելին ե։ Դանում ենք՝
 $x = 3 \cdot 5 = 15$

2. $\frac{72}{x} = 4$ ։ Այսուղ անհայտը բաժանարարն ե, կամ նույն և առել հարաբերության հետնորդ անդամը։ Դանում ենք՝

$$x = \frac{72}{4} = 18$$

§ 7. Համեմատության իմաստանքներ

1. Գնված է 10 մ մանուֆակտուրա, մետրը 20 սուբլով, նույն փողով քանի մետր մանուֆակտուրա կարելի յե գնել լեթե մետրն արժենա 5 ռ.

Լուծում. $10 \cdot 20 = 200$ սուբ. $200 : 5 = 40$ մ:

200 սուբլով կարելի յե գնել մետրը 5 սուբլանոց 40 մ մանուֆակտուրա:

Ցեխե յերկու դեպքումն ել բաղատենք արժեքն ու մետրերի թվերը կոտանանք $\frac{4}{10} = \frac{20}{5}$ համեմատությունը, վորովհետեւ թվերի հարաբերությունները հավասար են. Միաժամանակ $40 \cdot 5$ և $20 \cdot 10$ արտադրյանները նույնպես հավասար են (յերկու դեպքերում ել միևնույն գումարն եր ծախսվելու):

Համեմատության հիմնական հատկությունն այս եւ Այսինքն՝

Համեմատության միջին անդամների արտադրյալը հավասար է ծայր անդամների արտադրյալին:

2. $20, 4, 15$ և 3 թվերից համեմատություն կազմենք և ստուգենք համեմատության հիմնական հատկությունը:

Լուծում. կազմենք հետեւյալ հավասար հարաբերությունները:

$$\frac{20}{4} = 5, \quad \frac{15}{3} = 5$$

$$\text{Կոտանանք } \frac{20}{4} = \frac{15}{3}$$

Համեմատությունը, վորի մեջ՝ $20 \cdot 3 = 4 \cdot 15$

Համեմատության հիմնական հատկությունը կարելի յե արտահայտել և ապացուցել նաև տառերով:

Դիցուք՝ $\frac{a}{b} = \frac{c}{d} \cdot \text{այդ } d\text{-ամանակ } \text{այս } \text{հարաբերությունից$ յուրաքանչյուրը բաղմապատկելով bcd -ով, ստանամ $\frac{abd}{b} = \frac{ecd}{d}$ կամ, կրճատելուց հետո՝ $ad = bce$

§ 8. Ցված թվերից համեմատություններ

1. Կազմեցեք համեմատություն $20, 12, 10$ 6 թվերից և ստուգեցեք նարարար և արդյուքը լինդրի լուծումը:

Լուծում. 1) Լուծելու համար թվերը գաղափարենք նրանց մեծության կարգով $20, 12, 10, 6$ կազմենք համեմատությունը $20 : 12 = 10 : 6$

Ցերկու հարաբերություններն ել հավասար են $\frac{5}{3} - \text{ին}$

2) Կիրառելով համեմատության հիմնական հատկությունը ստուգենք այս համեմատությունը:

$$20 \cdot 6 = 12 \cdot 10$$

Շայդ անդամների արտադրյալը հավասար է միջին անդամների արտադրյալին և 120-ի. Համեմատությունը ճիշտ ե. $20, 12, 10$ և 6 թվերը համեմատական են:

3) $25, 10, 8$ և 4 թվերից կարելի յե արդյուք համեմատություն կազմելու Ցեխի գրենք $25 : 10 = 8 : 4$ հարաբերությունները, ապա նրանց միջն հավասարության նշան դնել չե կարելի և ծայրանդամների արտադրյալը՝ $25 \cdot 4 = 8 \cdot 10$ հավասար չե միջին անդամների արտադրյալին՝ $10 \cdot 8 = 25$.

25, 10, 8 և 4 թվերը համեմատական չեն:

Այժմ կարող ենք ստամանել այս պայմանը, վոր տված չորս թվերից հնարավոր լինի համեմատություն կազմել: Կարող ենք տալ նաև համեմատություն կազմելու կանոնը:

I. Ցերկե յերկու թվերի արտադրյալը հավասար է յերկու այլ թվերի արտադրյալին, ապա այդ որու թվերը համեմատական են:

II. Համեմատություն կազմելիս պետք է արտադրյալներից մեկի թվերը գարձնել համեմատության միջին անդամներ, իսկ մյուսինը՝ ծայր անդամներ:

2. Կազմեցեք համեմատություն $8 \cdot 5, 2 \cdot 10$ թվերից:

Այդ թվերի զույգ առ զույգ արտադրյալները հավասար են:

$$8 \cdot 5 = 2 \cdot 20$$

Համեմատությունը կլինի:

$$20 : 8 = 5 : 2$$

8-ը և 5-ը միջին անդամներն են, իսկ 2-ը և 20-ը՝ ծայր անդամները:

Տ. Զամեմատուրյան մեջ կարելի յե առաջին յեզ յերկորդ հարաբերությունների տեղերը փոխեք:

I. Համեմատուրյան մեջ կարելի յե առաջին յեզ յերկորդ հարաբերությունների տեղերը փոխեք:

Արինակ՝ 1) $18 : 15 = 6 : 5$, 2) $6 : 5 = 18 : 15$:

Յերկրորդ համեմատությունն ստացվել ե առաջինից՝ սրա հարաբերությունների տեղերը տեղափոխելու միջոցով: Ակներե, վոր հավասարությունն այս դեպքում պահպանվում ե:

Միջին և ծալր անդամների բազմապատկման ստուգումը նույնպես ցույց ե տալիս, վոր այդ համեմատությունները ճիշտ են կազմված:

$5 \cdot 18 = 6 \cdot 15$

II. Համեմատուրյան մեջ կարելի յե փոխել միջին կամ ժայրաճքամեների տեղերը:

Ստուգենք հետեյալ համեմատությունների ճշտությունը:

1) $20 : 16 = 5 : 4$

2) $20 : 5 = 16 : 4$

3) $4 : 16 = 5 : 20$

Յերկրորդ համեմատությունն ստացվել ե առաջինից՝ միջին անդամների տեղերը փոխելու միջոցով, այսինքն՝ 5-ը գրվել ե 16-ի տեղը և 16-ը՝ 5-ի տեղը:

Յերկրորդ համեմատությունն ստացվել ե առաջինից, ծալր անդամների տեղերը փոխելու միջոցով, այսինքն՝ 4-ը գրվել ե 20-ի տեղը և 20-ը՝ 4-ի տեղը:

Այս բոլոր համեմատությունների մեջ միջին և ծալր անդամների արտադրյալները չփոխվեցին և մնացին իրար հավասար:

Ուշեմն համեմատությունները ճիշտ են կազմված:

III. Համեմատուրյան հարաբերությունները կարելի յե փոխարինել երանց հակագարձ հարաբերություններով:

Ակներե, վոր այս դեպքում ել հավասարությունը չի խախտվի: Այսպես, որինակ, $20 : 15 = 5 : 4$ համեմատությունը կարելի յե փոխարինել $16 : 20 = 4 : 5$ համեմատությունով, վորը կստացվի առաջինից, յեթե նրա յուրաքանչյուր հարաբերության նախորդ անդամը գրենք հետնորդի տեղը: իսկ հետնորդը՝ նախորդի տեղը: Յերկու համեմատությունների մեջ ել միջին և

ծալրը անդամների արտադրյալները հավասար են: Ուրեմն այդ համեմատությունները ճիշտ են կազմված: Յերկրորդ համեմատության հարաբերություններն առաջին համեմատության հարաբերությունների հակագարձ մեծություններն են: Առաջին համեմատության միջին անդամները դարձան յերկրորդ ծալր անդամների և, հակառակը, առաջինի ծալր անդամները դարձան յերկրորդի միջին անդամները:

Վորպեսզի իմանանք թե տված չորս թվերից քանի համեմատություն կարելի յե կազմել և քանի տեսակի տեղափոխություն և թույլ տալիս տված համեմատությունը, պետք է համեմատության անդամների տեղերը փոխել, ոգտագործելով համեմատության անդամները տեղափոխելու վերաբերյալ նշված բոլոր ձեերը:

Տված ե $60 : 40 = 3 : 2$ համեմատությունը: Այդ համեմատության մեջ կատարենք բոլոր հնարակոր տեղափոխություններն այնպիս, վոր միշտ պահպանվի $60 : 2 = 3 : 40$ հավասարությունը:

Փոխենք միջին անդամների տեղերը:

Կստանանք՝

1) $60 : 40 = 3 : 2$

2) $60 : 3 = 40 : 2$

Առաջին և յերկրորդ համեմատությունների մեջ յերկու հարաբերությունները փոխարինենք հակագարձ հարաբերություններով:

Կստանանք՝

3) $40 : 60 = 2 : 3$

4) $3 : 60 = 2 : 40$

Ստացված չորս համեմատությունների մեջ առաջին հարաբերությունը փոխարինենք յերկրորդով, իսկ յերկրորդը՝ առաջինով: Կստանանք ընդամենը ութ համեմատություն:

1) $60 : 40 = 3 : 2$

2) $60 : 3 = 40 : 2$

3) $40 : 60 = 2 : 3$

4) $3 : 60 = 2 : 40$

5) $3 : 2 = 60 : 40$

$$6) 40 : 2 = 60 : 3$$

$$7) 2 : 3 = 40 : 60$$

$$8) 2 : 40 = 3 : 60$$

Դիսողուրյան 6. Այս բոլոր համեմատությունների մեջ միջին անդամների արտադրյալը հավասար է ծայր անդամների արտադրյալին, այսինքն՝ $120 = 60 \cdot 2 = 40 \cdot 3$. Այդ արտադրյալը էլիմինան յերաշխիքն և այն բանի, զարգած 60, 40, 3, 2 թվերից կազմված համեմատությունները ճիշտ են:

Այդ ռելի համեմատությունները առանձին կորպին այսպես.

$$1) a : b = c : d$$

$$2) a : c = b : d$$

$$3) b : a = d : c$$

$$4) c : a = d : b$$

$$5) c : d = a : b$$

$$6) b : d = a : c$$

$$7) d : c = b : a$$

$$8) d : b = c : a$$

§ 10. Համեմատության անհայտ անդամի գտնելը

Ոգտվելով համեմատության էլիմինան հատությունից, միշտ կարելի յե գտնել համեմատության անհայտ անդամը, յեթե հայտնի յեն միուս յերեք անդամները:

1. Հետևյալ համեմատություններից պետք է գտնել x -ը:

$$1) \frac{15}{x} = \frac{8}{4}, \quad 2) \frac{4}{8} = \frac{x}{15}, \quad 3) \frac{8}{4} = \frac{15}{x}, \quad 4) \frac{x}{15} = \frac{4}{8},$$

Այս բոլոր գեպքերում ել ստանում ենք միևնույն պատճենանը, այն ե՝

$$8x = 15 \cdot 4$$

Վորփից՝

$$x = \frac{15 \cdot 4}{8} = 20$$

Համեմատության անհայտ անդամը գտնում են այսպես, ինչպես գտնում են անհայտ բազմապատկիցը, լեռը հայտնի յեն արտադրյալն ու մյուս արտադրիչը:

Համեմատության անհայտ միջին անդամը գտնելու համար պես է ծայր անդամների արտադրյալը բաժանել հայտնի միջին անդամի վրա: Համեմատության անհայտ ծայր անդամը գտնելու համար պես է միջին անդամների արտադրյալը բաժանել հայտնի միջին անդամների վրա:

Ոգտվելով այս կանոնով, կարելի յե լուծումը դրել միանգամից, առանց միջին և ծայր անդամների արտադրյալները վերցնելու:

$$2. Գտեք x -ը՝ $12 : x = 6 : 5$ համեմատությունից:$$

$$x = \frac{12 \cdot 5}{6} = 10$$

§ 11. Զորագի համեմատելիք գտնելը

Որինակ. Գտեք x , 10 և 5 թվերի չորրորդ համեմատականից:

Լուծում. Խնդիրը թույլատրում է մի քանի լուծում:

Դասավորենք տվյալ թվերն իրենց միջության կարգով $10, 8, 5$:

Այժմ այդ թվերի առաջը, վերջը և մեջտեղերը կդնենք x և կգրենք ստացված համեմատությունները:

Այսպիսով մենք ստանում ենք չորս համեմատություններից համեմատություններից մեկի մեջ անհայտը ծայրանդամներից առաջինն ե, իսկ մյուսի մեջ՝ յերկրորդը. Յերրորդ խնդիրի մեջ անհայտը միջին անդամներից մեկն ե, իսկ չորրորդի մեջ՝ մյուսը:

$$1) x : 10 = 8 : 5, \quad x = \frac{10 \cdot 8}{5} = 16$$

$$2) 10 : x = 8 : 5, \quad x = \frac{5 \cdot 10}{8} = 6 \frac{1}{4}$$

$$3) 10 : 8 = x : 5, \quad x = \frac{5 \cdot 10}{8} = 6 \frac{1}{4}$$

$$4) 10 : 8 = 5 : x, \quad x = \frac{5 \cdot 6}{10} = 4$$

Յերկրորդ և յերրորդ գեղաքերը տալիս են միենուն պատասխանները: Այսպիսով մնում ե յերեք լուծում:

$$x=16, \quad x=6\frac{1}{4} \quad \text{և} \quad x=4$$

XV. ՈՒՂԻՂ ՅԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՀԱՄԵՄՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

§ 1. Հաստատուն յև փոփոխական մեծությունների մասին

Յերկույթների մաթեմատիկական հետազոտությունների ժամանակ մենք փընտրում ենք յերկույթի մեջ այնպիսի հատկություններ, վորոնց կարելի յի չափել և չափման արդյունքների հետ կատարում ենք գործողություններ: Այդ ժամանակ մենք միշտ ուսումնասիրում ենք յերկու կամ ավելի մեծությունների միջն գոյություն ունեցող առնչությունները:

Մաթեմատիկայի ոգնությամբ ուսումնասիրվող մեծությունները կարելի յի բաժանել յերկու խմբի՝ I. հաստատուն մեծություններ, II. փոփոխական մեծություններ: Հաստատուն մեծության որինակ կարող են ծառայել այն միավորները, վորոնցով չափումներ ենք կատարում: Այդպիսի մեծություններ են՝ մետրը, կիլոգրամը, վայրկանը, տարին: Այս մեծությունները չեն փոփոխվում: Գոյություն ունեն և ուրիշ հաստատուն մեծություններ, որինակ՝ ուղղի անկյան մեծությունը:

Սահմանում. I. Հաստատուն մեծություն կոչում է այն մեծությունը, վոր չի փոխվում իր արժեքը:

II. Փոփոխական մեծությունները այնպիսի մեծություն են, վոր փոփոխում ե իր արժեքը:

Փոփոխական մեծություններ մեզ հանդիպում են ամեն մի քայլափոխում: Քաղաքի ազգաբնակչությունը տարեցաւարի փոփոխում ե: Փոփոխվում ե մարդու կշիռն ու հասակը յուր տարիքի հետ. փոփոխվում ե մետաղյա ձողի յերկարությունը տաքացնելու ժամանակ:

Այս գեղերում աղղաբնակչությունը, լերկարությունը, կշիռը կիմնեն փոփոխական մեծություններ:

Փոփոխական մեծությունների մնում ուրիշ փոփոխական մեծություններից:

Հետեւյալ աղյուսակի մեջ տված փոփոխական մեծությունների առնչության մի որինակ:

I. Քառակուսիների մակերեսների աղյուսակ

Քառակուսու կողմը (սանտիմետրերով)	3	4	11	20	24
Քառակուսու մակերեսը (քառակուսի սանտիմետրեր)	9	16	121	400	576

Այս աղյուսակը կազմված է յերկու տողից: Առաջին տողում գրված են զանազան քառակուսիների կողմերի յերկարությունները՝ 3 մմ և այլն. Յերկրորդ տողում գրված են համապատասխան քառակուսիների մակերեսները, այսինքն այն քառակուսիների, վորոնք ունին 3 մմ, 4 մմ և այլն:

Տավյալ գեղքում քառակուսու կողմը մի փոփոխական մեծություն ե: Այդ փոփոխական մեծությունը տված ե: Մյուս փոփոխական մեծությունը քառակուսու մակերեսն ե: Այդ մեծությունը կախում ունի քառակուսու կողմից:

Սահմանում. I. Այն փոփոխական մեծությունը, վորի արժեքը մենք կամոց ենք կամավոր կերպով փոփոխել, կոչվում ե անկախ փոփոխական մեծություն:

II. Այն փոփոխական մեծությունը, վորի արժեքի փոփոխում կախում ունի մի այլ փոփոխական մեծությունից, կոչվում է կախյալ փոփոխական մեծություն:

§ 2. Ուղիղ համեմատական մեծություններ

Փոփոխական մեծությունների առնչություններն ուսումնասիրելիս վորոշ գեղերում կարելի յետ համանել կախյալ փոփոխական մեծության փոփոխման համապատասխան որենք, կազմած անկախ փոփոխականի փոփոխության հետ:

Սովորենք փոփոխական մեծությունների մի առնչության հատկությունները, վոր կոչվում է ուղիղ համեմատականություն:

1. 1 խոր. դմ պողպատի կշիռը 7,8 կգ ե: Դասենք՝ 5, 10, 50, 100, 150, 200 խոր. դմ ծավալ ունեցող պողպատե ձուլվածքների կշիռները:

Լուծումները գրենք աղյուսակի ձևով.

P—Զուլվածքի կշիռը՝ կիզըսմիկրով . . .	7,8	39	78	390	780	1170	1560
V—Զուլվածքի ծավալը՝ խորանարդ գեցիմհարեւ- բով	1	5	10	50	100	150	200

Աղյուսակից վերցնենք մի վորուե ձուլվածքի կշիռը և գտնենք այս կշռի ու մի այլ ձուլվածքի կշռի հարաբերությունը:

Որինակ՝

$$\frac{890}{78} = 5$$

Գտնենք նույն ձուլվածքների ծավալների հարաբերությունը:

$$\frac{50}{10} = 5$$

Այս հարաբերությունները հավասար են, և 390, 78, 50 և 10 թվերը համեմատություն են կազմում՝

$$\frac{890}{78} = \frac{50}{10}, \text{ կամ } \frac{890}{50} = \frac{78}{10}$$

Նույն արդյունքը կստանանք, յեթե բաղդատենք աղյուսակի ուրիշ յերկու ձուլվածքների ծավալներն ու կշիռները. Ենք աղյուսակի յերկու սյունակների չորս թվերից կարելի յե կաղմել համեմատություն, ապա ունենք համեմատական առընչություն:

Մենք ասում ենք, վոր պողպատյա ձուլվածքի P կշիռը համեմատական և նրա V ծավալին:

Հսկման տառային գրությունը կլինի՝

$$\frac{P_2}{P_1} = 5, \frac{V_2}{V_1} = 5$$

Կամ համեմատության ձևով՝

$$\begin{aligned} \frac{P_2}{P_1} &= \frac{V_2}{V_1} \\ P_2 &= \frac{V_2}{V_1} P_1 \\ V_1 &= \frac{V_2}{P_2} P_1 \end{aligned}$$

P_1 -ը և P_2 -ը յերկու ձուլվածքների կշիռներն են, V_1 -ն ու V_2 -ը նույն ձուլվածքների ծավալներն են:

Աւումնասիրելով աղյուսակը, մենք կարող ենք սահմանել համեմատական առնչության հետևյալ հատկությունները:

I. Աղյուսակը պարունակում է յերկու փոփոխական մեծությունների արժեքները:

II. Սույն մեծություններից մեկը կլինի անկախ փոփոխական, իսկ մյուսը՝ կախյալ փոփոխական:

III. Սույն մեծության յուրաքանչյուր արժեքին համապատասխանելում և մյուսի մի գործ արժեք:

Բնդունենք ծավալը վորպես անկախ փոփոխական: Այդ գեպը ունի կշիռի կախյալ փոփոխական:

Մենք տեսնում ենք, վոր յուրաքանչյուր ծավալի համապատասխանում և վորոշ կշռ, վորովհետեւ ծավալի փոփոխվելով՝ փոփոխվում եւ կշիռը: Չեն կարող լինել յերկու հավասար ծավալ ունեցող ձուլվածքներ, վորոնց համապատասխանեն տարբեր կշիռներ, և հակառակը, չեն կարող լինել յերկու հավասար կշռ ունեցող ձուլվածքներ, վորոնք տարբեր ծավալ ունենան: Ուրեմն յեթե ծավալները հավասար են, կշիռներն ել հավասար կլինեն:

IV. Յերեք մեծություններից զուեցեք մեկի արժեքը մեծան մի բանի անգամ, ապա մյուսի արժեքն ել նույնիան անգամ կմեծանա:

V. Սույն մեծության յերկու արժեքների հարաբերությունը հավասար և մյուս մեծության համապատասխան արժեքների հարաբերությանը յեզ այդ չորս արժեքները կազմում են համեմատություն:

Այս հատկությունները կարելի լի ստուգել քննարկվող աղյուսակով:

Վերցնենք յերկու ձուլվածք.

10 խոր. զմ և 100 խոր. զմ: Յերկրորդի ծավալը առաջինի հետ համեմատած, մեծացված եւ Ակներկ եւ, վոր այս դեպքում կամի նաև կշիռ:

Ծավալը մեծացել է 10 անգամ, կշիռը նույնպես մեծացել է 10 անգամ ($78 \text{ կգ-ի } \times 10 = 780 \text{ կգ}$): $\frac{100}{10} = 10$ հարաբերությունը հավասար է 10-ի, և $\frac{780}{78} = 10$ հարաբերությունը նույնպես հավասար է 10-ի: Այս հարաբերությունները հավասար են:

$780, 78, 100$ և 10 թվերը կազմում են $\frac{780}{78} = \frac{100}{10} = 10$ համեմատությունը:

I^o. Անկախ փոփոխականի բվական արժեքի հարաբերությունը կախյալ փոփոխականի համեմատասախան բվական արժեքին միևնույն բվին:

Որինակ՝

$$\frac{78}{10} = \frac{780}{100} = \frac{1560}{200} = 7,8$$

Նույն պայմանը տառային գրությամբ հետեւյալ տեսքն ունի՝

$$\frac{P}{V} = K$$

Վորտեղ $K=7,8$: K և $7,8$ թվերը կոչվում են համեմատականության գործակիցներ: Փոփոխական մեծությունները, կապված միևնույն այդ առնչությունների հետ, կոչվում են ուղիղ համեմատական մեծություններ:

Այս հատկություններն ունեցող առնչությունը կոչվում է ուղիղ համեմատականություն:

Եթե յերկու մեծություն այնպիսի առնչության մեջ են, զոր յերբ մեկը մեծանում է մի բանի աճքամ, մյուսն ել մեծանում է նույնան աճքամ, ապա առնչում են, զոր այդ մեծություններն ուղիղ համեմատական առնչության մեջ են գտնվում, կամ երանք ուղիղ համեմատական են:

Մեր վերցրած որինակի մեջ ձուլվածքի ծավալն ու կշիռը ուղիղ համեմատական մեծություններ են, կամ պարզպես համեմատական մեծություններ են:

Ուղիղ համեմատականության որինքի տառային գրությունը կլինի:

$$\frac{P}{V} = K, \quad \text{կամ} \quad P = KV$$

§ 3. Համեմատությունների կիրառումը ինքնիրենը լուծելիք

Մանրամասն ուսումնասիրելով կը ոի կախումը ծավալից, տեսանք, զոր արհենույն նյութից պատրաստած մարմինների ծավալներն ու կշիռներն ուղիղ համեմատական մեծություններ են:

Այժմ մենք կարող ենք ափելի լայնացնել մեր ինդիքը, Մենք կարող ենք, ոգտվելով ուղիղ համեմատական մեծությունների հատկություններից, գտնել մեծության անգույքը արժեքներն առանց աղյուսակ կազմելու:

1. Գնացքը 2 ժամում անցավ 60 կմ: Վորոշեցնք, 1) թե նույն գնացքը 3 ժամում ինչքան ճանապարհ կանցնի և 2) 180 կմ ճանապարհն ինչքան ժամանակում կանցնի, յեթե նա շարժվում է միշտ միենույն արագությամբ:

Խնդիրը լուծելու համար ոգտվում ենք համեմատական մեծությունների հատկությամբ և համեմատություն ենք կազմում վորոնելի մեծությունների մեկը նշանակենք x տառով, իսկ մյուսը՝ y տառով: Համեմատությունը պետք է կազմել այնպես, զոր նրա մեջ մտնեն մեծությունների յերեք հայտնի և մեկ անհայտ արժեք: Կարիք չկա ամեն մի դեպքում զրել մեծության բոլոր արժեքներն աղյուսակի ձևով: Բավական և նախորդ համոզվել, զոր մեծությունները համեմատական են և վերցնել մեծությունների յերկու զույգ արժեքները, ընդգործում դրանց թվում պետք է լինի նաև մեծության վորոնելի արժեքը:

Խնդրի լուծումը հեշտացնելու համար տված թվերն ու անհայտը դասավորում ենք յերկու սյունակում, ընդգործում յուրաքանչյուր այսունակում զրում ենք միենույն մեծության արժեքները: Այդ գեղագում յերկու մեծությունների համապատասխան արժեքները զրում ենք միենույն տողում:

1) Ճանապարհը գտնելու համար ունենք:

2 ժամ — 60 կմ

3 $\frac{x - y}{x} = \frac{60 - 3}{60} = \frac{57}{60} = 90$ կմ:
 $x : 60 = 3 : 2$

2) ժամանակը զտնելու համար ունենք.

2 ժամ - 60 կմ

$$\frac{y}{x} = \frac{180}{6}, \text{ վրեց՝ } y = \frac{2 \cdot 180}{6} = 6 \text{ ժամ:}$$

$$y : 2 = 180 : 60$$

Այս ձեռվ գրելու դեպքում լուրաքանչյուր հարաբերություն կազմվում և միենույն մեծության արժեքներից:

Դիտուրիուն. Հուծելուց առաջ պետք է սոսուցել, թե աված մեծությունները համեմատական են արդյոք:

2. 40 տարեկան մարդու կշիռն և 60 կգ: Ինչքան էլլինի 10 տարեկան յերեխայի կշիռը:

Լուծում. Հաջվելու միջոցով չի կարելի պատասխանել այս խնդրին, վորովհետև ինչպես փորձն և ցույց տալիս, մարդու տարիքն ու կշիռը համեմատական մեծություններ չեն:

**ՏԱԿԱԳՈՐԱՆ
ԽԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՄԵԾՈՒՐՅՈՒՅՆԵՐ**

Համեմատական մեծությունները միշտ ուղղի համեմատական չեն: Հաճախ պատասխան և մի ուրիշ առնչություն, վորը կազմում է հակագործ համեմատականություն:

Օրինակ. Տված են խառարի դազգյանի վրա ձախաբակվող առարկայի մեկ բռնկիցի պառույտների թվի և առարկայի տրամագծի առնչության աղյուսակը:

Ա—պառույտների թիվը՝ մեկ բռնկիում	10	16	20	50	80	100	160
Բ—տրամագծի միլի- մետրերով	200	125	100	40	25	20	12,5

Հնդունենք վորպես անկախ փոփոխական՝ D տրամագիծը՝ Պառույտների ո թիվը կախում ունի D փոփոխականից: Պարզեցվ մեծությունների առնչության որենքը, կնկատենք, վոր նրանց արժեքների աղյուսակը չի բավարարում ուղիղ համեմատականության պայմաններին, վորովհետեւ՝

1. Տրամագծի մեծանալու դեպքում պառույտների թիվը չի մեծանում, այլ փոքրանում եւ:

2. Կախյալ փոփոխականի հարաբերությունն անկախ փոփոխականին՝ հաստատուն թիվ չեւ:

Աղյուսակի հատկությունները հետևյալն են:

I. Սոյլուսակը պառունակում է փոփոխական մեծությունների արժեքների յերկու օւրի:

II. Սոյլ մեծություններից մեկը կինքի անկախ փոփոխական, իսկ մյուսը կախյալ:

III. Մի օւրի մեծության լուրաքանչյուր արժեքին համապատասխում է մյուս օւրի մեծության մի վորու արժեք:

IV. Եթե մի օւրի մեծության արժեքը մեծացնենք մի բանի անգամ, մյուս օւրի մեծության արժեքը նույնան անգամ կփոքրանա:

V. Մի օւրի մեծության յերկու արժեքների հարաբերությունը հավասար է մյուս օւրի մեծության համապատասխան արժեքների հակագործ հարաբերությանը յեզ կազմում են համեմատություն:

VI. Անկախ փոփոխականի արժեքի յեզ կախյալ փոփոխականի համապատասխան արժեքի արտաքրյալը միշտ հավասար է մինեվնույն բիթի:

Այս հատկությունները շատ հեշտ կարելի յեւ ստուգել տվյալ աղյուսակով, ճիշտ այնպես, ինչպես ստուգեցինք ուղիղ համեմատականության հատկությունները:

Այսպիսի հատկություններ ունեցող առնչությունը կոչվում է հակագործ համեմատականություն:

Եթե յերկու մեծություն այնպիսի առնչության մեջ են գտնվում, վոր յերբ եռանցից մեկը մեծացնենք մի բանի անգամ, մյուսը նույնան անգամ փոքրանաւմ ե, ասում են, վոր այդ մեծությունները հակագործ համեմատական մեծություններ են:

Յեթե բազատենք ուղիղ հակագործ համեմատականություն հատկությունները, կնկատենք, վոր տարբերություն կա միայն IV, V և VI հատկությունների մեջ: IV հատկությունն այնքան պարզ ե, վոր հատուկ բացարձությունների պահանջ չի զգում:

Քննարկենք V հատկությունը, ինչպես ուղիղ համեմատականության դեպքում: Յերկու դեպքում ել համեմատականության պահանջ աղյուսակը պահպանում է աղյուսակը:

թյուն կատ Տարբերությունը մէայն համեստառության անդամաների գասավորության մեջ եւ Պարզենք այդ մի որինակովն Սպյուսակից վերցնենք 200 մմ և 40 մմ տրամադերին համապատասխանող պառույտների թվերը:

Տրամադիմը	200 . . . 40
Պառույտների թիվը	10 . . . 50
200 : 40 = 50 : 10, 200 . 10 = 40 . 50	

Հակադարձ համեմատականության դեպքում, ինչպես յերեսում ե այս որինակից, մի մեծության յերկու արժեքների (մի տողի թվերի) հարաբերությունը հավասար է մյուս մեծության համապատասխան արժեքների (յերկրորդ տողի թվերի) հակադարձ հարաբերությանը: Յերկու մեծությունների համապատասխան արժեքների արտադրյան անփոփոխ մեծություն եւ:

Հակադարձ համեմատականության համեմատությունների և հարաբերությունների տառային գրությունը կլինի այսպես՝

$$\frac{n_2}{n_1} = \frac{D_1}{D_2}$$

կամ

$$n_2 : n_1 = \frac{1}{D_2} : \frac{1}{D_1}$$

Այսուղ ՝ D_2 -ը և D_1 -ը նշանակում են տրամադերի թվային արժեքները, իսկ n_2 -ը և n_1 -ը՝ նրանց համապատասխանող պառույտների թիվը:

VI հատկության տառային գրությունը կլինի՝

$Dn = K$

Այս գեպօւմ $K = 2000$ -ի. Այս 2000 և K թվերը կոչվում են համեմատականության գործակիցներ:

Բաղդատենք յերկու այնպիսի ինդիրների լուծումները, վորոնցից մեկի մեջ տված և վորոնելի մեծություններն ուղիղ համեմատական են՝ իսկ մյուսի մեջ՝ հակադարձ համեմատական:

Խնդիր 1. Ավտոմոբիլը 2 ժամում անցավ 120 կմ: Ինչքան ժամանակում ավտոմոբիլը, նույն պայմաններում, կանցնի 200 կմ ճանապարհ:

Լուծում. Մենք գիտենք, վոր հավասարաչափ շարժման ժամանակ ճանապարհն ու ժամանակամիջոցը կազմված են ուղիղ համեմատականության որենքով:

Գրենք պայմանները.

2 ժամ — 120 կմ

$x \rightarrow - 300$ ։

Կազմում ենք $x : 2 = 120 : 300$, կամ $x : 2 = 300 : 120$ համեմատությունը, որից՝

$$x = \frac{2 \cdot 300}{120} = 5 \text{ ժամ}$$

Խնդիր 2. Վագոնները ձեռքով դատարկելու համար 6 բանվորի անհրաժեշտ ե 8 աշխատանքային ժամ: Քանի բանվոր և հարկավոր նույն բեռը 3 ժամում դատարկելու համար:

Լուծում. Այսպիսի ինդիրները լուծելիս բանվորի միջին աշխատությունն ընդունում ենք անփոփոխ:

Վորքան անգամ մեծանա բանվորների թիվը, այնքան անգամ կփոքրանա դատարկման ժամանակամիջոցը: Այս խնդրի մեջ մենք գործ ունենք մեծությունների հակադարձ համեմատականության հետ: Գրենք ինդրի պայմանները:

6 բանվոր — 8 ժամ

$x \rightarrow - 3$ ։

Գրենք հարաբերություններ և կազմենք համեմատություններ՝

$3 : 8 = 6 : x$, կամ $x : 6 = 8 : 3$

կստանանք

$$x = \frac{8 \cdot 6}{3} = 16 \text{ բանվոր}$$

Ուղիղ և հակադարձ համեմատականության դեպում մեծություններից մեկի արժեքը կարելի լի ստանալ միավորի վերլուծելու յեղանակով:

Խնդիր 1. Մինույն միջին աշխատավարձն ստացող 28 բանվորի վրա մեկ ամսում ժախավում ե 4200 ոուրբի: Ինչքան կծախսվի 50 բանվորի վրա, յեթե նրանց վճարում են նույն միջին գրուգրով:

Լուծում. 28 բանվոր միասին ստանում են 4200 ռուբլի։ Ինչքան և ստանում մի բանվորը։ Մի բանվորն ստանում և 28 անգամ պակաս։ Այսպիսով բանվորական յուրաքանչյուր միավոր ստանում ե՝

$$\frac{4200}{28} = 150 \text{ ռուբլի}$$

Ինչքան և ստանում 50 բանվորը։ 50 բանվորն ստանում ե մեկ բանվորից 50 անգամ ավելի։ Այդ կանի։

$$\frac{4200 \cdot 50}{28} = 7500 \text{ ռուբլի}$$

Լուծման լրիվ գրառումը կունենա հետեւյալ տեսքը։
28 բանվորի վճարվում ե 4200 ռուբլի։

$$\begin{array}{rcccl} 1 & & & \frac{4200}{28} & \\ \times & & & & \\ \hline 50 & & & \frac{4200 \cdot 50}{28} = 7500 & \text{ռուբլի} \end{array}$$

Խնդիր 2. Շենքը հիմքի շարելը 20 բանվոր վերջացնում են 15 որում։ Քանի որում կվերջացնեն նույն աշխատանքը 25 բանվոր, յեթե նրանք աշխատում են միենույն արտադրողականությամբ։

Լուծում. Աշխատանքը վերջացնելու համար պետք ե 20 բանվոր աշխատեն 15 որ։ Նույն աշխատանքը քանի որում կվերջացնի մի բանվորը։ Մի բանվորն այդ աշխատանքը կվերջացնի 20 անգամ ավելի ժամանակամիջոցում, այսինքն՝ 15 : 20 որում։

Քանի որ կտեր այդ աշխատանքը, յեթե աշխատի 25 բանվոր։ 25 բանվորն այդ աշխատանքը կկատարի 25 անգամ պահանջանակամիջոցում։ Նրանց համար անհրաժեշտ ե 25 անգամ պակաս որ։

Գրենք լուծումը։

20 բանվորի համար անհրաժեշտ ե 15 որ

$$\begin{array}{rcccl} 1 & & & \frac{20 \cdot 15}{25} = 12 & \text{որ} \\ \times & & & & \\ \hline 25 & & & & \end{array}$$

§ 6. Համեմատական բաժանում

Խնդիր 1. Մեքենայի մասը շինելու համար պահանջվեց 3 խառատի $2\frac{1}{2}$ աշխատանքային ժամ։ Առաջին խառատն աշխատեց 40 ռոպե, յերկրորդը՝ 50 ռոպե, իսկ յերրորդը՝ ժամանակի մնացած մասը։ Ամրող աշխատանքի համար վճարեցին 12 ռուբլի։ Ինչքան վաստակեց ամեն մի խառատը։

Այս խնդիրը կարելի յէ լուծել սովորական թվարանական հաշվի ձևով։ Սակայն մենք գիտենալով հարաբերությունների հատկությունները, կարող ենք լուծել այդ ավելի կարճ ձևով, այսպես կոչված՝ համեմատական բաժանման յեղանակով։

Ինչքան շատ աշխատեց բանվորը, այնքան ել նա շատ փող պետք ե ստանա։ Աշխատավարձը համեմատական ե ժամանակամիջոցին։ Այսուղ գոյություն ունի ուղիղ համեմատականություն։

Նշանակենք առաջին բանվորի աշխատավարձը (ավելա աշխատանքի համար) x_1 , յերկրորդինը՝ x_2 , իսկ յերրորդինը՝ x_3 տառով։ Գրենք, վոր աշխատավարձը համեմատական ե ժամանակին, այսինքն՝

$$x_1 : x_2 : x_3 = 40 : 50 : 60$$

Մասերի գումարը հավասար ե՝

$$40 + 50 + 60 = 150$$

Աշխատանքի մի մասի համար վճարում են՝

$$\frac{1200}{150} = 8 \text{ կոպեկ}$$

Առաջին բանվորը ստանում ե՝ $8 \cdot 40 = 320$ կոպեկ։

Երկրորդն ստանում ե՝ $8 \cdot 50 = 400$ կոպեկ։

Երրորդն ստանում ե՝ $8 \cdot 60 = 480$ կոպեկ։

Գիտողություն. Հարաբերությունները կարելի յէ գրել այսպես $x_1 : x_2 : x_3 = 40 : 50 : 60 = 4 : 5 : 6$ ։ Ընդամենը կլինի 15 մատ հաշվերդի կհամոզվենք, վոր նոր հարաբերության դեպքում ել աշխատանքի վճարը մնում է նույնը։

Խնդիր 2. 855-ը բաժանել չորս համեմատական մասերի՝

$$\frac{2}{3}, \frac{3}{4}, \frac{5}{6}, \frac{3}{5}$$

$$\text{Լուծում. } x_1 : x_2 : x_3 : x_4 = \frac{40}{60} : \frac{45}{60} : \frac{50}{60} : \frac{36}{60}$$

Հարաբերությունները չեն փոխուսվի, յեթե լուրաքանչուր հարաբերության նախորդ և հետնորդ անդամները բազմապատկենք 60-ով։

Հարաբերությունները փոխական ձևափոխման յինթարկելուց հետո ստանում ենք՝

$$x_1 : x_2 : x_3 : x_4 = 40 : 45 : 50 : 36$$

Մասերի գումարը հավասար է՝ $40 + 45 + 50 + 36 = 171$.

$$\text{Մի մասը } \frac{855}{171} = 5,$$

Այժմ զանենք x_1, x_2, x_3 և x_4 թվերը. կստանանք՝

$$200, 225, 250, 180$$

Սրանց գումարը պետք է հավասար լինի 855-ի։

Գիտողություն. Կառործակային թվերի հարաբերությունները միշտ պետք են փոխարինել ամբողջ թվերի հարաբերությամբ։ Դրա համար կոռորդականները պետք են բերել ընդհանուր հայտարարի և վերցնել համարձների և ըստերությունը։

Խնդիր 3. 1380-ը բաժանենք չորս այնպիսի մասերի, վորոնք համեմատական լինեն։

$$0,4; 0,5; 0,32; 0,16 \text{ թվերին}$$

$$\text{Լուծում. } \text{Այս խնդիրը լուծելու համար գրենք՝ } x_1 : x_2 : x_3 : x_4 = 0,4 : 0,5 : 0,32 : 0,16 = 40 : 50 : 32 : 16 = 20 : 25 : 16 : 8.$$

Մասերի գումարը հավասար է՝ $20 + 25 + 16 + 8 = 69$.

$$\text{Յուրաքանչյուր մասի մեծությունը հավասար է՝ } \frac{1380}{69} = 20,$$

$$\text{և } x_1 = 400, x_2 = 500, x_3 = 320, x_4 = 160.$$

Վորպեսզի սպած թվերը բաժանենք մի բանի թվերի նկատմամբ համեմատական մասերի, աներածես և՝ 1) փոխարինել

կոտորակային թվերի հարաբերություններն ամբողջ թվերի հարաբերությամբ. 2) մասերի թիվը զենելու համար գումարել սաւցված մասերը, յեզ սպած թիվը բաժանել այդ գումարի վրա. 3) վորպեսզի զիտենանք թե ինչի յե հավասար մի մասը տված թիվը բաժանել մասերի թիվ վրա. 4) մի մասի սաւցված մեծությունը բազմապատկել հարաբերությունների ամբողջ թվերով։

Ցերպեմն պատահում են համեմատական բաժանման ավելի բարդ գեղեցեր։

Խնդիր 4. Բետոն պատրաստելու համար իրար հետ չոր ցեմենտ, ավագ և խիճ են խառնում. Բետոնի կազմի մեջ մասնակ նյութերի ծավալները հարաբերում են այնպես, ինչպես՝ 2 : 6 : 9

Ինչքան ավագ ու խիճ պետք են վերցնել, յեթե գործազըրդելու յե 900 խոր. դմ չոր ցեմենտ։

Ինչքան բետոն կստացվի, յեթե խճի ծավալը կազմում է ստացված բետոնի 0,9 մասը։

Լուծում. Ամբողջ խառնությը կազմված է 2 + 6 + 9 = 17 մասից. Սրա մեջ մասնում է 2 մաս ցեմենտ։ Մենք ունենք 900 խոր. դմ ցեմենտ։ Այդ նշանակում են, վոր խառնությի մեջ մասին ընկնում է $\frac{900}{2} = 450$ խոր. դմ ցեմենտ։

Այժմ գտնենք բետոնի կազմությունը։

$$\text{Ցեմենտ, } 2 \text{ մաս} - 450 \cdot 2 = 900 \text{ խոր. դմ}$$

$$\text{Ավագ, } 6 \text{ »} - 450 \cdot 6 = 2700 \text{ »} \text{ »}$$

$$\text{Խիճ } 9 \text{ »} - 450 \cdot 9 = 4050 \text{ »} \text{ »}$$

Կառացվի՝ $4050 : 0,9 = 4500$ խոր. դմ = 4,5 մ³ բետոն։

Այս խնդրի մեջ տված են՝ բաղադրիչ մասերի ծավալների հարաբերությունը և նյութերից մեկի ծավալն արտահայտող թիվը։ Բաժանելով այդ թիվը նրան համապատասխան ող մասերի թվի վրա, իմացանք խառնությի մեկ մասի ծավալը։ Բազմաթվի վրա, իմացանք խառնությի մյուս նյութերի համապատասխան մասերի թվով, մենք գտանք թե յուրաքանչյուր նյութից ինչքան պետք են վերցնել։

Խ 6 դիր 5. Զորս կոլտնտեսական աշխատեցին իրենց հատկացված հողամասի վրայ Նրանց վաստակած աշխորհրի թվերը հարաբերում են անպես, ինչպես՝ 12 : 15 : 18 : 20. Յերկրորդն ու յերրորդը միասին վաստակեցին 66 աշխորի բանի աշխոր վաստակեց նրանցից յուրաքանչյուրը:

Աշխորերի թիվը նշանակենք՝ x_1, x_2, x_3, x_4 :

Լուծում. Ինչպես միշտ, այս գեպքում ել պետք ե վորոշենք, թե քանի՞ որքա յե համապատասխանում ժեկ մասը Յերկրորդ և յերրորդ կոլտնտեսականների բաժինը կազմում է $15 + 18 = 33$ մաս, վորը կազմում է 66 որ. Մի մասը կլինի՝ $\frac{66}{33} = 2$ որ:

Այժմ կարող ենք վորոշել յուրաքանչյուր կոլտնտեսականի վաստակած աշխորերի թիվը:

$$x_1 = 2 \cdot 12 = 24 \text{ որ},$$

$$x_2 = 2 \cdot 15 = 30 \text{ որ},$$

$$x_3 = 2 \cdot 18 = 36 \text{ որ},$$

$$x_4 = 2 \cdot 20 = 40 \text{ որ}.$$

Այս խնդրի մեջ մեզ տված եր վոչ թե լոլոր մասերի, այլ միայն վորոշ մասերի գումարը, այդ պատճառով ել խնդիրը լուծելու համար գումարեցինք միայն այդ մասերը:

Յերբեմն պատահում ե, վոր խնդրի մեջ տված ե լինում վոչ թե յերկու մասերի գումարը, այլ նրանց տարբերությունը:

Խ 6 դիր 6. Զորս բանվոր աշխատեցին միասին այն պայմանով, վոր վաստակած դրամը բաժանեն՝ համեմատական պատրաստած դետալների թվին:

Աշխատանքը վերջացնելուց հետո հաշվեցին դետալները ստացվեց՝ 5, 8, 6 և 6 դետալ. Պարզվեց, վոր յերկրորդ բանվորը յերրորդից 10 ուուրլով ավելի յե ստանում: Ինչքա՞ն աշխատեց յուրաքանչյուրը:

Լուծում. Ամբողջ աշխատավարձը պետք ե բաժանվի հետեւալ հարաբերությամբ.

$$x_1 : x_2 : x_3 : x_4 = 5 : 8 : 6 : 6$$

Յերկրորդ բանվորի մասերի թիվն ավելի շատ ե, քան յերրորդինք: Տարօնքությունը կլինի՝ $8 - 6 = 2$ մաս: Յերկու մասի համար յերկրորդ բանվորը ստացավ 10 ուուրլի: Այդ նշանակում ե, վոր մի մասը կազմում է 5 ուուրլի:

$$1\text{-ին } բանվորն ստանում է x_1 = 5 \cdot 5 = 25 \text{ ուուրլի},$$

$$2\text{-րդ } \quad \text{»} \quad \text{»} \quad x_2 = 5 \cdot 8 = 40 \quad \text{»}$$

$$3\text{-րդ } \quad \text{»} \quad \text{»} \quad x_3 = 5 \cdot 6 = 30 \quad \text{»}$$

$$4\text{-րդ } \quad \text{»} \quad \text{»} \quad x_4 = 5 \cdot 6 = 30 \quad \text{»}$$

Վորոշ խնդիրների մեջ անհրաժեշտ ե լինում բաժանել թիվն այնպիսի մասերի, վոր ոնք հակադարձ համեմատական լինեն աված թվերին: Այդպիսի խնդիրները լուծելու համար սերենք մի քանի որինակներ:

Խ 6 դիր 7. Գետը ե լեռներու տեսակ թեյից խառնութեակազմել Սուածին տեսակի թեյի մեկ կիլոգրամն արժե 15 ուուրլի, իսկ յերկրորդ տեսակին՝ 6 ուուրլի: Մեկ և մյուս տեսակի թեյի զերցրած քանակությունները հակադարձ համեմատական են թեյի արժեքին:

105 կզ խառնութեակազմել կազմելու համար ինչքա՞ն պետք ե զերցրնել առաջին տեսակի թեյից և ինչքա՞ն ։ Երկրորդ տեսակից:

Լուծում. Յետե թեյի քանակը հսկագարձ համեմատական ե նրա արժեքին, ապա պետք ե կշիռների հարաբերությունը հավասար լինի թեյի արժեքների հակադարձ մեծությունների հարաբերությանը:

$$x_1 : x_2 = \frac{1}{15} : \frac{1}{6}$$

Փոխարինելով կոտորակային թվերի հարաբերությունն ամբողջ թվերի հարաբերությամբ, կստուանք.

$$x_1 : x_2 = \frac{2}{30} : \frac{5}{30} = 2 : 5$$

I տեսակից պետք ե վերցնել 2 մաս,

II » » » 5 մաս:

Հնդամենը՝ $2 + 5 = 7$ մաս

$$Մեկ մասը կազմում է \frac{105}{7} = 15 \text{ կգ}$$

I տեսակից պետք է վերցնել $15 \cdot 2 = 30$ կգ

II » » » $15 \cdot 5 = 75$ կգ:

Խ 6 դիր 8. 1440-ը բաժանենք յերկու այնպիսի մասերի, վորոնք հակադարձ համեմատական լինեն՝ 5 և 7 թվերին:

I. Առ ծում. Վերցնենք տված թվերի հակադարձ մեծությունները: Խնդրի պայմանը պրենք այդ թվերի հարաբերության տհոքով.

$$x_1 : x_2 = \frac{1}{5} : \frac{1}{7}$$

Կոսորտային թվերի հարաբերությունը փոխարինենք ամբողջ թվերի հարաբերությամբ.

$$\frac{1}{5} : \frac{1}{7} = \frac{7}{35} : \frac{5}{35} = 7 : 5$$

Գոնենք մասերի թիվը՝

$$7+5=12$$

Գոնենք մեկ մասի արժեքը՝

$$\frac{1440}{12}=120$$

Գոնենք վորոնելի թվերը՝

$$x_1=120 \cdot 7=840$$

$$x_2=120 \cdot 5=600$$

$$1440$$

Նույն ձևով ենք լուծում նաև այն խնդիրները, վորոնց մեջ պահանջվում է թիվը բաժանել այնպիսի մասերի, վորոնք հակադարձ համեմատական լինեն յերեք, չորս և ավելի թվերի:

Ձուն տեսակավորում են կշռելու միջոցով:

§ 2. Մի բանի բարերի միջին բարձրականություն

Տեսակավորելիս առաջին տեսակի յեն հաշվում այն ձուն, վորի 120 հատը կշռում է 7,78 կգ, յերկորդ տեսակի 120-ը կշռում է 6,96 կգ, յերրորդ տեսակի 120-ը կշռում է 5,32 կգ: Կոլտըն-տեսությունը, տեսակավորելով ձվերը ստացավ հետեւյալ կշռությը:

Կշռում	Կշռում (Կիլո-դրամներով)	Զվարել թիվը	Մի ձվի կշռում (Կիլոգրամներով)	120 ձվի կշռում (Կիլոգրամներով)
1	2,581	40	0,0645	7,740
2	3,321	50	0,0664	7,968
3	1,286	20	0,0643	7,716
4	6,511	100	0,0651	7,812
5	7,849	120	0,0654	7,849
	21,548	30		

Վորոնեզի իմանանք, թիվ վեր տեսակին են պատկանում այս ձվերը, պետք է վորոշել մեկ ձվի միջին կշռում և 120 ձվի միջին կշռում:

Մեկ ձվի կշռում գտնում են կշռված ձվերի կշռում ձվերի վրա բաժանելով: Աղյուսակից յերկում ե, վոր բոլոր կշռումների ժամանակ մեկ ձվի կշռի հարյուրերորդական մասերը չեն փոփոխվում (իսկ 120 ձվի կշռի՝ լրիվ կիլոգրամները չեն փոփոխվում): Տարբերությունը ոչախն հազարերորդական մասերի մեջ ե: Այդ նշանակում ե, վոր մեկ ձվի կշռի համար կիլոգրամի հարյուրերորդական մասերը ճիշտ են վորոշված, իսկ հազարերորդական և տասնազարերորդական մասերն արդեն սիալ են բարձրական և տասնազարերորդական մասերի համար կիլո-տարիս: 120 ձվի կշռի համար ճիշտ են վորոշված լրիվ կիլոգրամները, և սիալն սկսվում ե տասնազարերորդական մասերից: Առում զրամները, վոր մեկ ձվի կշռման ժամանակ կիլոգրամի հազարերորդական և տասնազարերորդական մասերը վսահելի բվեր չեն (անհավաստի թվեր են):

Ակներեւ ե, վոր ձվերը կշռով զանազանվում են կիլոգրամի հազարերորդական մասերով: Նույնպես կարելի յեւ ասեւ, վոր 120 ձուն կշռելիս մենք անվստահելի թվեր ունենք կիլոգրամի տասնազարդ մասերի համար:

Մենք ահսնում ենք, վոր չափելիս չի կարելի ճշգրիտ թիվ գտնել, չի կարելի մեկ կշռումով զտնել ձվի ճշգրիտ կշիռը։ Յուրաքանչյուր կշռման ժամանակ ձվի ստացված կշիռը դա մոտավորապես հաշված կշիռ կլինի։

Մենք պայմանավորվում ենք բոլոր չափումների և մոտավոր հաշվումների ժամանակ միայն մեկ անվատահելի թվանշան վերցնել մնացած բոլոր անվատահելի թվանշաններն անտեսում ենք, վորով թիվը կլորացնում ենք։

Մեկ ձվի կշռի համար ստանում ենք հետեւյալ թվերը՝
 0,064 կգ; 0,066 կգ; 0,064 կգ; 0,065 կգ; 0,065 կգ. իսկ 120 ձվի
 կշռի համար՝ 7,7 կգ; 8,0 կգ; 7,7 կգ; 7,8 կգ; 7,8 կգ։

Մենք վերցնում ենք բոլոր կշիռների միջին թվաբանականը, կամ ինչպես յերբեմն առում են, կշռի միջին արժեքը։ Հենց այդ թիվն ել ընդունում ենք իրեն ճշգրիտ։

Մի քանի թվերի միջին թվաբանականը գանելու համար պիտք է գումարել բոլոր ավել թվերը և գումարը բաժանել գումարիների թվի վրա։

Մեկ ձվի համար՝

$$\frac{0,064 + 0,066 + 0,064 + 0,065 + 0,065}{5} \approx 0,065 \text{ կգ}$$

120 ձվի համար՝

$$\frac{7,7 + 8,0 + 7,7 + 7,8 + 7,8}{5} \approx 7,8 \text{ կգ}$$

Այսպիսով, մենք մեկ ձվի միջին կշիռն ստացանք հավասար՝ 0,065 կգ և 120 ձվի միջին կշիռը՝ 7,8 կգ։ Կշռվող ձվերը կարելի յևս ստանդարտի տուածին տեսքի ձու համարել։

Մեծ թվով կշռումների դեպքում մենք ստանում ենք բավարար արդյունք նաև այն ժամանակ, յերբ ստանձնին կշռումները բավարար չափով ճիշտ չեն։

Մի հանք բվերի միջին թվաբանականը գտնելու համար պետք է գումարել բոլոր սկզբ բգերը յեզ գումարը բաժանել գումարելիների թվի վրա։

§ 1. Ճամփարարյունի սոկոսների մասին

Սահմանական մասը կոչվում է եռա մեկ տակոս։ Առաջին անգամ տոկոս բառը գործածվել է միայն այն ժամանակ, յերբ փոխառուն փող և պարտք տվել ե պահանջել և պարտքը վերադարձնել ամեն մի հարյուրին վորոշ հավելումով։

Տոկոսը նշանակելու համար սոկոսն են մի համարկ 0% նշանով։

10%—նշանակում է մեկ տոկոս, այսինքն թվի մեկ հարկորդական մասը։

30%—նշանակում է յերեք տոկոս, այսինքն թվի յերեք հարյուրիրորդական մասը։

Խնդիրներ լուծելիս հաճախ անհրաժեշտ ե ինում թվի տոկոսն արտահայտել նրա հարյուրիրորդական մասերով և հակառակը — թվի հարյուրիրորդական մասերն արտահայտել տոկոսներով։

1. Հետեւյալ ստանդարտական կոտորումներն արտահայտենք տոկոսներով։

$1 = 100\%$	$0,07 = 7\%$	$0,1 = 10\%$
$0,01 = 1\%$	$1,17 = 117\%$	$1,08 = 108\%$
$0,003 = 0,3\%$	$0,825 = 82,5\%$	$0,016 = 1,6\%$
$0,58 = 58\%$	$3,7 = 370\%$	$4,57 = 457\%$
$0,001 = 0,1\%$	$2 = 200\%$	

Թվային արտահայտութեան համապատասխան տոկոսային արտահայտութեան փոխարին՝ լու համար, պետք անդամագույն արտահայտութեան բազմապատճել հայտառք, և այս թվային արտահայտութեան բազմապատճել հայտառք, կամ սուրակեաց գեպի առ փոխարին յերկու թվանուն։

2. Հետեւյալ տոկոսները գրենք ստանդարտական կոտորակի ձևով։

$10\% = 0,01$	$156\% = 1,56$	$100\% = 1$
$0,8\% = 0,008$	$560\% = 5,6$	$35,6\% = 0,356$
$0,1\% = 0,001$	$700\% = 7$	$20\% = 0,2$

XVI. ՏԵՂԱՆԵՐ

Սահմանական մասը կոչվում է եռա մեկ տակոս։ Առաջնային մասը բառը կոչվում է եռա մեկ տակոս։ Առաջին անգամ տոկոս բառը գործածվել է միայն այն ժամանակ, յերբ փոխառուն միայն ապահովութեան մեջ հարյուրին վորոշ հավելումով։

Տոկոսը նշանակելու համար սոկոսն են մի համարկ 0% նշանով։

10%—նշանակում է մեկ տոկոս, այսինքն թվի մեկ հարկորդական մասը։

30%—նշանակում է յերեք տոկոս, այսինքն թվի յերեք հարյուրիրորդական մասը։

$$5^{\circ} = 0,05$$

$$17^{\circ} = 0,17$$

$$307^{\circ} = 3,07$$

$$354^{\circ} = 3,54$$

$$1,4^{\circ} = 0,014$$

$$0,5^{\circ} = 0,005$$

Տոկոսային արտահայտությունը տանորդական կօտորակով փախարինելու համար անհրաժեշտ է՝ տօկոսները արտահայտող բիվը բաժանել հարցուի վրա, կամ սորուկեցը տեղափոխել գեպի ձախ յերկու քվաճռան:

3. Հետևյալ տոկոսային արտահայտությունները փոխարինենք հասարակ կոտորակներով.

$$\begin{aligned} \text{Բ. լ. } & 50^{\circ} = \frac{1}{2}; \quad 100^{\circ} = \frac{1}{10}; \quad 200^{\circ} = \frac{1}{5}; \\ & 250^{\circ} = \frac{1}{4}; \quad 750^{\circ} = \frac{3}{4}; \quad 50^{\circ} = \frac{1}{20}; \quad 40^{\circ} = \frac{1}{25}; \quad 20^{\circ} = \frac{1}{50}; \\ & 33^{\circ} \approx \frac{1}{3}; \end{aligned}$$

4. Հետևյալ կոտորակները փոխարինենք տոկոսային արտահայտություններով:

$$\begin{aligned} \frac{3}{5} &= 0,6 = 60^{\circ}; \quad \frac{1}{8} = 0,125 = 12,5^{\circ}; \quad \frac{2}{5} = 40^{\circ}; \\ \frac{3}{8} &= 0,375 = 37,5^{\circ}; \quad \frac{9}{16} = 0,5625 = 56,25^{\circ}; \\ \frac{3}{4} &= 75^{\circ}; \quad \frac{9}{25} = 36^{\circ}; \quad \frac{7}{50} = 14^{\circ}; \quad 2\frac{1}{2} = 200^{\circ} + 50^{\circ} = 250^{\circ}; \\ 7\frac{3}{4} &= 700^{\circ} + 75^{\circ} = 775^{\circ}; \quad \frac{2}{3} \approx 67^{\circ}; \\ \frac{4}{9} &= 0,444... \approx 44^{\circ} \end{aligned}$$

§ 3. Թվի տոկոսը

Թվի տոկոսը գտնելը հանգում է թվի մեջ կամ մի քանի հարյուրերորդական մասը գտնելուն և լուծվում է բազմապատկումով:

1. Հանձնված է 560 կգ ալյուր: Ինչքան հաց և ստացվել լեթ աճը $13,5^{\circ}$ է:

Լուծում. Նախ պետք է հաշվել, թե քանի՞ կիլոգրամի լի հավասար աճը, այսինքն գտնել 560-ի $13,5^{\circ}$, կամ $0,135$ մասը:

$$560 \text{ կգ-ի } 13,5^{\circ} \text{ կազմում է՝ } 560 \cdot 0,135 = 75,6 \text{ կգ:}$$

Ստացվել է՝ $560 + 75,6 = 635,6$ կգ հաց:

$$2. \text{Գումար՝ 1) } 42 \text{ ռուբլու } 70\%-\text{ը, 2) } 15\frac{1}{2} \text{ կգ-ի } 2,20\%-\text{ը:}$$

$$\begin{aligned} \text{Լուծում. 1) } & 42 \text{ ռուբլու } 70\%-\text{ը հավասար է՝} \\ & 42 \cdot 0,07 = 2,94 \text{ ռուբ.} = 2 \text{ ռ. } 94 \text{ կ.} \end{aligned}$$

$$\begin{aligned} 2) & 15\frac{1}{2} \text{ կգ-ի } 2,20\%-\text{ը հավասար է՝} \\ & 15,5 \cdot 0,022 = 0,341 \text{ կգ:} \end{aligned}$$

$$3. \text{Գումար՝ 1) } 15\frac{1}{2}-\text{կ } \frac{8}{4}0\%-\text{ը, 2) } 3\frac{2}{11}-\text{կ } 4\frac{2}{5}0\%-\text{ը:}$$

$$1) 15\frac{1}{2}-\text{կ } \frac{8}{4}0\%-\text{ը հավասար է՝}$$

$$15\frac{1}{2} \cdot \frac{8}{400} = \frac{81 \cdot 8}{2 \cdot 400} = \frac{93}{800} = 0,11625$$

$$\begin{aligned} \text{Կամ } & 15\frac{1}{2}-\text{կ } \frac{8}{4}0\%-\text{ը հավա�ար է՝ } 15,5-\text{կ } 750\%-\text{ին} = \\ & = 15,5 \cdot 0,0075 = 0,116625: \end{aligned}$$

$$2) 3\frac{2}{11}-\text{կ } 4\frac{2}{5}0\%-\text{ը հավասար է՝}$$

$$3\frac{2}{11} \cdot \frac{22}{500} = \frac{85 \cdot 22}{11 \cdot 500} = \frac{7 \cdot 2}{100} = \frac{14}{100} = 0,14$$

Թվի տոկոսը գտնելու խնդիրը կարելի յէ գրանել տառերով՝ այսպիս:

$$a = K \cdot \frac{p}{100}, \quad \text{կամ} \quad a = \frac{K \cdot p}{100}$$

Այստեղ ան տված թվի վորոնելի մասն ե, K -ն տված թիվն ե, իսկ p -ն՝ տոկոսների թիվը:

1. Պատվիրելով վերաբերու, պատվիրատուն պետք է կոռպերատիվին կանխավճար մուծել վերաբերելի արժեքի 40° ՝ նրան տվին 50 ռուբլու անդորրագիր: Ի՞նչ արժեք վերաբերուն:

Լուծում. Նախնական մուծումը կազմում 40° , վորը վերաբերելի արժեքի $0,40$ մասն ե և հավասար է 50 ռուբլու:

Պետք է գտնել թիվը՝ տված մասով:

$$0,40x = 50 \text{ ռուբլի, } x = \frac{50}{0,4} = 125 \text{ ռուբլի}$$

Վորտեղ չ-ը անհայտ թիվն ե:

Տված տոկոսով բիվը գտնելը հանգում է թիվը տված մասով գտնելուն յեզ լուծվում է բաժանման յեղանակով:

Լուծումը կարելի յե զբել տառերով, այսպես:

$$k=a : \frac{p}{100}, \quad k_{\text{ամ}} \quad k = \frac{a \cdot 100}{p}$$

Այստեղ կ-ն ամբողջ թիվն ե, ա-ն ամբողջ թվի տված մասն ե, իսկ ք-ն՝ տոկոսների թիվը:

2. Գտնել թիվը յեթե հայտնի յե, վոր 1) թվի $53^{\circ} 0$ -ը հավասար ե 25,5 կգ-ի, 2) թվի $107^{\circ} 0$ -ը հավասար ե 321 ռուբլում։

$$1) 0,53x=26,5 \text{ կգ}$$

$$x=\frac{26,5}{0,53}=\frac{2650}{53}=50 \text{ կգ}$$

$$2) 1,07x=321 \text{ ռուբլի}$$

$$x=\frac{321}{1,07}=300 \text{ ռուբլի}$$

Տոկոսներով արտահայտված մասի ողնությամբ թիվը գտնելիս պատահում են յերեք հիմնական խնդիրներ։

I. Հայտնի յե թվի տոկոսներով արտահայտված մասը (նախորդ խնդիրը):

II. Հայտնի յե այն թիվը (և այդ թվի տոկոսային արտահայտությունը), վորը կսացվի, յեթե վորոնելի թվին ավելացնենք իր վորոշ տոկոսը։

III. Հայտնի յե այն թիվը (և այդ թվի տոկոսային արտահայտությունը), վորը կսացվի յեթե տված թվից հանենք իր վորոշ տոկոսը։

Բերենք որինակներ։

1) Կոռպիրատիվը տան կառուցման համար վարկ ե վերցնում։ Բանկը տալիս ե ապագա տան արժեքի $30^{\circ} 0$ -ի չափով վարկ, վորը կազմում ե 150 000 ռուբլի վորոշեցեք շենքի արժեքը։

Այստեղ թվի $30^{\circ} 0$ -ը (վորոնելի թվի մասը) կազմում ե 150 000 ռուբլի։

Լուծում. Պետք ե վորոշել թիվը՝ տված մասի ողնությամբ։

$$30^{\circ} 0=0,30; \quad 0,3x=150 000 \text{ ռուբլի}$$

Վորոնելի թիվը՝

$$x=150 000 : 0,3=500 000 \text{ ռուբլի}$$

2) Խանութը արտելից դույլեր կնեց, Յուրաքանչյուր դույլին զնարկեց 2 ո. 40° կ, ընդունակում խանութին տրված ե չեղող զեղչ, ի՞նչ արժե մեկ դույլն առանց զեղչի։

Լուծում. $20^{\circ} 0$ զեղչից հետո յուրաքանչյուր դույլին զնարկեցին իր ոկարնական արժեքի մեջայն $100-20=80^{\circ} 0$ -ը։ Այդ զնարկեցին իր ոկարնական արժեքի մեջայն $100-20=80^{\circ} 0$ -ը։ Այդ նշանակում ե, վոր 2 ո. 40 կոպեկը կազմում ե դույլի արժեքի $80^{\circ} 0$ -ը։

$$80^{\circ} 0=0,80; \quad 0,8x=2,4 \text{ ռուբլի}$$

Վարից ստանում ենք՝

$$x=2,4 : 0,8=\frac{24}{8}=3 \text{ ռուբլի} \quad (\text{դույլի արժեքը})$$

3) Վճարուղին ուշացրեց վճարումը, վորի համար պետք է վճարի ուղղական գումարի $12^{\circ} 0$ -ի չափով տույժի նա մուծեց ընդունել 56 ռուբլի։ Վորքան եր նրա հայտնական պարագը։
Լուծում. Պարտքը տույժի հետ միասին կազմում ե նախական գումարի $160+12=172^{\circ} 0$ -ը։

Այդ նշանակում ե, վոր 56 ռուբլին վորոնելի թվի $112^{\circ} 0$ -ն ե, կամ նրա $1,12$ մասը. $1,12x=56$

$$x=56 : 1,12=\frac{56 \cdot 100}{112}=50 \text{ ռուբլի}$$

§ 5. Օւեկութիվի
հարաբերությունը
ուսանույնությունը

1. Դասարանում սովորում են 32 աշակերտ։

2 աշակերտ բացակայում ելին զամաց, Դասարանի աշակերտության ընդհանուր թվի վեր տոկոսն եր բացակայում ե վոր տոկոսն եր ներկա։

1) Քանի առկուսն են կազմում բացակայող աշակերտները։
Լուծում. Նախ պետք ե իմանալ, թե 2-ը 32 -ի վոր մասն ե կազմում։ 2 և 32 թվերի հարաբերությունը վորոշվում ե բաժանումով՝ $\frac{2}{32}=\frac{1}{16}$, Դրանից հետո անհրաժեշտ ե արդյունքն արտահայտել տասնորդական կառուցակը և տոկոսներով։

$$\frac{1}{16}=0,0625=6,25^{\circ} 0$$

2) Քանի առկոս են կազմում դասին ներկա զունդակ 30 աշակերտները։

30. ի հարաբերությունը 32-ին հավասար է $\frac{80}{32} = \frac{15}{16}$, Արտահայտելով այս հարաբերությունը տասնորդական կոտորակով և կոտորակներով, կստանանք՝

$$\frac{15}{16} = 0,9375 = 93,75\%$$

$$\text{Սուրգում } 6,25\% + 93,75\% = 100\%$$

2. Կոլտնաեսությունների և խորհանտեսությունների կախանատեսական ֆերմանների անասունների թիվը 1931 թվի յերկրորդ կեսին աճելով 400 000-ից հասավ 1 800 000-ի:

1) Կիսամյակի սկզբի անասունների թիվը կիսամյակի վերջում յեղած թվի վեր տոկոսն ե կազմում:

Լուծում. Վորովես միավոր, կամ 100% պետք ե ընդունել 1800 000 գլուխը, վորի նկատմամբ 400 000 գլուխը կազմում ե՝

$$\frac{400\,000}{1\,800\,000} = \frac{2}{9} \quad \text{մաս} \quad \frac{2}{9} \approx 0,222 = 22,2\%$$

2) 1931 թվի վերջում անասունների թիվը կիսամյակի սկզբի անասունների թիվի վո՞ր տոկոսն եր կազմում:

Լուծում. Վորովես միավոր կամ 100% պետք ե ընդունել 400 000 գլուխը, վորի նկատմամբ անասունների թվի աճը կազմում ե՝

$$\frac{1\,800\,000}{400\,000} = \frac{9}{2} = 4,5 = 450\%$$

3) 1931 թվի յերկրորդ կիսամյակում քանի տոկոսով աճեց անասունների թիվը:

Լուծում.

$$450\% - 100\% = 350\%$$

Թվերի տոկոսային հարաբերությունը ստանալու համար անհրաժեշտ է գտնել այդ թվերի բանուրդական հարաբերությունը յեզ պատասխան արտահայտել տոկոսներով:

Դիտադրությունը. 1) Թվերի հարաբերությունը գանելիս վորովես բաժանաբար վերցնում են այն թիվը, որըն ընդունում են 100% ,

2) Հարաբերությունը տոկոսներով հաշվելիս պատասխանը կորացնում են՝ բաժանման արդյունքը կորացնելու կանոնով:

3. Պարուղել, թե 1) $111,8\%$ 1720-ի, 2) 10% 3-ի, և 3) $0,079\%$

1-ի վեր տոկոսն ե կազմում:

$$\text{Լուծում. } 1) \frac{111,8}{1720} = 0,065 = 6,5\%$$

$$2) \frac{10}{3} = 3,333... \approx 333\%$$

$$3) \frac{0,079}{1} = 7,9\%$$

Լուծումը կարելի է գրառել տառելու այսպիս՝

$$p = \frac{a}{k} \cdot 100$$

Վորաբեր կ-ն 100% ընդունված թիվն ե, վորի նկատմամբ պետք ե տված ա թիվն արտահայտել տոկոսներով (p):

Դիտադրություն. $\frac{a}{k}$ կոտորակը ցույց ե տալիս թվերի քանորդական հարաբերությունը, գորը $100\%-ով$ բազմապատկերու գեղըում արտահայտվում ե տոկոսներով:

§ 8. Գրամական
հաշվարեկների
վերաբերյալ
խնդիրներ

Դրամական հաշվարեկների վերաբերյալ խընդիրների մեջ պատահում ե չորս թիվ՝
1) սկզբնական գումար 2) տոկոս, 3) ժամանակ. 4) վորոշ ժամանակամիջոցում ստացված շահ կամ վնաս: Յերբեմն խնդիրների մեջ շահը կամ վնաս արտահայտող թվի փոխարեն պատահում ե այնպիսի թիվ, որը ցույց ե տալիս նախնական գումարը շահի կամ վնասի հետ միասին, ալսպիս ասած՝ աճած կամ նվազած գումարը:

Այդ չորս թվերից յերեքը խնդրի մեջ տված են լինում, իսկ չորրորդը պետք է գտնենք այդ թվերի միջոցով: Այսպիսով դրամական, տոկոսային հաշվարեկների ժամանակ պատահում ե չորս հիմնական խնդիր:

I. ա) Գտնել խնայողական դրամարկղ տված 50 ռուբլի ավանդի 9 ամսում բերած շահը, յեթե խնայողական դրամարկղը առարկան վճարում է $8^0\%$:

Լուծում. Տարեկան յեկամուտը կտղմում է 50 ռուբլու 80% , այսինքն՝

$$50 \cdot 0,08 = 4 \text{ ռուբլի}$$

$$\frac{9}{12} = \frac{3}{4} \text{ տարում բերած յեկամուտը կկազմի՝}$$

$$4 \cdot \frac{3}{4} = 3 \text{ ռուբլի}$$

Ա) Ինչքան կդանա 50 ռուբլի ավանդն 9 տմսվա ընթացքում, յեթե խնայողական գրամարկը աարեկան վճարում է 80% ,

Լուծում. Վերը հաշվեցինք, վոր 9 ամսվա յեկամուտը կազմում է 3 ռուբլի, ուստի ավանդատուն ստանում են՝

$$50 + 3 = 53 \text{ ռուբլի}$$

Այս ա) և բ) խնդիրների մեջ տված եյին՝ 1) սկզբնական գումարը, 2) տոկոսը, 3) ժամանակը, Պահանջվում եր զտնել 4) շահը (ա խնդրում) և աճած գումարը (բ խնդրում),

II. Ինչքան ժամանակում 1350 ռուբլին 80% -ով կտա՞ ա) 477 ո. շահ, շ) կդանա 1827 ո.:

Լուծում. ա) 1350 ռուբլու տարեկան հասույթը կտղմում է $(1350 \cdot 0,08) = 108$ ռուբլի:

477 ռուբլի հասույթը կստացվի $477 : 108 = 4 \frac{45}{108} = 4 \frac{5}{12}$ տարում, այսինքն 4 տարի 5 ամսում:

բ) Նախ պետք է իմանալ հասույթը՝ $1827 - 1350 = 477$ ո.:

Այնուհետև խնդիրը լուծվում է այնպիս ինչպիս ա) խընդիրը,

Այս խնդիրների մեջ տված եյին՝ 1) գրամագլուխը, 2) տոկոսը, 3) շահը, կամ աճած գումարը, պահանջվում եր հաշվու ժամանակը:

III. Քանի տոկոս է վճարում խնայողական գրամարկը, յեթե 9 ամսով տված 150 ո. ավանդը ա) բերում են 9 ռուբլի շահ, բ) ավանդատվին հատուցում է 159 ռուբլի:

Լուծում. Յերկու գեպքում ել հասույթը կտղմում է 9 ռուբլի, Հետևաբար տարեկան հասույթը կկազմի՝

$$9 : \frac{9}{12} = 12 \text{ ռուբլի}$$

$$12 \text{ ռուբլին կազմում է } 150 \text{ ռուբլի ավանդի } \frac{12}{150} = 0,08 =$$

$$= 80\% \text{ ըլ:}$$

Այս խնդիրների մեջ տված եյին՝ 1) գրամագլուխը, 2) ժամանակը, 3) շահը կամ աճած գումարը, պահանջվում եր հաշվել տոկոսների թիվը:

IV. ա) վերը գրամագլուխը 70% -ով 3 տարում կրերի 420 ռուբլի շահ:

Լուծում. Տարեկան հասույթը կտղմում է գրամագլուխը

$70\% \text{-ը կամ } 0,07 \text{ մասը: 3 տարվա հասույթը կլինի գումարի } 0,07 \cdot 3 = 0,21 \text{ մասը:}$

Ցեզե անհայտ գումարը նշանակենք չոպ, կստանանք՝

$$0,21x = 420, x = \frac{420}{0,21} = \frac{420 \cdot 100}{21} = 2000 \text{ ռուբլի}$$

բ) վերը գրամագլուխը $100\% \text{-ով 3 տարում կդառնա } 520 \text{ ռ.:$

Լուծում. Դրամագլուխը տարեկան հասույթը կտղմում է վորոնելի գումարի $100\% = 0,1 \text{ մասը: 3 տարվա հասույթը կլինի վորոնելի գումարի } 0,3 \text{ մասը, այսինքն } 1,3x = 520 \text{ ռուբլի, վորոնելի շեղ չեն անհայտ գումարն ե.}$

$$x = \frac{520}{1,3} = \frac{5200}{13} = 400 \text{ ռուբլի}$$

Այս ա) և բ) խնդիրների մեջ տված եյին՝ 1) ժամանակը,

2) տոկոսը, 3) շահը կամ աճացրած գումարը, Պահանջվում եր հաշվել սկզբնական գրամագլուխը:

Դիսպարագութեան. Յերբ խնդիրները լուծելիս անհրաժեշտ է լինում ժամանակն արտահայտել ամիսներով և ուերակ, ընդունված ե տարին հաշվել 360 օր, իսկ ամեւոր՝ 30 օր:

§ 7. Տոկոսները հաշվելու գրամեթիք

Տոկոսների վերաբերյալ խնդիրները կարելի յել լուծել՝ ոգտվելով նաև զբաժիկից: Եթե գծագրի վրա ցույց է տրված, թե ինչպիս պետք է գտնել տված թվի տոկոսը, Այդ զբաժիկով տոկոսը գումարը է գտնել տված թվի տոկոսը: Այդ զբաժիկով տոկոսը վերը ցույց տվող (աչ կողմում, վերջին ուղղաձիգ գծի վրա) թիվը ցույց տվող (աչ կողմում, վերջին ուղղաձիգ գծի վրա)


կետի հետ միացնող ուղղիցը գծը կետում է հատվում տված կետի հետ միացնող ուղղիցը գծը կետում է հատվում տված

թվին համապատասխանող ուղղաձիգ գծի հետ (տված թիվը պետք և կարդալ հորիզոնական գծի վրա), ապա այդ կետի հորիզոնական ուղղությամբ տեղափոխվել մինչեւ առաջին ուղղաձիգ գիծն ու նրա վրա կարդալ վորոնելի թիվը: Որինակ՝ այդ գրաֆիկով պետք և վորոշել, թե ինչի լե հավասար 50 ուղրլու 40° ը: Պատասխան՝ 20 ուղրի: Լուծումը ցույց է տրված սլաքով: Նույն ձևով վորոշվում ե, վոր 80 ուղրլու 50° ը հավասար է 40 ուղրլու:

Նույն ձևով անց են կացնում գծեր՝ 10° , 20° և այլն մինչեւ 100° հաշվելու համար:

Վորպեսզի մեր գրաֆիկը հնարավորություն տա վորոշելու 100-ից մեծ թվերի տոկոսները, մենք կարող ենք մասշտաբի միավորին տալ զանազան արժեքներ:

Եթե գծերի վրա ցույց է տրված, թե ինչպես կարելի յե գտնել 50 ուղրլու 80° ը, քանոնի ոգնությամբ, առանց գրաֆիկի վրա գծեր տանելու:



գծ. 6.

գծ. 7.

XVII. ԲԱՆԱՁԵՎԵՐ ՅԵՎ ՀԱՇՎՈՒՄՆԵՐ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՎ

§ 1. Բանաձեվեր (Ըստմուլիներ)

Մենք մի քանի անգամ ոգտվեցինք տառային արտահայտություններով: Այժմ ցույց տանք, թե մաթեմատիկական մեջ խնդիրներ լուծելիս, տառային արտահայտություններն ինչպես են ոգտագործում:

1. Լուծենք հետեւյալ խնդիրները:
 - 1) Աղբանքի 1 մ-ը արժե 10 ռ.: Գտնենք 7 մ-ի արժեքը:
 - 2) » 1 մ-ը » 5 ռ.: » 7 մ-ի »
 - 3) » 1 մ-ը » 10 ռ.: » 8 մ-ի »
 - 4) » 1 մ-ը » 6 ռ.: » 12 մ-ի »
 - 5) 1 կգ շախարն արժե 2 ռ: Գտնենք 4 կգ-ի արժեքը:
 - 6) Աղբանքի 1 միավորն արժե 8 ռուբի: Գտնենք 6 միավորի արժեքը:

Լուծում.

- 1) $10 \cdot 7 = 70$ ռուբի
- 2) $5 \cdot 7 = 35$ ռուբի
- 3) $10 \cdot 8 = 80$ ռուբի
- 4) $6 \cdot 12 = 72$ ռուբի
- 5) $2 \cdot 4 = 8$ ռուբի

6-րդ խնդրի լուծումը գրառում ենք այսպես՝

$$a \cdot b = c$$

Այստեղ շահ նշանակում է մի վորեկ աղբանքի չափի մեջ միավորի արժեքը, ե՞ս՝ միավորների քանակը և շահ ամբողջ աղբանքի արժեքը:

ա-ի վորպարեն կարելի յե վերցնել 10, 5, 10, 6, 2:

ե-ի վորպարեն՝ 7, 7, 8, 12, 4. այդ գեղաքում շահ հավասար կլինի՝ 70, 35, 80, 72, 8:

Ամեն մի թվաբանական խնդրի մեջ անհրաժեշտ է լինում զանազան տված թվերը, վորոնելի թվերը և խնդրի պայմանական տված մեջ նշած գրանց առնչությունները: Վորոնելի թիվը գըտնում ենք պատասխանելով խնդրի հարցին:

Լուծելով խնդիրը, մենք գտնում ենք տված և վորոնելի թվերի առնչությունը և վորոշում ենք առնչության բնույթը: Դիտենալով տվյալների և արդյունքների առնչությունը, մենք կզիտենանք, թե խնդիրը լուծելու համար ինչ գործողություն, և ինչ կարգով պետք է կատարել:

Որինակի բոլոր խնդիրները լուծվում են միանույն լեզանակով, միևնույն կանոնով: այդ բոլոր խնդիրների մեջ մենք կիրակով, միևնույն կանոնով: այդ բոլոր խնդիրների մեջ մենք կիրակով, միևնույն կանոնով:

վաճառող ապրանքների միավորի արժեքի և միավորների թվի արտադրյալը, վերջը մենք ստացանք բոլոր խնդիրները լուծելու համար մի ընդհանուր կանոն, վորի համար ավյալ և վորոնելի մեծությունները նշանակեցինք տառերով:

Մենք լուծեցինք մի ընդհանուր խնդիր, մենք, ինչպես առում ենք, կազմեցինք բոլոր այդպիսի խնդիրները լուծելու բանաձելը:

Սա իմ անում. Բանաձել ե կոչվում այն արտահայտությունը, վոր ցույց ե տալիս թե ի՞նչ գործողություն յեզ ի՞նչ կարգով պետք ե կատարել, վորպեսզի տաճանակ օված հարցի լուծումը:

2. Լուծումը գրել բանաձելով:

1) Գնացքը 4 ժամ գնաց, ժամում 35 կմ արագությամբ և 5 ժամ ել գնաց՝ ժամում 38 կմ արագությամբ: Պահանջվում ե գտնել գնացքի միջին արագությունն այդ ամբողջ ժամանակի ընթացքում:

Լուծում.

$$\text{Միջին արագությունը} = \frac{85 \cdot 4 + 88 \cdot 5}{4+5} = \frac{140 + 190}{9} = 36 \frac{2}{3} \text{ կմ:}$$

2) Յեթե գնացքը 3 ժամ շարժվեր՝ ժամում 30 կմ արագությամբ, և 2 ժամ ել՝ ժամում 35 կմ արագությամբ, ապա գնացքի միջին արագությունը պետք ե հաշվել հետեւյալ բանաձելով.

$$\text{Միջին արագությունը} = \frac{30 \cdot 3 + 35 \cdot 4}{3+2} \text{ կմ}$$

3) Բոլոր այսպիսի խնդիրները լուծելու տառային բանաձել կլինի:

$$v = \frac{at_1 + bt_2}{t_1 + t_2}$$

Վորտեղ ան այն կիլոմետրերի թիվն ե, վոր գնացքն անցնում է է₁ ժամանակամիջոցի յուրաքանչյուր ժամում, են այն կիլոմետրերի թիվն ե, վոր գնացքն անցնում է է₂ ժամանակամիջոցի յուրաքանչյուր ժամում, իսկ ն-ն միջին արագությունն ե:

Տ Յ. Տառափին
Էշանակում ներ
Գործողությունների
Կարգավոր
Փակագծեր

1. Բանաձելներ կազմենու և զրելու մեջ միարինակություն մտցնելու համար, պայմանավորել են թվերը նշանակել լատինական (կամ ֆրանսիական) այբուբենի տառերով: Այդ տառերի տակ մենք հասկանում ենք խնդրի պայմանները բավարարող ամեն մի թիվ:

Խնդրի պայմանները գրելու և այն լուծելու համար, բացի տառերից, ոգալում են թվաբանության մեջ ընդունված նշանակումները, ոգալում են (+) նշանով, հաներով, թվերի գումարումը նշանակում են (-) նշանով, բաղմապատկումը (×) կամ (.) նշանով, բարձրումը (:) նշանով, կամ կոտորակի գծով: Բազմապատկման նշանը կարելի յե չգրել (տես զլուխ IV, § 1):

2. Գործողությունների կարգի վերաբերյալ գոյություննենեցող պայմանը նույն ե մուսմ նաև տառային արտահայտությունների համար: Յեթե բանաձելի մեջ պատահում են միայն մեկ կարգի գործողություններ, ապա այդ գործողությունները կատարում են այն հերթականությամբ, ինչ հերթականությամբ կատարում են: Յեթե բանաձելի մեջ պատահում են տարրեր կարգի գրված են: Յեթե բանաձելի մեջ պատահում են տարրեր կարգի գործողություններ, ապա առաջին հերթին կատարում են բարձր կարգի գործողությունները:

Այդ կանոններից կատարված ամեն մի շնորհմ նշանակում են փակագծերով: Յեթե բանաձելի մեջ կամ փակագծեր, ապա առաջին հերթին կատարում են փակագծի մեջ նշված գործողությունները:

(a+b) · m բանաձելը ցույց է տալիս, վոր նախ պետք ե գոնին և ե ե թվերի գումարը և առաջ բաղմապատկել այն ու թվով:

Յեթե բանաձելի մեջ կամ տարրեր ձեի փակագծեր՝ () [], ապա սովորաբար առաջ կատարում են ներքին փակագծերի կամ առաջին փակագծերի փոխարեն բաժանման գեղքում ոկտաղործում են նաև կոտորակի գէծը:

$$n = [(a+b) : m] \cdot c \quad n = \frac{a+b}{m} \cdot c$$

բանաձերը միևնույն նշանակությունն ունեն, Դրանք ցույց են տալիս, վոր ա և Ե թվերի գումարը պետք է բաժանել ուի վրա և ստացած քանորդը բազմապատկել ըուվ:

Դիտողություն. Գեաք է լավ հիշել, վոր գումարի կամ տարբերության բազմապատկումը միշտ նշանակում են փակութերով:

(a+b) · m և (a-b) · m արտահայտությունները կարդացվում են ալիսկես. յերկու թվերի գումարը կամ արտահայտությունը պետք է բազմապատկել ու թվով:

Ցեթե մենք առանց փակագծերի գրեյինք՝ a+b և a-b այդ կնշանակեր, վոր ա թվին ոկտագ և գումարել կամ այդ թվից ոկտագ և հանել Ե և ու թվերի արտադրյալը:

§ 3. Գործակից: Սատիրան

I. Սահմանում. Տառային արտահայտության բական արտագրիչը կոչվում ե գործակից:

Գործակիցը գրվում է մյուս արտադրիչներից առաջ:

$$\text{Որինակ. } 1) \ 3a^2b, \ 2) \ \frac{4}{7}mn, \ 3) \ 0,9ab.$$

Գործակիցը կարող է լինել ամբողջ և կոտորակ:

Գործակիցը ցույց ե տալիս, թե ինչպես կարելի յե գումարումը փոխարինել բազմապատկումով:

$$\text{Որինակ. } a+a+a=3a,$$

Այսպիսով գործակիցը կրճատում է գործողության գըությունը:

$$1. \ a+a+a+a=4a$$

$$2. \ b+b-c-c-c=b+b-(c+c+c)=2b-3c$$

$$3. \ \frac{1}{4}m + \frac{1}{4}m + \frac{1}{4}m = \frac{m}{4} + \frac{m}{4} + \frac{m}{4} = \frac{3m}{4} = \frac{3}{4}m$$

$$4. \ 5a^2=a^2+a^2+a^2+a^2+a^2$$

$$5. \ \frac{4}{5}ab=\frac{1}{5}ab+\frac{1}{5}ab+\frac{1}{5}ab+\frac{1}{5}ab$$

$$6. \ 0,3m-0,2n=0,1m+0,1m+0,1m-0,1n-0,1n$$

II. Հավասար արտադրիչների բազմապատկման ժամանակ, ինչպես հայտնի յե, հնարավոր է գրության վորոշ պարզեցում (տես § 10, դւ. IV):

$$1) \ 5 \cdot 5 \cdot 5 \cdot 5, \ 2) \ 10 \cdot 10 \cdot 10$$

Այսպիսի արտադրյալների համար գոյություն ունի գրության հետեւյալ ձևը:

$$1) \ 5 \cdot 5 \cdot 5 \cdot 5 = 5^4 = 625, \ 2) \ 10 \cdot 10 \cdot 10 = 10^3 = 1000$$

Հավասար արտադրիչների բազմապատկումը համարվում է հատուցի գործողություն և կոչվում ե աստիճան բարձրացնել:

Տառային վրա թյան դեպքում մենք ունենք

$$a^n=N$$

բանաձեւ:

Այս բանաձեւ մեջ ա-ն հիմքն ե, ո-ը՝ և թվի աստիճանի ցուցիչը (աստիճանացույց):

$$1) \ a^5=a \cdot a \cdot a \cdot a \cdot a$$

$$2) \ (ab) \cdot (ab) \cdot (ab)=(ab)^3$$

$$3) \ (a+b) \cdot (a+b)=(a+b)^2$$

Դիտողություն. Բազմապատկման նշանը կարելի յե բաց թողնել փակագծի կամ փակագծի գոխարինող նշանի առաջ:

Հաճախ սլատահում են հետեւյալ տառային արտահայտությունները:

§ 4. Ամենագլուխա- վոր բանաձեւեր

$$1. \ Գումարի բանաձեւ՝ m=a+b,$$

$$2. \ Տարբերության բանաձեւ՝ n=a-b,$$

$$3. \ Արտադրյալի բանաձեւ՝ p=a \cdot b \ կամ \ p=ab,$$

$$4. \ Քանորդի բանաձեւ՝ q=a : b = \frac{a}{b},$$

$$5. \ Հավասարության բանաձեւ՝ a=b,$$

$$6. \ Անհավասարության բանաձեւ՝ a>b, \ b<a:$$

Տառերի ու նշանների գանազան կոմբինացիաները կազմում են ուրիշ, ավելի բարդ բանաձեւեր:

$$7. \ Զույգ թվի բանաձեւ՝ k=2n:$$

Ո-ի գոխարին կարելի յե վերցնել ամեն մի ամբողջ թիվ սկսած զերոյից: Կատանանք զույգ թվերի շարքը՝ 0, 2, 4, 6...

$$8. \ Կենտ թվի բանաձեւ՝ l=2n+1 \ կամ \ l=2n-1:$$

$$9. \ Ո-ի վրա բաժանվող թվի բանաձեւ՝ x=n \cdot a:$$

$$10. \ Մնացորդով բաժանման բանաձեւ՝ \frac{a}{b}=q + \frac{r}{b},$$

11. Ցերկնի թվի բանաձեւ՝ m=10a+b. այսուղ ա-ն տառավորների թիվը ե, իսկ Ե-ն՝ միավորների թիվը:

§ 5. Բանաձեռքիր
բանական
առմասներ

Յանաձեռքի թվական արժուքը կոչվում է այն թիվը, ովորը կատացվի, յեթե բանաձեռքի մեջ տառերի ականք գնենք նրանց համապատասխան թվական արժեքը և ները և կատարենք բանաձեռքը՝ նշված զործողությունները պայմանավորված կարգով:

1. Վերցնենք ուղղանկյան մակերեսի բանաձեռք՝ $s=ah$. Այս բանաձեռքի մեջ s -ը նշանակում է առկերեսի քառակուսի միավորների թիվը, առն հիմքի յերկարության միավորների թիվը և h -ը՝ բարձրության յերկարության միավորների թիվը.

Հաշվենք մակերեսի արժեքը, յերբ $a=5$ և $h=8$ մէ, կատանանք՝

$$s=5 \cdot 8=40 \text{ քառ. մէ}$$

Նույնպես, յերբ $a=2,4$ և $h=0,8$ մ, կատանանք՝

$$s=2,4 \cdot 0,8=1,92 \text{ քառ. մ}$$

2. Հաշվել a^2+b^2 , յերբ $a=3$ և $b=5$,

$$\text{Լուծում. } a^2+b^2=3^2+5^2=9+25=34,$$

Խողովանկյունի մակերեսի բանաձեռք՝

$$s=ah$$

Այս բանաձեռքը կարող ենք լուծել այսպիսի ինդիքտիներու

3. Գանել մակերեսը, յերբ տված են հիմքն

ու բարձրությունը.

4. Գանել բարձրությունը, յերբ տված են հիմքն ու մակերեսը.

5. Գանել հիմքը, յերբ տված են բարձրությունն ու մակերեսը:

Լուծում. I. $s=ah$

$$\text{Լուծում. II. } h=\frac{s}{a}$$

$$\text{Լուծում. III. } a=\frac{s}{h}$$

Յանաձեռքի թվական արժուքը կոչվում է այն թիվը, ովորը կատացվի, յեթե բանաձեռքի մեջ տառերի ականք գնենք նրանց համապատասխան թվական արժեքը և ները և կատարենք բանաձեռքը՝ նշված զործողությունները պայմանավորված կարգով:

Յերկրորդ և յերրորդ լուծումը վերածվում է բաժանման միջոցով արտադրիչներից մեջի գոնելուն, յերբ տված են արտադրյալն ու մյուս արտադրիչները:

Սառւզնք այս լուծումները թվերով՝ Դիցուք $a=5$, $h=8$ և $s=40$,

$$\text{I. } 40=5 \cdot 8, \text{ II. } 8=\frac{40}{5}, \text{ III. } 5=\frac{40}{8}$$

Նույն ձեռվ, ոգովի լով գուծությունների որենքներից ու գործողությունների տվյալներից և արդյունքների միջն լեզած առնչություններից, մենք կարող ենք գտնել մեծությունը և ավելի բարդ բանաձեռքից:

§ 6. Խնդրի պայմաններով բանաձեռքի կազմելիք

Խնդրի լուծման համար բանաձեռք կազմելիք ուղակար է պահպանել հետեւյալ կարգը:

I. Կարգավայրմանները:

II. Տալ խնդրի տվյալներին և արդյունքներին առաջարկություններին նշանակումներ:

III. Բարդ խնդիրը վերածել ավելի պարզ խնդիրների:

IV. Վորոշել, թե ինչ գործողությամբ և վճռվում յաւրաքանչյուրը պարզ խնդիրը:

V. Գրի առնել պայմաններն ընդունած տառալին նշանակումներով:

VI. Բանաձեռքը գտնել վորոնելի մեծությունը:

Գիտությունն. Տվյալ մեծությունները սովորաբար նշանակում են լատ նական այբուբենի առաջին տառերով՝ a, b, c, d... իսկ վորոնելի մեծությունները, փերչին տառերով՝ x, y, z, t...

Լուծենք խնդրի պայմաններով բանաձեռք կազմելու վերաբերյալ մի որինակ:

I. Ավտոմոբիլը մեկ որում անցնում է վորոշ ճանապարհ: Մի այլ ավտոմոբիլ մեկ որում անցնում է մի քանի կիլոմետրով պակաս վորոշել յերկրորդ ավտոմոբիլի մեկ որում անցած ճանապարհը:

Լուծում.

II. Առաջին ավտոյի անցած ճանապարհը նշանակենք ատառով (ավագ մեծությունը), իսկ յերկրորդ ավտոյի անցած ճանապարհը՝ x ատառով (վորոնելի մեծությունը):

Առաջին ավտոմոբիլը ե կիլոմետր ավելի յեւ անցնում յերկուրդից (Ե՞ն տված մեծությունն ե),

III. Խնդիրը պարզ է, լուծվում ե մեկ գործողությամբ:

IV. Խնդիրը լուծվում ե գումարումով:

V. Դրենք պայմանը՝ $a=b+x$:

VI. Բանաձեից գտնենք x -ը: Տված ե ա գումարն ու ե գումարելին, պետք ե գտնել չ գումարելին.

$$x=a-b$$

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Թվերի գումարումը յեվ ընթեցումը

§ 1. Ներածություն	5
§ 2. Թվերի բնական շարքը	5
§ 3. Բանավոր հաշիվ և հաշվի աասնորդական սխսեմը	6
§ 4. Թվարկություն	8
§ 5. Հառմեական թվանշաններ	10

II. Զափեր: Զափերի մետրական սխսեմը

§ 1. Մեծությունները յեվ նրանց չափումը	11
§ 2. Զափերի մետրական սխսեմը	11
§ 3. Միավորների նշանակումը	12

III. Ամբողջ թվերի գումարումը յեվ հանումը

§ 1. Գումարում	14
§ 2. Գումարման միջոցով լուծվող խնդիրներ	14
§ 3. Գումարման որենքները	15
§ 4. Խնչպես պետք ե գումարն ավելացնել	17
§ 5. Ամբողջ թվերի գումարումը	18
§ 6. Հանում	19
§ 7. Գումարումը և հանումը փոխադարձարար հակադարձ գործողություններ են	20
§ 8. Հանման գործողությամբ լուծվող խնդիրներ	21
§ 9. Գումարի փոփոխությունը	22
§ 10. Տարբերության փոփոխությունը	24

§ 11. Գումարի հանումը Տարբերության դումարումը	25
հանումը	
§ 12. Ամբողջ թվերի հանումը	27
§ 13. Գումարման ստուգումը	28
§ 14. Հանման ստուգումը	29
§ 15. Հանումը լրացումով	30
§ 16. Թվերի կլորացումը	31

IV. Ամբողջ թվերի բազմապատկումը յեզ բաժանումը

§ 1. Բազմապատկում	33
§ 2. Բազմապատկումով լուծվող խնդիրներ	34
§ 3. Բազմապատկման որենքները	35
§ 4. Բազմապատկում արտադրյալով և արտադրյալի բազմապատկումը	37
§ 5. Գումարի և տարբերության բազմապատկումը	38
§ 6. Արտադրյալի փոփոխությունն արտադրիչների փոփոխության հետևանքով	39
§ 7. Բազմապատկում մեկ իմաստավոր թվանշան ունեցող թվով	40
§ 8. Զերոներով վերջացող թվերի բազմապատկումը	41
§ 9. Բազմանիշ թվերի բազմապատկումը	42
§ 10. Հասկացողություն աստիճանի մասին	43
§ 11. Բաժանում	44
§ 12. Բազմապատկումը և բաժանումը փոխադարձաբար հակադարձ գործողություններ են	45
§ 13. Տարբեր աստիճանի գործողություններ	46
§ 14. Բաժանման գործողությամբ լուծվող խնդիրներ	
§ 15. Բազմապատկման և բաժանման դեպքում տվյալների արդյունքների կախումը	49
§ 16. Բազմապատկման և բաժանման ստուգումը	52
§ 17. Քանորդի փոփոխությունը	52
§ 18. Արտադրյալի և գումարի բաժանումը	53
§ 19. Բաժանում միավորով և զերոներով արտահայտվող թվերի վրա	56
§ 20. Զերոյով վերջացող թվերի բաժանումը	57

§ 21. Բաժանման այն դեպքը, յերբ քանորդը մէանիշ բիզ ե	57
§ 22. Մնացորդով բաժանում	59
§ 23. Մնացորդի փոփոխությունը	61
§ 24. Բաժանման այն դեպքը, երբ քանորդը բազմանիշ բիզ ե	64

V. Գործողությունների կարգը Փակագծեր

§ 1. Միևնույն աստիճանի գործողությունների կարգը	62
§ 2. Տարբեր աստիճանի գործողությունների կարգը	64

VI. Թվերի բաժանականությունը

§ 1. Թվերի բաժանականությունը	64
§ 2. Գումարի հատկությունները, վորոնց վրա հիմնված ե բաժանականության հատկանիշների տարրածումը	65
§ 3. 10-ի, 100-ի, 1000-ի վրա բաժանվող թվերի բաժանականության հատկանիշները	66
§ 4. 2-ի և 5-ի վրա բաժանվող թվերի բաժանականության հատկանիշները	67
§ 5. 4-ի և 25-ի վրա բաժանվող թվերի բաժանականության հատկանիշները	68
§ 6. 8-ի վրա բաժանվող թվերի բաժանականության հատկանիշները	69
§ 7. 9-ի և 2-ի վրա բաժանվող թվերի բաժանականության հատկանիշները	69
§ 8. Պարզ և բարդ թվեր	71
§ 9. Թվերի վերածումը պարզ արտադրիչների	72
§ 10. Ամենամեծ ընդհանուր բաժանարար	74
§ 11. Հասկացողություն ամենափոքր բազմապատիկի մասին	76
§ 12. Ամենափոքր բազմապատիկը գանելու յերեք դեպքերը	77
§ 13. Բարդ թվերի վրա բաժանվող թվերի բաժանականության հատկանիշները	79

VII. Հասարակ կոռուպակների ընդհանուր համեստիչները

§ 1. Միավորի մասերը՝ կոտորակային թվեր	80
§ 2. Կոտորակն իրեն յերկու թվերի հարաբերություն	84
§ 3. Կանոնավոր և անկանոն կոտորակներ՝ ետու թվեր	85

§ 4. Ամբողջ և խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելը	87
§ 5. Անկանոն կոտորակի ամբողջներ անշատելը	88
§ 6. Հավասար համարիչ կամ հայտարար ունեցող կոտորակների մեծությունների բաղդատումը	89
§ 7. Կոտորակի փոփոխությունը համարիչի և հայտարարի փոփոխման հետևանքով	91
§ 8. Կոտորակի գլխավոր հատկությունը	93
§ 9. Կոտորակի կրճատումը	95
§ 10. Կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը	96
§ 11. Կոտորակի մեծության փոփոխմելը համարիչին և հայտարարին միևնույն գումարելիներն ավելացնելու դեպում	98

VIII. Կոտորակների գումարումը յեզ հանումը

§ 1. Նույն հայտարարն ունեցող կոտորակների գումարումը և հանումը	99
§ 2. Տարեր հայտարարներ ունեցող կոտորակների գումարումը և հանումը	100
§ 3. Խառը թվերի գումարումը և հանումը	102

IX. Տված թվերի մասը յեզ տված մասով թիվը գտնելը

§ 1. Տված թվի մասը գտնելը	103
§ 2. Գանել թիվը յերբ տված և նրա մասը՝	105
§ 3. Թիվի գտնելը, յերբ հայտնի յե նրա մասը՝ արտահայտված գործե կոտորակով	106

X. Հասարակ կոտորակների բազմապատկումը

§ 1. Կոտորակի բազմապատկումն ամբողջ թվերով	107
§ 2. Ինչպիսի խնդիրներ են լուծում կոտորակով բազմապատկելիս	109
§ 3. Բաղմապատկում կոտորակով	111

XI. Հասարակ կոտորակների բաժանումը

§ 1. Փոխադարձարար հակոդարձ թվեր	113
§ 2. Բաժանում կոտորակի վրա	114

§ 3. Ամեն տեսակ ամբողջ և կոտորակային թվերի լուծանումը	115
§ 4. Բաժանման մեջոցով լուծանող խնդիրներ	117
§ 5. Ամբողջ թվերի գումարման և բաղմապատկման որինքները վերաբերում են նաև կոտորակային թվերն 119	
§ 6. Կոտորակային թվերով հաշվելու մի ավելի բարեկարգնակ	116

XII. Տասնորդական կօսուակիներ

§ 1. Տասնորդական կոտորակների կարգանուր հայտարարի բերելը	120
§ 2. Տասնորդական կոտորակների հասարակ կոտորակ	123
§ 3. Տասնորդական կոտորակների մեծության բաղդատումը և ատանորդական կոտորակներով արտահայտված թվերի կլորացումը	123
§ 4. Տասնորդական կոտորակներն ընդհանուր հայտարարի բերելը և տասնորդական կոտորակների կրճատումը	125
§ 5. Տասնորդական կոտորակների գումարումը և հանումը	127
§ 6. Տասնորդական կոտորակների բազմապատկումը	128
§ 7. Տասնորդական կոտորակների բաժանումը	132

XIII. Միատեղ գարծողություններ հասարակ յեզ տասնորդական կոտորակներով

§ 1. Տասնորդական կոտորակը հասարակ կոտորակ դարձնելը	135
§ 2. Հասարակ կոտորակը տասնորդական դարձնելը	135
§ 3. Անվերջ տասնորդական կոտորակների մասին	136
§ 4. Միատեղ հաշվումներ հասարակ ու տասնորդական կոտորակներով	141

XIV. Հարաբերություններ յեզ նամեմատություններ

§ 1. Թվերի բաղդատման յերկու յեղանակ	143
§ 2. Քանորդական հարաբերություն	145
§ 3. Քանորդական հարաբերության գլխավոր հատկությունները	146
§ 4. Հարաբերության անհայտ անդամը գտնելը	147

§ 5.	Կրծատումներ՝ հարաբերությունները հաշվելիս և կոռապրակային թվերի հարաբերության փոխարինումը ամբողջ թվերի հարաբերությամբ	148
§ 6.	Հասկացողություն համեմատության մասին	149
§ 7.	Համեմատության հիմնական հատկությունը	150
§ 8.	Տված թվերից համեմատություն կաղմելը	151
§ 9.	Համեմատության անդամների տեղերը փոխելը	152
§ 10.	Համեմատության անհայտ անդամը գտնելը	154
§ 11.	Չորրորդ համեմատականը գտնելը	155

XV. Ուղիղ յեվ հակադարձ համեմատականություն:

Հասկացողություն միջին թվաբանականի մասին

§ 1.	Հաստատուն և փոփոխական մեծությունների մասին	156
§ 2.	Ռեղիղ համեմատական մեծություններ	157
§ 3.	Համեմատությունների կիրառումը խնդիրներ լուծելիս	161
§ 4.	Հակաղարձ համեմատական մեծություններ	162
§ 5.	Խնդիրների լուծումը միավորի վերածելու ինդանական	165
§ 6.	Համեմատական բաժանում	167
§ 7.	Մի քանի թվերի միջին թվաբանականը	172

XVI. Տնկումներ

§ 1.	Հասկացողություն տոկոսների մասին	175
§ 2.	Կոտորակային արտահայտության փոխարինումը տոկոսային արտահայտությամբ	175
§ 3.	Թվի տոկոսը գտնելը	176
§ 4.	Թիվն իր տոկոսներով արտահայտված մասի ոգնությամբ գտնելը	177
§ 5.	Յերկու թվերի հարաբերությունը՝ արտահայտված տոկոսներով	179
§ 6.	Դրամական հաշվարկների վերաբերյալ խնդիրներ	181
§ 7.	Տոկոսները հաշվելու գրաֆիկը	183

XVII. Բանահեվեր յեվ նաև վումներ

§ 1.	Բանաձներ (Փորմուներ)	184
§ 2.	Տառային նշանակումներ: Գործողությունների կարգը Փակագծեր	187

§ 3.	Գործակից: Աստիճան	•	•	•	•	•
§ 4.	Ամենագլխավոր բանաձները	•	•	•	•	•
§ 5.	Բանաձների թվական արժեքները	•	•	•	•	•
§ 6.	Բանաձնով վորես մեծություն վորոշելը, կախված մյուս մեծություններից	•	•	•	•	•
§ 7.	Խնդրի պայմաններով բանաձև կազմելը	•	•	•	•	•

Գառն Խոյքաղիր՝ Ա. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
Տեհ. Խոյքաղիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ Ա. ԱՐՁԱԿԱՆՅԱՆ

Հուստ. 4041. դլ. լիտադոր. Պ. 4104 պատով. 408. տիրաժ 50,000

Հանձնված և արտադրության 10 մարտի, 1937 թ.

Ստորադրված և տպելու 20 ապրիլի, 1937 թ.

Թուղթ 62×94 Տպագրական 12¹/₂ մամուլ մեկ ժամուլում 36480 նիշ
Հեղինակին 11¹/₄ ժամուլ.

Պետրաքան, Սերեվան, Լեռինի 65

-50-

ՀՀ Ազգային գրադարան



NL0987299

ԳԻՒԸ 1 Ր. 40 Կ.

854

11

28671

И. Попов

Арифметика

Учебник для V и VI кл. средней школы

Гиз Арм. ССР, Ереван, 1987 г.